

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

- ◆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
- ◆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ◆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ◆ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22
Ա 791

*Տպագրության են երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը:*

Խմբագիր՝ Լ. Թեյյան (բան. գիտ. թեկ., դոցենտ)

Գրախոսներ՝ Ա. Տեր-Մինասյան (բան. գիտ. թեկ., դոցենտ)
Ա. Սարգսյան (բան. գիտ. թեկ., դոցենտ)
Զ. Աղաջանյան (բան. գիտ. թեկ., դոցենտ)

Յու. Ս. Ավետիսյան

Ա 791 Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ: Հիմունքներ, զուգաձևություններ, տարակարծություններ, կետադրություն: -Եր., 2019, 178 էջ:

Գրքում ներկայացվում են հայերենի կետադրության հիմունքները, քննարկվում են արևելահայերենի կետադրության վիճելի հարցերը, առաջարկվում են կետադրական նորմեր՝ առանձին դեպքերում տարբերակների ազատ ընտրությամբ:

Գիրքը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր հաճախ են գրավոր հաղորդակցվում և հետաքրքրված են հայերենի կետադրությամբ:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8084-2355-8

© ԵՊՀ հրատ., 2019

© Ավետիսյան Յու. Ս., 2019

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կետադրության ուսումնասիրությունը և կանոնարկումը հազիվ թե կարելի է բանասիրական գիտությունների առաջնային խնդիրներից մեկը համարել, սակայն անկասկած է, որ հարցի քննությունը գործնական կարևոր նշանակություն ունի գրական լեզվի մշակման ու կանոնարկման տեսանկյունից:

Գրավոր խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակնհայտորեն խզում է առաջացել սահմանված կետադրական կանոնների (կետադրության տեսության) և դրանց գործնական կիրառության միջև: Եվ հարցի քննարկումը արդիական է դառնում այնքանով, որքանով ընդհանուր մոտեցումներ սահմանելու դեպքում հնարավորություն կստեղծվի **նախ**՝ հրաժարվելու մի շարք անհարկի զուգաձևություններից, և **հետո**՝ հստակեցնելու որոշ կանոններ՝ լեզվակիրառողի համար ավելի դյուրին դարձնելով դրանց յուրացումը և գործածությունը:

Միրով կընդունենք աշխատանքի վերաբերյալ օգտակար դիտողություններն ու առաջարկները:

ԳԼՈՒԽ 1.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Կետադրության հարցերը քննարկությունների առարկա են դարձել՝ վաղ միջնադարից սկսած: Փորձեր են արվել ճշգրտելու մասնավորապես տրոհության նշանների գործածության սկզբունքները:

Գրական հայերենի նորմավորան շրջանում մասամբ կարգավորվեցին նաև կետադրության կանոնները: Արևելահայերենում դա կատարվեց ավելի կայուն սկզբունքների հիման վրա: Արևմտահայերենը որդեգրեց կետադրական նշանների գործածության ավելի ազատ մոտեցումներ, որոնք հիմնականում պահպանվեցին նաև արևմտահայերենի հետագա զարգացման ընթացքում: Արևելահայերենի նորմավորման ու մշակման հետագա ընթացքում կետադրության հարցերը մշտապես եղել են քննարկումների առարկա: Կանոնական քերականության գրքերում, դպրոցական և բուհական դասագրքերում ու ձեռնարկներում որոշակի հարցեր, կետադրական նշանների գործածության ինչ-ինչ յուրահատկություններ առիթ են տվել տարակարծությունների: Մի շարք դեպքերում էլ քննարկումների արդյունքում թե լռելյայն ընդունվել են զուգահեռ տարբերակներ:

Նոր ժամանակներում կետադրությանը նվիրված առաջին քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրություն-ուղեցույցը

Ա. Ղարիբջանի և **Գ. Պարիսի** հեղինակած աշխատանքն էր¹, որը փորձում էր որոշակի հանձնարարականներով և առաջարկներով կանոնավորել հայերենի կետադրությունը: Սակայն այդ փորձը ըստ էության չճանայեց իր նպատակին, նախ՝ որովհետև չհանրայնացվեց, չդարձավ մեծ լսարանին մատչելի, երկրորդ՝ զգալի էր ռուսերենի ազդեցությունը, և երրորդ՝ ուղեցույցը մասամբ է միայն անդրադառնում վիճելի գործածություններին և գուգաձևություններին:

Երկրորդ աշխատանքը, որը դպրոցական դասագրքերի սահմաններից դուրս քննության առարկա է դարձրել ժամանակակից հայերենի կետադրության հարցերը, **Գ. Գարեգինյանի** բուհական դասագիրքն է²: Սակայն և՛ շարահյուսական առանձին կառույցների առիթով, և՛ ընդհանրացված վերնագրի տակ ներկայացված կանոնները, նախ՝ միշտ չէ, որ հետևողականորեն են մատուցվում (դա երևում է նաև հեղինակային շարադրանքում տեղ գտած անհարկի տրոհումներից. ստորակետով առանձնացված են, օրինակ, պատճառի պարագան, որոշիչ-որոշյալ կապակցությունը և այլն), և երկրորդ՝ կետադրության նշանների գործածության շատ ու շատ մասնավոր դեպքեր առհասարակ չեն քննարկվում. սահմանված կանոններն առավելապես ընդհանուր-նկարագրական բնույթի են³:

¹ Տե՛ս **Ղարիբջան Ա., Պարիս Գ.**, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Եր., 1957:

² Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1984:

³ Նույնը կարելի է ասել հայերենի բուհական մյուս դասագրքերի մասին՝ **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986: **Գյուլբուդաղյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984: **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. պարզ նախադասություն, Եր., 1987 և այլն: Նորմատիվ քերականության առանձին ձեռնարկներում նույնիսկ կետադրություն պահանջող կառույցների և իրողութ-

Նույն հեղինակի ծավալուն հոդվածը նվիրված է կետադրության վիճելի դեպքերից միայն մեկին՝ այն շարահյուսական կառույցների կետադրությանը, որոնց բաղադրիչները կապվում են մենադիր **և, ու, կամ** շաղկապներով⁴: Ըստ որում, հոդվածում տրվում են հանձնարարականներ, որոնց վերաբերյալ մասնագետների կարծիքը միանշանակ չէ (այդ մասին կխոսվի իր տեղում):

Գ. Ջահուկյանի հոդվածներից մեկը նվիրված է հայերենի կետադրության պատմական հիմունքների քննությանը⁵: Հոդվածում զուգահեռ քննարկվում են նաև կետադրության տեսական սկզբունքները՝ տրամաբանական-իմաստային, շարահյուսական և հնչերանգային: Կետադրական նշանների գործածության կոնկրետ դեպքերի և դրանց մասին եղած տարակարծությունների վերաբերյալ հոդվածում անդրադարձներ գրեթե չկան:

յունների քննարկումներում գրեթե անդրադարձ չի կատարվում կետադրական նշաններին: Օրինակ՝ իր բուհական ձեռնարկում **Մ. Ասատրյանը**, անդրադառնալով երկրորդական անդամների (հատկացուցիչ, բացահայտիչ, որոշիչ, հիմունքի, նպատակի պարագաներ և այլն) շարահյուսական նկարագրությանը, չի քննարկում դրանց կետադրության հարցը: Բերված օրինակներից ենթադրվում է, որ հեղինակը լռելյայն ընդունում է բնագրերում արտահայտված կետադրական զուգաձևությունները, ինչպես՝ «Հայրս գնաց բակատեղ կոչված հանդը՝ **տախտակ քաշելու**»: /«Արահետից դուրս եկան, մտան թփուտները **մի քիչ հանգստանալու**», «**Ըստ մեր նախնական պայմանի** ձկների փորը տվեցի Բողարին»: /«**Ըստ թուրքական սովորության**՝ երևելիները ծալապատիկ նստեցին գորգերով պատած հատակի վրա» (**Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, էջ 264-267):

⁴ Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, № 2, էջ 159-173:

⁵ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր», 1990, № 7(75):

Առաջին համեմատաբար ամփոփ ուսումնասիրությունը **Ս. Աբրահամյանի** ուսումնական ձեռնարկն է՝ Հ. Բարսեղյանի խմբագրությամբ⁶: Այստեղ ներկայացվում են արդի հայերենի կետադրության ընդհանուր օրինաչափությունները, որոնց մի զգալի մասը զետեղված է եղել հեղինակի դպրոցական դասագրքում և տարիների «փորձառություն» անցել, իսկ մնացած մասը սահմանված է գրավոր խոսքում արտացոլված հիմնական օրինաչափությունների հիման վրա⁷: Ձեռնարկում, այնուամենայնիվ, չեն ներկայացվում առանձին օրինաչափություններ և կետադրության նշանների վերաբերյալ, այսպես կոչված, գործնական մանրամասնություններ, ինչպես, օրինակ՝ չակերտների գործածության խնդիրը մեջբերվող ուղղակի խոսքի դեպքում, երբ վերջինս միայնակ խոսք է և չի ենթադրում երկխոսություն: Կամ՝ խիստ համառոտ են ներկայացված հարցական նշանի գործածության կանոնները: Կան նաև կետադրության ձեռնարկներում և դասագրքերում զետեղված ընդհանուր նորմերից փոքր-ինչ տարբեր կանոններ ու մոտեցումներ, ինչպես, օրինակ՝ մեկնաբանությունները հրամայական բայաձևի և կրկնադիր համադասական շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջի վերաբերյալ: Այնուամենայնիվ, սա ձեռնարկ է, որը տարիներ շարունակ հաջողությամբ ծառայել է լեզվակիրառողին՝ ուսուցիչներ, ուսանողներ, հրատարակչությունների աշխատողներ, բոլոր նրանց, ովքեր ցանկացել են տիրապետել հայերենի կետադրության ընդհանուր օրինաչափություններին:

Հայերենի կետադրությանը նվիրված ամբողջական և ամփոփ աշխատանքներ են **Ա. Մարգարյանի** կետադրական

⁶ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Հայերենի կետադրություն, Եր., 2002:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 2:

ուղեցույցը և **Հ. Զաքարյանի** կետադրական բառարանը⁸: Դրանք երկուսն էլ ունեցել են մեկից ավելի հրատարակություններ՝ յուրաքանչյուր անգամ մշակվելով ու համալրվելով նոր մեկնաբանություններով:

Ա. Սարգսյանը հակված է առավել կարծր սկզբունքների և այդ ոլորտի առավել խիստ նորմերի սահմանման: Այդ իսկ պատճառով առանձին իրողությունների վերաբերյալ նրա ուղեցույցում սահմանվում են խիստ պայմանադրական կանոններ, որոնք երբեմն անհատական մոտեցման արգասիք են:

Հ. Զաքարյանը կողմ չէ այդ նույն սկզբունքների կարծրացման և փորձ է արել ստեղծելու հայերենի կետադրության նկարագրության ու կանոնների այնպիսի մի տեղեկատու, որը հնարավորություն է տալիս ծանոթանալու նաև գործող գուգաձևություններին և տարընթերցումներին՝ դուռ բացելով նաև լեզվակիրառողի նախընտրությունների առաջ:

Արևելահայերենի կետադրությանը նվիրված համակողմանի աշխատանք է նաև **Սահակյանների** հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն» ուսումնասօժանդակ ձեռնարկը (Եր., 2010), որը կառուցվածքային, մասամբ նաև կանոնները սահմանելու և մոտեցումները ձևակերպելու առումով վերարտադրում է Ա. Սարգսյանի աշխատասիրության դրույթները. սկզբնապես կանոնները բացատրվում և սահմանվում են նախադասության կառուցվածքային տիպերի տեսանկյունից (պարզ և բարդ նախադասությունների կետադրությունը), ապա դրանք ներկա-

⁸ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայերենի կետադրությունը (երկրորդ՝ վերամշակված հրատարակություն), Եր., 2012: **Զաքարյան Հ.**, Կետադրական բառարան (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն), Եր., 2013:

յացվում են ըստ կետադրական նշանների տեսակների (տրոհության, առոգանության և բացահայտության նշաններ): Հեղինակները, իրենց վկայությամբ, փորձել են հանգամանորեն ներկայացնել արևելահայերենում գործող կետադրության հիմնական կանոնները. ի մի են բերվել, համադրվել և զուգադրվել մասնագիտական գրականության մեջ, այդ թվում նաև դասագրքերում ու ձեռնարկներում արտահայտված կարծիքներն ու դիտարկումները: Աշխատանքում ներկայացված են նաև գործնական վարժություններ և համր բնագրեր: Կետադրության կանոնների սահմանման և ուսուցման առումով առաջնային է համարվել «շարահյուսության դերը», և իհարկե չեն անտեսվել իմաստային և հնչերանգային գործոնները⁹: Ամփոփ շարադրանք լինելով հանդերձ ձեռնարկը հասկանալի պատճառներով հանգամանորեն չի անդրադարձել կետադրական նշանների առանձին գործածությունների վերաբերյալ տարակարծություններին, իսկ որոշ դեպքերում էլ ներկայացվել են ընդունված տեսակետներից շեղվող և կամ, մեր տպավորությամբ, խստորոշ կանոններ:

Կետադրության հարցերը քննարկման առարկա են դարձել նաև այլ աշխատանքներում¹⁰: Դրանք, սակայն, կա՛մ նվիրված են մասնավոր խնդիրների քննությանը, կա՛մ առավել

⁹ Տե՛ս **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Եր., 2010:

¹⁰ Տե՛ս **Մխիթարյան Հ.**, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Եր., 1972: **Բաղդասարյան Է.**, Հայերենի կետադրությունը (թեկն. ատեն.), Եր., 1972: **Թոխմախյան Ռ.**, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Եր., 1983: **Դարբինյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., 1990: **Կատվայան Վ.**, Ուղղագրական և կետադրական ուղեցույց, Եր., 1992: **Դավթյան Յու.**, Հայերենի կետադրության ինքնուսույց, Եր., 1995: **Թորոսյան Ա.**, Հայերենի կետադրությունը (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Եր., 2004 և այլն:

լաբար կրկնում են ներկայացված մասնագիտական գրականության մեջ քննարկված նյութը: Միօրինակ չէ վերաբերմունքը առանձին գուգաձևությունների և կետադրական մի շարք իրողությունների վերաբերմամբ:

Նախորդ դարի 90-ականներին Գ. Գարեգինյանը, քննարկելով հարցը, խիստ կարևոր ու հրատապ խնդիր էր համարում միասնական ու կայուն կետադրական համակարգ ունենալը, և դրա չգոյության հիմնական պատճառ էր նկատում տեսական և գործնական քննարկումների պակասը: «Այս վիճակը հիմնականում արդյունք է այն բանի,- գրում է նա,- որ հայ քերականագիտության մեջ դեռևս բացակայում է որևէ քիչ թե շատ լուրջ ուսումնասիրություն՝ նվիրված ժամանակակից հայերենի կետադրության տեսական և գործնական խնդիրների քննարկմանն ու մշակմանը: Փաստորեն կետադրության, հաճախ խիստ բարդ ու խրթին, հարցերը այսօր ըստ էության կանոնավորվում են սոսկ դպրոցական շարահյուսության դասագրքերում ցրված կանոններով ու բացատրություններով, որոնք, հասկանալի պատճառներով, արտացոլում են սոսկ կետադրական նշանների հիմնական կիրառությունները, այն էլ ամենահիմնական գծերով միայն: Մինչդեռ բավական մեծ թիվ են կազմում այն շարահյուսական կառույցները, որոնց բաղադրիչների կետադրությունը կարգավորելու համար բացակայում են համապատասխան կանոններ ու հանձնարարականներ, առանց որոնց անհնարին է ժամանակակից հայերենի կետադրության կոռ ու միասնական համակարգ ստեղծել»¹¹:

¹¹ Գարեգինյան Գ., Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, № 2, էջ 159:

1990-ականներին հաջորդած տասնամյակներին, ինչպես տեսանք, հարցի վերաբերյալ ստեղծվել է հարուստ գրականություն, հայերենի կետադրության շատ սկզբունքներ մշակվել ու կանոնարկվել են: Սակայն շատ խնդիրներ էլ տակավին մնում են չլուծված: Առանձին կանոնների վերաբերյալ կան էական տարակարծություններ և չհամընկնող հանձնարարականներ: Դրանց առկայությունը մասամբ արդյունք է անհատական մոտեցման և մեկնաբանությունների, մասամբ էլ որոշ կանոնների ոչ բավարար մշակվածության, ինչպես նաև գրական գրավոր լեզվում գործող օրինաչափությունների անտեսման, որը իր հերթին խզում է առաջ բերում կետադրության տեսության և գործնական կիրառության միջև: Քննարկումները չեն դադարում: Քանի որ նշված խզումը շարունակվում է:

Կետադրության օրինաչափությունները սահմանելու համար ընդունված է առանձնացնել երեք հիմնական գործոն կամ հիմունք՝ ա) **տրամաբանական-իմաստային**. կետադրությունը թելադրվում է շարադրանքի բովանդակությամբ՝ մտքերը ճշգրիտ արտահայտելու հանգամանքով, բ) **շարահյուսական**. կետադրությունը թելադրվում է շարահյուսական հարաբերություններով, նախադասության կառուցվածքով, գ) **հնչերանգային**. կետադրությունը թելադրվում է բանավոր խոսքի հնչերանգային առանձնահատկություններով, ծառայում է բանավոր խոսքի հնչերանգային յուրահատկությունների դրսևորմանը գրավոր խոսքում¹²:

Գ. Ջահուկյանը որոշ վերապահությամբ է անդրադառնում այս կարծիքին՝ նկատելով, որ ներկայացվող երեք հայեցակետերը ավելի ճիշտ կլինի դնել ոչ թե կողք կողքի, այլ

¹² Տե՛ս Բозентаľ Д., Теленкова М., Справочник лингвистических терминов, М., 1972:

դիտարկել ստորադասական հարաբերության մեջ. «...Նախադասության հնչերանգային կառուցվածքը,- գրում է նա,- կապված է նրա շարահյուսական կառուցվածքի և վերջին հաշվով արտահայտվող բովանդակության (մտքերի, կամքի, զգացմունքի) բնույթի հետ»¹³: Այլ կերպ ասած՝ Ջահուկյանի տեսակետով՝ տեքստի բովանդակային բաղադրիչները՝ միտքը, կամքը, զգացմունքն են ի վերջո որոշում կետադրական այս կամ այն նշանի (չ)գործածությունը, և մյուս հիմունքները ըստ էության ստորադասվում են այս հիմնական սկզբունքին:

Այս փոխալայմանավորվածությունը համոզիչ է, սակայն բոլոր պարագաներում չէ, որ հստակ գործում է, իսկ առանձին դեպքերում պարզապես դժվար է բովանդակային սկզբունքի կամ պատճառաբանվածության անալայման արձանագրումը: Օրինակ՝ «Մարերից իջնող ջրերը վարարում են կեսգիշերին աղմկում խոր ձորերում» նախադասությունը կարող է կետադրվել երկու տարբերակով. երկու դեպքում էլ կետադրությունը հաստատապես պատճառաբանվում է երեք հիմունքներով՝ 1. «Մարերից իջնող ջրերը վարարում են կեսգիշերին, աղմկում խոր ձորերում», և 2. «Մարերից իջնող ջրերը վարարում են, կեսգիշերին աղմկում խոր ձորերում». տրամաբանական-իմաստային հիմունքի առկայությունն ակնհայտ է (մի դեպքում՝ ջրերը վարարում են կեսգիշերին, մյուս դեպքում՝ կեսգիշերին աղմկում են), և դա պայմանավորում է նաև շարահյուսական որոշակի կառուցվածք, որն էլ իր հերթին ենթադրում է հնչերանգով որոշակիորեն տարբերակվող երկու կառուցվածքներ՝ դադար, որը գրավոր խոսքում արտահայտված է ստորակետի այս կամ այն դիրքով:

¹³ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր», 1990, № 7(75), էջ 76:

Կամ՝ խոսքում շարահյուսական տրոհված կառույցները անպայման պահանջում են հնչերանգային համապատասխան «վերաբերմունք» և ըստ այդմ՝ նաև համապատասխան կետադրություն. ինչպես «Գիտեմ, վերադառնալու է» և «Գիտեմ՝ վերադառնալու է»: «Մի՛ գնա, ձա՛յն տուր, թող գա» և «Մի գնա ձա՛յն տուր, թող գա»: Բայց հակառակը չենք կարող պնդել. հնչերանգային դադարը կամ ելևէջումը միշտ չէ, որ կարող է ունենալ կետադրական «արտահայտություն», օրինակ՝ «Գործարքը չկայացավ (դադար) կողմերի անհամաձայնության պատճառով», «Հեռավոր իններորդ դարում (դադար) Բագրատունյաց շքեղակառույց Անի մայրաքաղաքում (դադար) մի ճարտարապետ էր ապրում»: Համակատար դերբայով ձևավորված դերբայական դարձվածը արտասանվում է զգալի դադարով, սակայն չի տրոհվում. «Իր կյանքի անհաջողությունների մասին ամենուր և ամեն տեղ պատմելիս (դադար) նա սովորաբար մոռանում էր հիշատակել իր մեղքի բաժինը»¹⁴:

Կամ՝ կետադրության այս կամ այն նշանի գործածությունը կամ առկայությունը կարող է պայմանավորված չլինել շարահյուսական կառույցի յուրահատկություններով: Օրինակ՝ վերաբերականների տրոհության դեպքում կետադրություն դնել կամ չդնելը. «Մենք իհարկե մեկնելու ենք»: / «Մենք, իհարկե, մեկնելու ենք», կա՛մ՝ կոչականի վրա ըստ հնչերանգի շեշտի կամ բացականչական նշանի գործածու-

¹⁴ Նույն կառույցում եթե համակատարը փոխում ենք անորոշ դերբայի գործիական հոլովով, որը հանդես է գալիս շարահյուսական նույն գործառնությունով (ժամանակի պարագա), ապա տրոհվում է. «Ձայներ լսելիս լարեց լսողությունը»: / «Ձայներ լսելով՝ լարեց լսողությունը»: Երկու դեպքում էլ առկա է արտասանական զգալի դադար: Ըստ որում, այս հանգամանքը հաշվի առնելով՝ որոշ լեզվաբաններ առաջարկում են տրոհել նաև համակատարով կառույցները: Մեր կարծիքով՝ դա կարող է կետադրական նշաններով անհարկի ծանրաբեռնել խոսքը:

թյունը. «Վահան՛, ես սպասում եմ քեզ»: / «Վահան՛, ես սպասում եմ քեզ»: Թեև այս երկու դեպքում ակնհայտ է տրամաբանական-իմաստային և հնչերանգային հիմունքների ազդեցությունը:

Եվ վերջապես, առանձին դեպքերում կարծես թե չեզոքանում է նաև տրամաբանական-իմաստային հիմունքի դերը: Այսպես՝ վերջադաս կարճ ուրիշի ուղղակի խոսքը կետադրվում է երկու տարբերակով՝ առանց չակերտների կամ միջակետով և նոր տողից գծիկով, ինչպես՝

1) *Պատասխանեց՝ կգամ:*

2) *Պատասխանեց.*

– *Կգամ:*

Հազիվ թե կարելի է պնդել, որ կետադրական այս զուգաձևությունը հենվում է տրամաբանական-իմաստային հիմունքի վրա:

Կամ՝ հետադաս նպատակի պարագա կապային կառույցները (չ)տրոհելը որքանո՞վ է պատճառաբանվում իմաստային-տրամաբանական հիմունքով. «Շահագրգիռ կողմերը շտապ հավաքվեցին գրասենյակում(՝) հարցը քննարկելու համար»:

Եվ կամ՝ մեր կարծիքով՝ տրամաբանական հիմնավորում չունի նաև անորոշ դերբայի գործիական հոլովով և համակատարով ժամանակի պարագա դերբայական դարձվածների տարբերակված կետադրությունը, հմմտ. *Ինձ տեսնելիս մի պահ շփոթվեց: / Ինձ տեսնելով՝ մի պահ շփոթվեց:*

Բացառման, բացասման հարաբերությունն արտահայտող **բացի, զատ, առանց** կապերով կապակցությունների՝ առաջադաս կամ վերջադաս դիրքում ստորակետով կամ բուրժով տրոհումը չի հիմնավորվում իմաստային-տրամաբանա-

կան հիմունքով և առավելապես պայմանավորվածության խնդիր է:

Ստորակետի գործածությունը միշտ չէ, որ իմաստային-տրամաբանական հիմքեր ունի նաև այն դեպքում, երբ բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցված են **և**, **ու**, **կամ** շաղկապներով և ունեն տարբեր ենթականեր: Այսպես՝ եթե *Գլուխը դանդաղ խոնարհվեց գրասեղանին, և ննջեց: Մտավ գետը, ջուրը հասավ գոտկատեղը, և սարսուց* նախադասություններում ստորակետը կատարում է, այսպես կոչված, իմաստատարբերակիչ որոշակի դեր (*Գլուխը խոնարհվեց, և նա ննջեց: Մտավ գետը, ջուրը հասավ գոտկատեղը, և նա սարսուց*), ապա շարահյուսական նմանատիպ բազմաթիվ կառույցներում ստորակետի գործածությունը իմաստային որևէ տարբերակիչ դերակատարություն չունի, պարզապես արձանագրում է ենթակայի փոփոխությունը, որը ինքնին ակնհայտ է, ինչպես՝ *Բարևեց, և ոչ ոք նրան չարձագանքեց: / Բարևեց և նստեց իր տեղում: Քամին անսպասելի դադարեց, և հորդառատ անձրև տեղաց: / Քամին անսպասելի դադարեց և սսես երբեք էլ չէր եղել:* Ստորակետի գործածության կամ չգործածության հարցը այս դեպքում դարձյալ լուծվում է պայմանավորվածությամբ կամ ավանդույթի ուժով:

Կարելի է նշել նաև այլ դեպքեր, երբ կետադրական նշանի գործածությունը չունի տրամաբանական պատճառաբանվածություն, ինչպես, օրինակ՝ ուրիշի մեջբերվող խոսքը (բարձրաձայն ասված), որը երկխոսություն չէ, չակերտներում կամ նոր տողից գրելը, խոսքի մեջ հիշատակվող օտարաբանության, լեզվական այս կամ այն միավորի և այլ արտահայտությունների առանձնացումը մի քանի տարբերակներով (ընդգծումով, թավ տառերով, գլխատառերով, չակերտներով և այլն), վերջադաս նպատակի և պատճառի պարագաների

տարբերակված (առաջինը կարող է տրոհվել, երկրորդը՝ ոչ) կետադրությունը, մեկնական **օրինակ** բառից հետո միջակետի կամ բուրթի գուգահեռ գործածությունը և այլն:

Վերն ասվածը, կարծում ենք, հիմք է տալիս եզրակացնելու, որ կետադրությունը պայմանավորող նշված երեք հիմունքների կամ հայեցակետերի կողք կողքի գոյությունը ունի իրավունք և պատճառաբանված է այնքանով, որքանով կան կետադրական նշանների գործածության որոշակի նորմեր, որոնք, այնուամենայնիվ, պայմանավորված են սահմանված հիմունքներից մեկով կամ մյուսով, իսկ թե որքանով են հիմունքները ստորադասվում միմյանց, դա քննարկման առարկա պիտի դառնա քերականական այն կառույցների պարագայում, որոնցում դա հստակ դրսևորումներ ունի և պայմանավորում է կետադրությունը:

Մասնագիտական գրականության մեջ մեզանում հակում կա կետադրության կանոնները սահմանելիս առաջնորդվել առավելապես շարահյուսական հիմունքով և կանոնները ձևակերպել՝ հենվելով շարահյուսական օրենքների ու օրինաչափությունների վրա: Եվ հետևաբար, ինչպես իրավացիորեն նկատվել է, հայերենի կետադրությանը լավ տիրապետելու համար լեզվակիրառողից պահանջվում է այդ օրենքների ու օրինաչափությունների անսխալ իմացություն: Ավելին, կետադրության առանձին հանձնարարականներում ավելի ու ավելի են մասնավորեցնում այդ օրենքները կամ դրանցից ածանցվող բացառությունները այն աստիճան, որ երբեմն նույնիսկ մասնագիտական կրթություն ունեցողների համար լուրջ դժվարություններ են ծագում անսխալ կետադրությամբ խոսք շարադրելիս: Իսկ սովորական՝ շարքային լեզվակիրառողի համար հայերենի կետադրությանը բավարար չափով տիրապետելը դառնում է դժվարին գործ: Եվ ուստի բնականոն հարց է ծագում. հարկ կա՞

արդյոք այդպես և այդչափով ուռճացնելու հայերենի կետադրական կանոնների գամբյուղը, եթե գործադրվող կետադրությունը չի խաթարում խոսքի բովանդակային կառույցը և հայերենի շարահյուսական նորմերը:

Արևմտահայերենը ունի կետադրական նշանների գործածության անհամեմատ ազատ համակարգ, բայց դրանով հանդերձ՝ մեր լեզվի այդ տարբերակով գրավոր հաղորդակցումը փոխադարձ ըմբռնման դույզն դժվարություն չի ստեղծում: «Կետադրական կանոնների մշակման ժամանակ, գրում է Գ. Ջահուկյանը,՝ անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվում, ժամանակակից որոշ լեզվաբանների տերմինաբանությամբ ասած, «խոսողի քերականության» և «լսողի քերականության» տարբերությունները: Եվ իրոք. ում շահերից է ելնում հայերենի կետադրության արդի համակարգը՝ գրողի՞, թե՞ ընթերցողի, ուզում է հեշտացնել գրողի՞, թե՞ ընթերցողի գործը: Մեր կետադրության կանոնները մշակողները կարծեք թե այս հարցի մասին ընդհանրապես չեն էլ մտածում: Եթե նկատի ունենանք, որ մի կողմից՝ խիստ կանոնարկված և մանրամասնված կետադրությունը դժվարացնում է գրողի գործը և որոշ չափով կաշկանդում ընթերցողին, գեղարվեստական երկի գրման, ընկալման և վերարտադրության ժամանակ թուլացնում էրևակայության և ստեղծագործության դերը, մյուս կողմից՝ պակասավոր կետադրությունը դժվարացնում է ընթերցողի կողմից տեքստի ճիշտ ընկալումը, ապա կհանգենք այն պարզ եզրակացությանը, որ պետք է ընտրել ոսկե միջինը, թույլ տալ կետադրության որոշ ազատություն, միջոցների ընտրության հնարավորություն»¹⁵: Կետադրության կանոններից օգտվողներին հաճախ չեն հետաքրքրում կետադրական կանոնների տեսական հիմնավորումներն ու մանրամասնությունները:

¹⁵ **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 77:

Դրանք կիրառողի համար պետք է լինեն հնարավորին չափով մատչելի¹⁶:

Վերջապես, հայերենի կետադրության կանոնները մշակելիս հաճախ օրենսդիրները փորձում են ելակետ ունենալ գեղարվեստական գրականության լեզուն, երբեմն նույնիսկ իբրև վկայություն են բերվում միայն հայ դասական գեղարվեստական գրականության կետադրական փաստերը, կամ համոզականության հիմնական գրավական է համարվում հղումը գեղարվեստական գականության փաստերին: Կետադրությունը նվիրված ձեռնարկներից մեկի ծանուցման մեջ կարդում ենք. «Յուրաքանչյուր կանոն փաստարկված է հայ դասական ու ժամանակակից գրականությունից և դասագրքերից բերված օրինակներով»¹⁷:

Հայերենի կետադրության առանձին օրենսդիրներ ակնհայտորեն չեն կարողացել հաղթահարել դասական գեղարվեստական գրականության կետադրական փաստերի ուժեղ ազդեցությունները և անհրաժեշտ հիմնավորումներ չգտնելով՝ պարզապես մեջբերումներ են կատարում գեղարվեստական գրականությունից՝ կետադրական նորմերից կատարված շեղումները իբրև նորմեր ներկայացնելու համար: Հայտնի է, սակայն, որ գեղարվեստական լեզուն խստորեն նորմավորված լեզու չէ և չի էլ կարող այդպիսին լինել. կետադրությունը գրողի համար նախ և առաջ բովանդակային-արտահայտչական միջոց է գեղարվեստական կատարելության հասնելու ճանապարհին: Իհարկե, գրական լեզվի կետադրության «օրենսդիրները» չեն կարող շրջանցել տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական լեզվի փաստերը, բայց միննույն ժամանակ դրանք չեն կարող «արժա-

¹⁶ Տե՛ս Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 7:

¹⁷ Դարբինյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., 1990, էջ 2:

նահավատ» և միակ աղբյուր դառնալ կետադրության նորմերը սահմանելիս: Հակառակ դեպքում խզումը կանոնական կետադրությունից և բանավոր կենդանի լեզվի արտասանական նորմերից անխուսափելի է:

Այսպես, օրինակ: Կետադրական ուղեցույցներում կամ ձեռնարկներում հաճախ այս կամ այն առիթով գեղարվեստական գրականությունից բերվում են տրոհվող կառույցների օրինակներ, որոնք, որպես կանոն, ընդունված կետադրական նորմերով չեն բացատրվում: Օրինակ՝ ասվում է, որ «տրոհվող ձևի պարագան երբեմն կարող է արտահայտվել **միմիայն դերբայով**՝ անորոշ դերբայի գործիական հոլովով»: Եվ բերվում է համապատասխան օրինակը՝ *Տերևները դողդողում էին, դեղնում ու իրանց-իրանց թափվում և թափվելով՝ տխուր շրշում* (ՀԹ): Կամ՝ տրոհվող ձևի պարագան արտահայտվում է «...բազմակի ածականներով ու անվանական կապակցություններով». *Կանգնեց դռան շեմին՝ տխուր ու մոլոր* (ԱԲ): *Դրսում բառաչեց մի կով՝ թավ ու երկար* (ԱԲ): *....Տրորվում են ու թառամում՝ Մրտները սև ու տխուր»* (ՀԹ)¹⁸ և այլն: Բերված օրինակները, ինչպես տեսնում ենք, գեղարվեստական գրականությունից են:

Մեկ այլ օրինակ: Արդի գրական արևելահայերենում կարծես հիմնովին նորմավորված է առաջադաս, միջադաս և վերջադաս դիրքերում տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը. առաջադասի և վերջադասի դեպքում այդ տրոհումը իրականացվում է բուրժով («Վերցնելով իրերը՝ նա հեռացավ»: / «Նա հեռացավ՝ վերցնելով իրերը»), իսկ միջադասի դեպքում (երբ դերբայական դարձվածը ենթակայի և ստորոգյալի միջև է)՝ երկու կողմից ստորակետով («Նա, **վերցնելով իրերը**, հեռացավ»): Բուհական դասագրքերից

¹⁸ Տե՛ս Մահակյան Վ. Ա., Մահակյան Վ. Վ., նշվ., աշխ., էջ 40-42:

մեկում, սակայն, որպես ապացույց և վկայություն ունենալով հայ դասական գրականության լեզվական նյութը, առաջարկվում է առաջնորդվել այլ մոտեցմամբ, որը կարելի է ձևակերպել հետևյալ կետերով.

ա) Անորոշի գործիական հոլովաձևով կազմված **առաջադաս դերբայական դարձվածը ձևի պարագայի** շարահյուսական պաշտոնում, եթե անմիջաբար նախորդում է ստորոգյալին, սովորաբար չի տրոհվում, այսպես՝ «Բարձրբարձր խոսելով և ծիծաղելով եկան գյուղացիք» (ՀԹ), «Էմման արագ վագելով հեռացավ» (ՆԶ), «Շները իրար հետ խաղալով վերադարձան» (ԱԲ), «Երիտասարդը վագոնի հետ օրորվելով նիրհում էր» (ՆԴ) և այլն:

բ) **Միջադաս դարձվածների** համար սովորական և ընդունված է համարվում առանց դադարի (առանց տրոհման) արտասանությունը և ըստ այդմ կետադրելը, ինչպես՝ «Վասակը դեմքը կնճռոտելով հագավ մուշտակը», «Ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի հետևից» և այլն:

գ) Անորոշի գործիական հոլովաձևով կազմված **հետադաս ձևի պարագա** դերբայական դարձվածը, ըստ լեզվաբանի, որպես կանոն, տրոհվում է, ինչպես՝ «Բա մեռած հո չենք, ապրում ենք է՛լի, / Ամեն մեռնողի երանի տալով» (ՀԹ), «Նրանք պատրաստ են իր դեմ գործել՝ միջոցների մեջ խտրություն չդնելով» (ՆԶ), «Ասաց վանականը՝ ինչացի հայացքն ուղղելով վանահոր հայացքին» (ԴԴ): Փաստորեն ոչ միայն պարտադիր չի համարվում վերջադաս դերբայական դարձվածի տրոհումը, այլև հնարավոր է նկատվում նաև ստորակետով տրոհումը, ինչպես բերված առաջին օրինակում:

դ) Անորոշի գործիականով կազմված **ժամանակի պարագա** դարձվածի դեպքում տրոհումը համարվում է պարտադրական օրինաչափություն, ինչպես՝ «Գիքորին նկատելով՝ նա

իսկույն կանգ առավ» (ՀԹ), «Հագիվ թեյը վերջացնելով՝ Աշխենը քաշվեց իր սենյակը» (ՆԴ):

Փաստարկումները համոզիչ չեն և սկզբունքորեն հակասում են արդի արևելահայերենում ընդունված կետադրական նորմերին, որոնք վերաբերում են տրոհվող դերբայական դարձվածին:

Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը, ինչպես վերը նշվեց, արդի արևելահայերենում հստակորեն կանոնարկված է և հիմնավորվում է գուտ լեզվական ու արտալեզվական մի շարք գործոններով:

Նախ՝ դա հիմնավորվում է կետադրության բոլոր երեք հիմունքներով՝ շարահյուսական, տրամաբանական-իմաստային և հնչերանգային: Անորոշ դերբայի գործիական հոլովաձևով դերբայական դարձվածը շարահյուսորեն առանձնացող կառույց է, որը նախադասության, այսպես կոչված, հիմնական մասից «տրոհվում է» նաև արտասանական զգալի դադարով: Մ. Ասատրյանը բանավոր խոսքի համար բնական չի համարում **ենթակա-միջադաս դերբայական դարձված-ստորոգյալ** կառույցում արտասանական դադարը և տրոհումը, թեև նրա իսկ վկայությամբ՝ անորոշի գործիականով դարձվածը հաճախ գրավոր խոսքում նախադաս ենթակայից անջատվում է ստորակետով. տրոհվում է որպես միջադաս դերբայական դարձված: Մեր տպավորությամբ և ընդունված կարծիքով՝ այդպիսի դադար կենդանի բանավոր խոսքում կա, որը ենթադրում է նաև համապատասխան կետադրական արտահայտություն: Իսկ երրորդ՝ տրամաբանական-իմաստային հայեցակետից դերբայական դարձվածը մի տեսակ լրացնող, հավելող բովանդակային բաղադրիչ է:

Ապա՝ Մ. Ասատրյանը այս եզրակացության է հանգում բացառապես գեղարվեստական գրականությունից քաղված նյութի հիման վրա: Ընդ որում, ինչպես արդեն ասվեց, իբրև աղբյուր է ընտրված միմիայն դասական գրականությունը (հեղ.՝ Բաֆֆի, Հ. Թումանյան, Ա. Շիրվանզադե, Նար-Դոս, Ա. Բակունց, Դ. Դեմիրճյան և Ն. Ջարյան)¹⁹:

Մինչդեռ արդի գեղարվեստական գրականության և, այսպես կոչված, նորմատիվ մատենագրության (դասագրքեր, նորմատիվ քերականության ձեռնարկներ, գիտական աշխատություններ, թելադրության ձեռնարկներ և այլն) փաստերը այլ բան են վկայում. վերը բերված դիտարկումները չհաստատող օրինակները քիչ չեն: Այսպես՝ «Երբ գրուցակիցը տվյալ իրավիճակում տարածքը խախտում է՝ ավելի հեռանալով խոսակցից, ապա նշանակում է, որ»²⁰, «Ամփոփելով նշենք, որ Լեմկինը, վերլուծելով մարդասիրական միջամտությունների տարբեր օրինակներ, ի ցույց է դնում, որ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ հալածանքները...»²¹, «Եվ որովհետև Կարսը երեք կողմից շրջապատված էր բլուրներով ու ձորերով, ուստի թագավորը, այդ ամենի վրա հարմար դիրքեր ընտրելով, կանգնեցրեց բազմաթիվ մարտկոցներ ու բերդեր»²², «Հավերժի ճամփորդն էմ ես, որը, դարերի խորքից եկած, դեպի դարերն է գնում, և որի երթը վերջ ու վախճան չունի...»²³, «Խոսելով ա-

¹⁹ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 307-309:

²⁰ «Վեմ», № 2, Եր., 2016, էջ 13:

²¹ «Հայագիտության հարցեր», Եր., 2017, էջ 85:

²² **Ջաքարյան Հ., Մխիթարյան Ա.**, Թելադրության նյութերի ժողովածու, Եր., 2017, էջ 73:

²³ Նույն տեղում, էջ 18:

նելիքների մասին՝ նա քայլում էր ծառուղով», «Նա, խոսելով անելիքների մասին, քայլում էր ծառուղով»²⁴:

Հետո՝ կարծում ենք՝ այդ չափով մանրամասնված կետադրություն և բացատրություններ հրամցելը պարզապես խճողում է դերբայական դարձվածի կետադրությունը: Նկատի ունենք ոչ միայն դարձվածի դիրքային տարբերակների կողմնորոշիչ համարելը կամ դերբայի և ստորոցյալի նախադասության այլ անդամներով ընդմիջված լինելը, այլև հատկապես այն, որ Մ. Ասատրյանը առաջարկում է իրարից զանազանել ժամանակի և ձևի պարագա դերբայական դարձվածները, որոնցից միայն վերջինը, ըստ լեզվաբանի, ունի պարտադիր կետադրություն: Հայտնի է, սակայն, որ ժամանակի և ձևի պարագա դերբայական դարձվածները հաճախ հստակորեն տարբերակված չեն: Այդպիսի մի դիտարկում անում է նաև ինքը՝ Մ. Ասատրյանը: «Պետք է նկատի ունենալ,- գրում է նա,- որ անորոշի գործիականի մեջ ձևի նշանակությունը ժամանակային նշանակությունից շատ ու շատ ուժեղ է, որի պատճառով էլ, ինչպես օրինակների մի մասն է ցույց տալիս, ժամանակային նշանակության հետ միաժամանակ դրսևորվում է նաև ձևի իմաստ»²⁵: Հարց է առաջանում. ի՞նչ իմաստ ունի նման տարբերակվածության հիմքով կետադրություն սահմանելը, երբ մանավանդ օրինակների մի մասում գործ ունենք երկու իմաստները համատեղող կառույցների հետ, որոնց տարբերակումը վեճեր կարող է հարուցել նույնիսկ մասնագիտական գրականության մեջ: Ավելին, սովորական լեզվակիրառողի համար այդ տարբերակվածությունը ունի խիստ անկարևոր նշանակություն:

²⁴ Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու, 12-րդ դասարանի համար, Եր., 2011, էջ 153:

²⁵ Նույն տեղում, էջ 307-309:

Եվ վերջապես՝ անորոշ դերբայի գործիական հոլովաձևով դերբայական դարձվածի համար ավանդաբար գործածվել է և այժմ էլ ընդունված է գործածել շատ որոշակի կետադրություն՝ շարահյուսական, հնչերանգային և տրամաբանական-խմաստային հիմնավորումներով: Դասական գեղարվեստական գրականության լեզվական փաստերը չեն կարող հիմք հանդիսանալ այս կառույցների վերաբերյալ նոր կետադրություն սահմանելուն:

Ճշգրտենք մեր մոտեցումները: Կետադրությունը պայմանավորող սկզբունքները երեքն են՝ տրամաբանական-խմաստային, շարահյուսական, հնչերանգային: Այդ պայմանավորվածությունը իրացվում է հետևյալ տարբերակներով՝ ա) ստորադասական հարաբերությամբ, որտեղ սովորաբար գերիշխող է դառնում տրամաբանական-խմաստային հիմունքը, բ) հավասարազոր իրավունքներով, որտեղ ակտիվանում է շարահյուսական հիմունքի դերը, և գ) առանձնաբար, որը գործնականում սահմանափակ դրսևորումներ ունի:

Կետադրությունը միօրինակացնելու կամ դրանք խստորեն կանոնարկելու անպայման պահանջը գործնականում չունի արդարացում: Ընդհակառակը, կետադրական նշանները, լինելով բանավոր խոսքի բազմազանության ու հարստության, այսպես կոչված, գրավոր արտահայտություններ, պետք է ունենան գործածության ավելի ազատ սկզբունքներ, քան, օրինակ, ուղղագրությունը: Վերը նշված բոլոր երեք տարբերակներում էլ նախընտրելի չեն խստորոշ կանոնների սահմանումը և կարծր պայմանադրականությունը: Թույլատրելի պետք է համարել որոշ ազատություններ, մասնավորապես տարբերակների ընտրության հնարավորություն, եթե դա իհարկե չի խաթարում շարադրանքի բովանդակությունը և կամ չի խախտում շարահյուսական կանոնավոր կառույցը:

Լինելով բանավոր խոսքի գրավոր պատկերը՝ գրավոր խոսքը առավելագույն չափով պետք է դրսևորի բանավորի իմաստային և ոճական-արտահայտչական նրբերանգներն ու յուրահատկությունները:

Կետադրության նորմերը սահմանելիս պետք է, իհարկե, նաև աղբյուր ունենալ ժամանակի գրավոր խոսքը, այդ թվում նաև գեղարվեստական լեզվի կետադրական փաստերը, սակայն ընդհանուր նորմերը պիտի սահմանել՝ զանց առնելով այս կամ այն գրողի կետադրական նախասիրությունները, և ելակետ ունենալ վերը նշված հիմունքներն ու հիմնավորումները:

ԳԼՈՒԽ 2.

ԿԵՏԱՊՐԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արևելահայերենում վերլուծման ու ճշգրտման կարիք ունեն նաև կետադրական երկու խումբ իրողություններ. **գուգա-ձևություններ**, որոնք՝ որպես կանոնական ձևեր, ընդհանուր առմամբ ընդունվում են մասնագետների կողմից, և **տարակարծություններ**, որոնք կետադրական նշանների առանձին կիրառությունների վերաբերյալ գոյություն ունեն տեսական գրականության մեջ:

Կետադրական գուգաձևություններ առկա են բոլոր տեսակի կետադրական նշանների (տրոհության, առոգանության, բացահայտության) գործածության մեջ: Չենք անդրադառնալու կետադրական այն իրողություններին, որոնք, գուգահեռաբար հանդես գալով, կատարում են իմաստատարբերակիչ դեր (իմաստատարբերակիչ կետադրություն). կետադրվում են քերականորեն հավասարապես ճիշտ, բայց իմաստով տարբեր շարահյուսական կառույցներ, և այդ տարբերությունը գրավոր խոսքում արտահայտվում է կետադրությամբ:

Օրինակ՝ հարակատարով առաջադաս դերբայական դարձվածը, որը կարող է ընկալվել և՛ որպես որոշիչ, և՛ որպես ձևի պարագա, տրոհվում է ըստ այդմ՝ պայմանավորված խոսքի բովանդակությամբ. «Մարալանջին նստած՝ հովիվը նվագում էր» (ձևի պարագա): / «Մարալանջին նստած հովիվը նվագում էր» (որոշիչ):

Կամ՝ նախադասության որոշ տրոհվող անդամներ կետադրությամբ կարող են անջատվել իրենց կամ հաջորդող, կամ նախորդող կառույցից՝ ըստ խոսքի բովանդակության. «Անցանք գետը՝ **ըստ պայմանավորվածության**, սպասեցինք մինչև մութն ընկնելը»: / «Անցանք գետը, **ըստ պայմանավորվածության**, սպասեցինք մինչև մութն ընկնելը»: «Ներս մտավ՝ **լռեյայն բարևելով հավաքվածներին**, նստեց իր տեղը»: / «Ներս մտավ, **լռեյայն բարևելով հավաքվածներին**, նստեց իր տեղը», «Օրինակ՝ Նկ. 4.2.-ում գնդիկներից որևէ մեկի **շեղումը կամայական ուղղությամբ**, կառաջացնի մյուս գնդիկի շեղումը»: / «Օրինակ՝ Նկ. 4.2.-ում գնդիկներից որևէ մեկի **շեղումը կամայական ուղղությամբ կառաջացնի** մյուս գնդիկի շեղումը»:

Այլ օրինակներ՝ «Դիմեք մի ուրիշ() հայտնի փաստաբանի»: «Մասնակցում էր Վահանի() ընկերոջ(,) հարսանյաց արարողությանը»: «Հանձնարարեցին Հակոբին՝ շքանշան տալու արարողությունը կազմակերպել»: / «Հանձնարարեցին՝ Հակոբին շքանշան տալու արարողությունը կազմակերպել»: «Սա տեքստի մյուս() մշակված տարբերակն է»: «Թող կարդա նամակը»: / «Թո՛ղ, կարդա՛ նամակը»: «Գնանք՝ պարզենք»: / «Գնանք, պարզենք»: «Մեզ հյուրասիրեցին խորոված(,) կարտոֆիլ» և այլն²⁶:

Կետադրական զուգաձևությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կարիք ունեն հստակեցման և համակարգված ու ամփոփ ներկայացվելու. միշտ չէ, որ զուգահեռ ձևերի գոյությունը պատճառաբանված է և կարող է հանձնարարվել գործածության: Դրանք երբեմն ոչ թե կանոններով սահմանված զուգաձևություններ են և կամ համապատասխան կանոնի չգոյության հետևանք, այլ պար-

²⁶ Տե՛ս նաև **Զարարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 72-78:

գապես մասնագետի անհատական ընկալման, իսկ ավելի հաճախ անհետևողականության արգասիք:

Զուգաձևությունների այն խումբը, որը կիրառության իրավունք է ձեռք բերել, արձանագրված է կանոնական քերականության մատյաններում: Այդպիսի զուգաձևությունները, մեր դիտարկումներով, հետևյալներն են՝

1) **Կարճ ուրիշի ուղղակի խոսք՝ վերջադաս դիրքում:** Կետադրվում է երկու տարբերակով՝ չակերտներում՝ ընդունված գրությամբ՝ միջակետ, առնվում է չակերտների մեջ, սկսվում է մեծատառ գրությամբ (Ասաց. «Շուտով կվերադառնամ»), և կամ առանց չակերտների. տրոհվում է բուրժով և սկսվում է փոքրատառ գրությամբ («Ասաց՝ շուտով կվերադառնամ»):

Փոքր-ինչ խնդրահարույց է կարճ կամ հակիրճ մեջբերվող խոսք արտահայտությունը. օրինակ՝ հակիրճ է արդյոք չորս կամ հինգ բառային միավորներից կազմված խոսքը: Մ. Աբրահամյանը շեշտում է ուրիշի խոսքի խիստ համառոտ՝ առավելապես մեկ բառով արտահայտված լինելու հանգամանքը²⁷: Կա նաև այլ կարծիք. «Եթե ուղղակի խոսքի լիիմաստ բառերը չորսից ավելի են, ապա ցանկալի է, որ խոսքն արդեն գրվի գծիկով կամ չակերտներում»²⁸: Կարելի է առաջնորդվել այս մոտեցմամբ կամ, թերևս, բավարարվել պարզապես բառային միավորների որոշակի քանակ սահմանելով (կարևոր չէ լիիմաստ, թե՞ թերիմաստ, քանի որ տարբերակումը դժվարացնում է «շարքային» լեզվակիրառողի գործը) և խուսափել ուղղակի խոսքի բառաշատությունից. հակիրճ համարել մինչև չորս բառային միավորից

²⁷ Տե՛ս **Աբրահամյան Մ.**, նշվ. աշխ., էջ 43:

²⁸ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 104:

կազմվածները, ինչպես՝ *Ասաց՝ մենք, իհարկե, անպայման կայցեկենք*:

2) **Ուրիշի մեջբերվող խոսք, որը երկխոսություն չէ** (միայնակ ուղղակի խոսք): Եթե մեջբերվող խոսքը բերվում է գրավոր կամ ներքին խոսքից, ապա պարտադիր առնվում է չակերտների մեջ: Հնչած խոսքը ավելի հաճախ առանձնանում է անջատման գծով, սակայն այն նույնպես կարող է առնվել չակերտների մեջ, եթե երկխոսության բաղադրիչ չէ: Այսպիսով՝ մեջբերվող խոսքը, որը երկխոսություն չէ, գրվում է՝

- ն՝ նոր տողից անջատման գծիկով՝ ընդունված կարգով.

Հայտարարեց.

– *Ես ձեռքերս լվանում եմ այս անմեղի արյունից:*

- ն՝ չակերտներում, ինչպես մտքում ասված խոսքը կամ գրավոր մեջբերումը.

Հայտարարեց. «Ես ձեռքերս լվանում եմ այս անմեղի արյունից»:

Երկունս էլ հավասարապես գործածելի են, և դժվար է որևէ մեկին նախապատվություն տալը. կետադրության միջոցի ընտրությունը ըստ էության որոշակիորեն պայմանավորված չէ կետադրության հիմունքներից որևէ մեկով՝ տրամաբանական-իմաստային, հնչերանգային, շարահյուսական: Պետք է առաջնորդվել թերևս արտահայտչականության թելադրանքով՝ մասամբ առաջ մղելով կետադրության տրամաբանական-իմաստային հիմունքը. եթե միտում կա ընդգծելու և առանձնացնելու ասվածի նշանակությունը, ապա հավանաբար նախընտրելի է առանձին՝ նոր տողից գրությունը: Իսկ եթե առաջնորդվենք շարադրանքի կառուցվածքային պահանջներով, ապա տեղի սղությունը կարող է թելադրել չակերտներով տարբերակի ընտրությունը:

Այնուամենայնիվ, կարծիք կա նաև, որ որպես հնչող խոսք՝ մեջբերվող ուղղակի խոսքը պիտի կետադրվի միջակետով և նոր տողից գծիկով²⁹: Բայց այսպիսի մոտեցումը, կարծում ենք, սահմանափակում է կետադրական նշանի գործածության հնարավորությունները՝ էապես նվազեցնելով նաև լեզվակիրառողի ստեղծագործական նկրտումները: Այլ ձեռնարկներում հարցը չի մասնավորեցվում և ներկայացվում է մեջբերվող ուղղակի խոսքի ընդհանուր օրինաչափությամբ՝ «Չակերտների մեջ է առնվում մեջբերվող ուղղակի խոսքը»³⁰: Թեև բերված օրինակներում մեզ հետաքրքրող տարբերակներից չեն հանդիպում, սակայն այլ առիթով Ս. Աբրահամյանը գեղարվեստական խոսքում հնարավոր է համարում նաև գիտական գրականության մեջ բերվող ուղղակի խոսքի տրոհումը նաև միջակետ-անջատման գծով՝ նոր տողից, երբ անհրաժեշտություն է առաջանում ընթերցողի ուշադրությունը հրավիրելու մեջբերվող խոսքի վրա³¹: Սա նշանակում է, որ Ս. Աբրահամյանը հակված է պաշտպանելու քննարկվող կետադրական կանոնի ավելի ազատ կիրառությունը:

3) Շարունակվող ուրիշի ուղղակի խոսք: Ինչպես գիտենք, ուրիշի ուղղակի խոսքը կարող է շարունակվել ստորակետ գծով (,-), միջակետ գծով (.-) կամ վերջակետ գծով (:-)՝ պայմանավորված բաղադրիչ մասերի շարահյուսական կապով և հարաբերությամբ: Վերջին երկու դեպքում կետադրական նշանները ազատ կարող են փոխարինել միմյանց, ինչպես բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների պարագայում, որոնք ունեն իմաստային զգալի ինքնուրույնություն: Ավելին. նշված երկուսի փո-

²⁹ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 98-104:

³⁰ **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 47:

³¹ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

խարեն (միջակետ գիծ (-), վերջակետ գիծ (: -)) կարող է գործածվել նաև ստորակետ-գիծ զուգակցված կետադրական նշանը (-): Այսինքն՝ ունենք եռաձևություն: Այսպես՝

- – *Առարկություն չունեմ, – լավեց պատասխանը, – վարվե՛ք, ինչպես կցանկանաք:*
- – *Առարկություն չունեմ, – լավեց պատասխանը. – վարվե՛ք, ինչպես կցանկանաք:*
- – *Առարկություն չունեմ, – լավեց պատասխանը: – Վարվե՛ք, ինչպես կցանկանաք:*

Անշուշտ, շարահյուսական կառույցի տրամաբանությունից ելնելով (պատճառահետևանքային կապով բաղադրիչ նախադասությունների առկայություն)՝ այս դեպքում նախապատվությունը պիտի տալ վերջին երկու տարբերակներին՝ միջակետ գիծ կամ վերջակետ գիծ, որը բանավոր խոսքում ունի հնչերանգային համապատասխան արտահայտություն՝ առավել կամ պակաս դադարով արտասանություն: Բնականաբար սխալ չպետք է համարել նաև առաջին տարբերակը:

4) Ստորադաս նախադասությամբ վերջացող առաջադաս դերբայական դարձվածը տրոհվում է թե՛ դարձվածի կանոնով (բուրով), թե՛ ստորադաս նախադասության կանոնով (ստորակետով)՝ «Հասկանալով, **որ պարտվում է**, նահանջեց»://«Հասկանալով, **որ պարտվում է**, նահանջեց»: Կանոնը գործում է ավանդաբար: Մակայն և՛ քերականորեն, և՛ տրամաբանորեն **նախընտրելի կամ հանձնարարելի տարբերակ** կարող է ճանաչվել բուրով տրոհումը, քանի որ գործ ունենք սովորական առաջադաս դերբայական դարձվածի հետ (դերբայ + լրացում), որի կազմում՝ որպես լրացում՝ կողմնակի ուղիղ ինդիքը, արտահայտված է ստորադաս նախադասությամբ (մանավանդ վերջադաս դիրքում այդ կառույցի՝ բուրով տրոհումը միանշանակ է): Բոլոր դեպքերում, գործնականում ընդունելի են երկու տարբերակներն էլ, մանավանդ

որ ստորակետով տարբերակը գրական գրավոր խոսքում ունի կիրառական ավելի մեծ հաճախականություն:

5) Իրարից անկախ և առանց շաղկապի միացած համադաս նախադասությունները տրոհվում են երեք տարբերակով՝ ստորակետ, միջակետ և վերջակետ՝ պայմանավորված խոսքային առոգանությամբ և դադարի տևողության չափով. «Գարուն է,(.) դուրս եկա բակ,(.) կյանքը շարունակվում է»: Կամ՝ «Գարուն է: Դուրս եկա բակ: Կյանքը շարունակվում է»: Իհարկե, այստեղ խնդիր կարող է ծագել բաղադրիչ նախադասությունների իմաստային և գործառական անկախության չափի վերաբերյալ, որով պայմանավորված է կետադրական այս կամ այն նշանի գործածությունը: Այդ չափը կարող է ընդգծվել ենթակայի և կամ ժամանակաձևերի փոփոխությամբ, ինչպես նաև բովանդակային այսպես կոչված տարարժեքությամբ: Այս դեպքում նախընտրելի է դառնում միջակետի կամ վերջակետի գործածությունը, ինչպես վերը նշված օրինակում: Ընդհանուր ենթակայի դեպքում նախընտրելի է դառնում ստորակետի գործածությունը (ինչպես՝ «Դուրը իր հետևից անձայն փակեց, դանդաղ իջավ աստիճաններով, փորձեց վերհիշել կատարվածը...»), եթե ակնհայտ պատճառահետևանքային կապ չկա (ինչպես՝ «Հանդիպմանը չմասնակցեց. լավ չէր զգում իրեն»):

Վերջակետով տրոհված միավորներն անշուշտ չեն գնահատվում որպես բարդ համադասական նախադասություն:

6) Եթե ստորադասական շաղկապից առաջ ընկած մասը ընդհանուր է գլխավոր և երկրորդական նախադասությունների համար, ապա երկրորդական նախադասությունը կարող է համարվել և՛ միջադաս, և՛ առաջադաս: Գրավոր խոսքում դա արտահայտվում է՝ շաղկապից առաջ ստորակետ դնել-չդնելով, ինչպես՝ «Վաղը, եթե լավ եղանակ լինի, կմեկնես»: / «Վաղը եթե լավ եղանակ լինի, կմեկնես»: Կամ՝

«Առավոտյան(,) եթե անձրև չգա, գնանք այգի՝ վազելու»: «Մեր դասղեկը(,) երբ կարդաց իմ շարադրանքը, սարսափից կարկամեց»³²:

Երկակի կետադրություն է հանձնարարվում նաև այն դեպքում, երբ այդ ընդհանուր անդամը ենթական է՝ *Պետրոսը այդ օրը(,) թեև վատառողջ էր, բայց եկել էր դասի*³³: Շարահյուսական այսպիսի կառույցներում, երբ ենթական է ընդհանուր գլխավոր և երկրորդական նախադասություններում, հանձնարարելի է առանց ստորակետի գործածությունը, քանի որ պարզապես գործ ունենք ստորադասական շաղկապի՝ ոչ սովորական շարադասությամբ գործածության հետ: Սովորական շարադասությամբ կունենանք. «Թեև Պետրոսը այդ օրը վատառողջ էր, բայց եկել էր դասի»: Կամ՝ «Պետրոսը թեև այդ օրը վատառողջ էր, բայց եկել էր դասի»:

7) Թվանշաններով գրված և բացարձակ թիվ նշանակող տվյալների բաղադրիչները հաճախ կետադրվում են երեք տարբերակով՝ անջատվում են բացատ(ներ)ով (առանց կետադրական նշանի՝ 1 196 000), ստորակետ(եր)ով (1,196,000) կամ միջակետ(եր)ով (1.196.000):

Նախընտրելի է վերջին տարբերակը, քանի որ ընդունված կարգով՝ այդպիսի գրություն ունեն նաև թվանշաններով գրվող այլ տվյալների (օր, ամիս, տարի; ժամ, րոպե, վայրկյան; կետ, ենթակետ, ենթանթակետ և այլն) բաղադրիչները, ինչպես՝ 1.2.5., 18.25-ին: Ստորակետի գործածությունը կարող է շփոթություն ստեղծել՝ թողնելով հավասարաթեք թվերի/միավորների թվարկման տպավորություն: Բոլոր դեպքերում, այս խնդիրը կարող է լուծվել ավանդույթի կամ պայմանավորվածության հիմունքով:

³² Տե՛ս **Զաքարյան Հ.**, նշվ., աշխ., էջ 185:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 62:

8) **Ասես(թե), կարծես(թե), չէ՞ որ** շաղկապական բառերը, երբ հանդես են գալիս բաղադրիչ նախադասությունների սկզբում, ստորակետի փոխարեն կարող են տրոհվել նաև միջակետով. այս դեպքում ավելի է ընդգծվում դրանց վերաբերական նշանակությունը. «Գրոհայինների մի խումբ առաջ մղվեց.(.) կարծես(թե) հաղթանակը ապահովված էր»: / «Գրոհայինների մի խումբ առաջ մղվեց.(.) չէ՞ որ հաղթանակը ապահովված էր»: Շաղկապական նշանակության գերակայության դեպքում տրոհվում է ստորակետով (ունենք ձևի պարագա երկրորդական նախադասություն). «Նայեց ընկերոջը (այնպես), կարծես առաջին անգամ էր նրան տեսնում այդ կերպարանքով»: «Բոլոր հարցերին նա պատասխանում էր շատ սպառիչ (այնպես), ասես շատ խորությամբ ուսումնասիրել էր խնդիրը»:

9) **Խոսքի մեջ հիշատակվող բառի, օտարաբանության, լեզվական այս կամ այն միավորի և այլ արտահայտությունների առանձնացումը** կարող է կատարվել մի քանի եղանակով՝ ընդգծումով (Հայտնի է, որ հրապարակ-ը պարզ բառ է), չակերտներով (Հայտնի է, որ «հրապարակ»-ը պարզ բառ է), թավ տառերով (Հայտնի է, որ **հրապարակ**-ը պարզ բառ է), շղատառով (Հայտնի է, որ *հրապարակ*-ը պարզ բառ է), գլխատառերով (Հայտնի է, որ ՀՐԱՊԱՐԱԿ-ը պարզ բառ է) կամ բուն շարվածքից տարբեր որևէ տառատեսակով (Հայտնի է, որ հրապարակ-ը պարզ բառ է): Դրանցից որևէ մեկի նախընտրությունը պայմանավորված չէ կետադրության հայտնի հիմունքներով: Այստեղ դեր ունեն լեզվակիրառողի անհատական նախասիրությունները, մասամբ՝ նաև շարադրանքի բնույթը:

10) Եթե բարդ համադասական նախադասության երկրորդ բաղադրիչը պարունակում է առաջին բաղադրիչի մտքին տրամագծորեն հակառակ պնդում, ապա երկրորդ բաղադ-

րիչը ամբողջությամբ կամ մեծ մասամբ կարող է փոխարինվել (**ընդհակառակը** բառով, որից առաջ բույժ է դրվում («Ձեզ լավ ընդունեցին, նրանց՝ հակառակը»), իսկ դրան նախորդող շաղկապից առաջ դրվում է ստորակետ («Ձեզ լավ ընդունեցին, իսկ մեզ՝ հակառակը»): Առանձին շաղկապների դեպքում դրվում է նաև միջակետ («Դուք միասին կմեկնեք, նրանք՝ առանձին-առանձին. կամ՝ հակառակը»): Այս դեպքում կետադրական տարբերակի նախընտրությունը չունի, այսպես կոչված, հիմունքային հիմնավորում, հետևաբար ազատորեն կարելի է կիրառել և՛ մեկը, և՛ մյուսը:

11) Եթե **թվարկման բաղադրիչներից** յուրաքանչյուրը ինքնուրույն նախադասություն է և պահանջի հետ քերականորեն կապված չէ, ապա դրանցից առաջ և դրանց միջև սովորաբար դրվում է վերջակետ: Երկու դիրքում էլ սխալ չէ նաև միջակետի գործածությունը: Այս դեպքում մենք ապավինում ենք շարահյուսական հիմունքի գործադրությանը: Այսպես՝

Նշե՛ք այն նախադասությունը, որը նկարագրում է ինքնուրույն դեպք.(:)

- *Քարը ազատ ընկնում է Երկրի վրա.(:)*
- *Արբանյակը շարժվում է ուղեծրով.(.):*
- *Մոտորանավակը շարժվում է շարժիչն անջատելուց հետո:*

Թվարկումները կարող են լինել համարակալված, որևէ տարբերանշանով առանձնացված և չհամարակալված:

Վերջինի դեպքում թվարկումներից առաջ կարող է դրվել միջակետ կամ բույժ, եթե տրոհումները ամբողջական և ինքնուրույն նախադասություններ չեն: Թվարկվող բաղադրիչները տրոհվում են ստորակետով:

Եթե դրանք պահանջի հետ քերականորեն կապված են և բառ կամ բառակապակցություն են, կարող են սկսվել փոքրատառով և ավարտվել առանց կետադրության: Այսպես.

- Պատասխան՝ բեռնատարը շարժվում է (.) ա) հավասարաչափ, բ) դանդաղեցնելով ընթացքը, գ) արագացնելով ընթացքը:
- Պատասխան՝ բեռնատարը շարժվում է՝ հավասարաչափ, դանդաղեցնելով ընթացքը, արագացնելով ընթացքը:
- Պատասխան՝ բեռնատարը շարժվում է (.)
 1. հավասարաչափ,
 2. դանդաղեցնելով ընթացքը,
 3. արագացնելով ընթացքը:
- Պատասխան՝ բեռնատարը շարժվում է (.)
 - հավասարաչափ
 - դանդաղեցնելով ընթացքը
 - արագացնելով ընթացքը

Եթե թվարկվող բաղադրիչները պահանջի քերականական շարունակությունն են (բառեր, բառակապակցություններ կամ երկրորդական նախադասություններ են), պահանջից տրոհվում են բութով, սկսվում են փոքրատառով և միմյանցից անջատվում են ստորակետով.

Ձևաբանական համակարգում էական տեղաշարժեր են գրանցվել՝

- ա) գոյականի հոգնակիի կազմության մեջ,*
- բ) արգելական հրամայականի կազմություններում,*
- գ) հոլովական ձևերում:*

Թեման ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է (.)

- ❖ *իմանա նյութի կառուցվածքը, թե ինչով է պայմանավորված...*

❖ *կարողանա նկարագրել նյութի մասնիկային կառուցվածքը հաստատող փորձեր...*

12) Եթե **բազմակի անդամներից մեկը առաջադաս կամ վերջադաս տրոհվող դերբայական դարձված է**, ապա կարող է տրոհվել ն՛ ստորակետով՝ որպես համագոր անդամ, ն՛ բուրժով, եթե դիտվի հատկապես իր դիրքի (առաջադաս կամ վերջադաս) տեսակետից. «Տխուր, փոքր-ինչ վրդովված (,) նա դուրս եկավ տնից»: / «Նա դուրս եկավ տնից տխուր.(,) փոքր-ինչ վրդովված»: / «Նա տխուր, փոքր-ինչ վրդովված, դուրս եկավ տնից»:

Ի դեպ, այն պնդումը, որ այսպիսի կառույցներում բազմակի անդամներից դերբայական դարձվածը կարող է տրոհվել նաև ստորակետով, եթե «մյուսների համեմատ ամենից մոտն է ստորոգյալին» («Վարպետն իր գործն անում էր, ոչ մի մանրուք չանտեսելով, անշտապ ու խնամքով»)՝³⁴, այնքան էլ համոզիչ չէ. շարահյուսորեն չի արդարացվում, քանի որ այդ դիրքում դերբայական դարձվածը չի կարող դիտարկվել որպես միջադաս. այն պետք է տրոհվի կա՛մ առաջադաս / վերջադաս դերբայական դարձվածի կանոնով, կա՛մ բազմակի անդամների, ինչպես վերը ներկայացվեց:

13) Դպրոցական դասագրքերում երբեմն չի հիշատակվում **կոչականի՝** բացականչական նշանով կետադրվելու հնարավորությունը, մինչդեռ խոսքի երանգով (տրամաբանական-իմաստային և հնչերանգային հիմունքով) պայմանավորված՝ դա միանգամայն ընդունելի տարբերակ է, ինչպես՝ «-Վահա՛ (՛)ն,- լավեց քեռու ձայնը,- ի՞նչ եղավ քեզ»: Կետադրական այդ գուգաձևությունը հստակ արձանագրված է նաև Ս. Աբրահամյանի ձեռնարկում. «Կոչականի կամ նրա նա-

³⁴ Տե՛ս **Զաքարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 224:

խաղաս լրացման շեշտի փոխարեն կարող է դրվել բացականչական, եթե բառն արտաբերվում է բացականչումով»³⁵:

14) **Ջուգաձևություն ունի նաև ձայնարկությունների կետադրությունը՝** պայմանավորված խոսքի հնչերանգով. եթե խոսքը ձևակերպվում է ավելի կտրուկ շեշտադրությամբ, ապա ձայնարկության վրա բացականչականի փոխարեն կարող է դրվել նաև շեշտ, ինչպես՝ «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ»: / «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ»:

15) **Կետադրական գուգաձևություններ ունեն բոլոր այն շարահյուսական կառույցները, որոնցում տրոհվող առաջին բաղադրիչի լրացումը երկրորդական նախադասություն է:** Այդպիսի կառույցներ են ձևավորում նախադաս դերբայական դարձվածք, նախադաս հիմունքի և զիջման պարագաները, բացառման կապերով (բացի, առանց, գատ, բացառությամբ) նախադաս կապակցությունները: Դրանք տրոհվում են կա՛մ նախադաս տրոհվող անդամի իրենց բնորոշ կետադրությամբ (բութով), կա՛մ երկրորդական նախադասության տրոհման կանոնով (ստորակետով): Այսպես՝ «Հասկանալով, որ փրկության այլ ճանապարհ չկա(՛), նա նետվեց գետը», «Ըստ նոր կանոնադրության, որը ներկայացրել էր մեր հանձնաժողովը(՛), ընտրությունը պիտի կատարվեր բաց քվեարկությամբ», «Չնայած նրան, որ վատ եղանակ էր(՛), մենք ճանապարհ ընկանք», «Բացի նորեկներից, որոնք խմբված էին դրսում(՛), այլ մասնակիցների ես չտեսա»: Կարծում ենք՝ նախընտրելի է նախադաս անդամի կետադրությամբ տրոհումը, քանի որ պատճառաբանված է քերականորեն՝ շարահյուսական հիմունքով: Ունի նաև տրամաբանական հիմնավորում. երկրորդական նախադասությունը տրոհվող առաջին բաղադրիչի լրացումն է: Մյուս

³⁵ Տե՛ս Աբրահամյան Մ., նշվ. աշխ., էջ 65:

տարբերակը՝ ստորակետով տրոհումը, նույնպես ունի քաղաքացիության իրավունք ավանդույթի ուժով: Բոլոր դեպքերում գործ ունենք կետադրական զուգաձևության հետ. մեկին կամ մյուսին առավելություն տալը նախընտրության հարց է:

16) **Բազմակի որոշիչների տրոհության հարցը** միշտ է քննարկությունների առարկա եղել: Հանգամանորեն ներկայացվել են հնարավոր լուծումներն ու զուգաձևությունները: Կանոնական է նշանակությամբ **համասեռ, սակայն իմաստով տարասեռ որոշիչները** ստորակետով թե՛ տրոհելը, թե՛ չտրոհելը. «ծաղկագարդ(,) անուշաբույր այգեստաններ», «հոգսաշատ(,) անհանգիստ օրեր», «ազդեցիկ(,) իրական պատկերներ», «լուսավոր(,) զարդարուն դահլիճներ»:

Կետադրական զուգահեռ ձևեր ունեն **աձական + դերբայ** որոշչային կապակցությունները. եթե դրանք չեն լրացնում որոշյալին առանձնաբար կամ նույն կամ մոտ հատկանիշներով չեն բնութագրում առարկան և կամ կարող են ընկալվել լրացում-լրացյալ հարաբերությամբ, ապա կարող են նաև չտրոհվել ստորակետով, ինչպես՝ «Լսվեց դասական(,) առինքնող երաժշտություն», «Փողոցում հայտնվեցին ուրախ(,) աղմկող երեխաներ»: Եթե առարկան բնութագրում են առանձին-առանձին և կամ նույն կամ մոտ հատկանիշներով, ապա տրոհվում են, ինչպես՝ «Տխուր, մտահոգված տեսք ուներ»³⁶:

³⁶ Դպրոցական դասագրքերում երբեմն տրվող ընդհանրական կամ անորոշ ձևակերպումները («Աձական + դերբայ որոշչային կապակցությունները երբեմն տրոհվում են» (տե՛ս **Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.**, Հայոց լեզու. հանրակրթական դպրոցի դասագիրք 8-րդ դասարանի համար, Եր., 2012, էջ 95)), կարծում ենք, մեկնաբանության անհրաժեշտությունը ունեն:

17) **Դերբայական դարձվածք, որը հաջորդում է ամբողջ նախադասության և իր համար ընդհանուր լրացման,** կարող է կետադրվել թե՛ ստորակետերով, թե՛ բութով. «Շատ շուտով, մի քանի բառ փոխանակելով գործընկերոջ հետ, պարզեց եղելությունը»: / «Շատ շուտով մի քանի բառ փոխանակելով գործընկերոջ հետ՝ պարզեց եղելությունը»: Սա ունի տրամաբանական-իմաստային հիմնավորում. առաջինը ենթադրում է «շատ շուտով» եղելությունը պարզելու, իսկ երկրորդը՝ «շատ շուտով» մի քանի բառ փոխանակելու իմաստային նրբերանգր:

18) **Մատենագիտական հղումներում** եթե մեկ կետով թվարկումով տրվում են մեկից ավելի հեղինակների գործեր, ապա դրանք գործնականում տրոհվում են թե՛ ստորակետով, թե՛ վերջակետով: Այսպես՝

* **Է. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003:(.)** **Վ. Առաքելեան, Գրաբարի քերականություն, Եր., 2010:**

Նախընտրելի է և հանձնարարելի վերջակետի գործածության կանոններում հստակ սահմանված տարբերակը. «Վերջակետ դրվում է մատենագիտական ցանկում, տողատակում մատենագիտական ամեն մի ինքնուրույն հղումից հետո: Օրինակ՝

Գրականություն

Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906: Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965»³⁷:

19) **Թվականներով գրված համարի և ենթահամարի միջև դրվում է միջակետ:** Վերջինից հետո միջակետը երբեմն չի

³⁷ Աբրահամյան Մ., նշվ. աշխ., էջ 17:

դրվում. նախընտրելի է միջակետով տարբերակը: Ըստ որում, թվականները գրվում են առանց բացատի՝ **2.2.1. // 2.2.1**, կամ՝ **03.02. 2019 // 2019. 03. 02**:

20) Կանոնական քերականության ձեռնարկներում, առավելապես դպրոցական դասագրքերում ընդունված է պարտադիր համարել հրամայական եղանակի բայաձևի վրա շեշտ դնելը (**խոսի՛ր, մոտեցի՛ր, նկարի՛ր, գնա՛, վերցրու, ե՛կ** և այլն): Ավելին, դպրոցական և բուհական քննական գրավորներում կետադրական այդ կանոնի չկիրառությունը երբեմն դիտվում է կանոնի չիմացություն: Մինչդեռ շեշտի այդ գործածությունը և՛ տրամաբանական-իմաստային, և՛ հնչերանգային առումներով հաճախ բնավ էլ պարտադրական չէ: Այս մոտեցումը շատ հստակ ձևակերպված է «Հայերենի կետադրություն» ձեռնարկում. «Հրամայական եղանակի բայաձևի վրա կարող է շեշտ չդրվել՝ պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով: Օրինակ՝ *Հասմի՛կ, խնդրում եմ՝ լուսամուտը փակիր*», և ապա՝ «Հրամայական նախադասության մեջ շեշտի փոխարեն կարող է գործածվել բացականչական, եթե բառն արտաբերվում է բացականչումով: Օրինակ՝ *Հե՛յ, օգնեցե՛ք, / Մենած հո չե՞ք*³⁸:

21) **Ինչպես** հարաբերական դերանունով ձևավորված ձևի պարագան ունի երկակի կետադրություն. տրոհվում է ստորակետով կամ ոչ («Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց, Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ», «Կրակոցը շառաչեց լեռներում ինչպես ամպրոպը»): Սովորաբար չի տրոհվում, եթե անմիջաբար հաջորդում է բայ-ստորոգյալին («Շառաչեց ինչպես ամպրոպը երկնքում», «Նրա ոտքերի տակ նետվեց ինչպես վիրավոր մի թռչուն»): Անհասկանալի է կետադրության առանձին ձեռնարկներում միմիայն դերբայով

³⁸ Նույն տեղում, էջ 64-65:

կամ կապային կապակցություններով, «բազմակի անակա-
ններով ու անվանական կապակցություններով» ձևավորված
ձևի պարագայի տրոհումը որպես նորմ ներկայացնելը:
Առաջին դեպքում (միայն դերբայով տրոհումը) չունենք
որևէ հիմնավորում. հեղինակները բերում են ընդամենը 2.
Թումանյանի խոսքից քաղված այդ օրինակը՝ առանց բա-
ցատրության՝ օրինաչափ համարելով անորոշ դերբայի
գործիական հոլովով ձևի պարագայի տրոհումը, ինչպես՝
«Տերևները դողդողում էին, դեղնում ու իրանց-իրանց թափ-
վում և **թափվելով**՝ տխուր շրշում»: Երկրորդ դեպքում կա՛մ
դարձյալ որևէ բացատրություն չի տրվում, և բերվում են
նմուշներ դասականներից («Վրնջում էին ձիերը՝ մետաղա-
ձայն ու երկարածոր», «Դրսում բռռաչեց մի կով՝ թավ ու
երկար» (Ա. Բ.)), կա՛մ կետադրությունը պատճառաբանվում
է նաև իմաստային շփոթության հիմքով, սակայն դա հա-
մոզիչ չէ, քանի որ այդպիսի շփոթության վտանգ, ինչպես
բերված օրինակում կտեսնենք, բնավ գոյություն չունի.
«Նրա թավ, ձերմակ բեղերը ցնցվեցին՝ **փոքրիկ թռչնի թևերի
նման**»³⁹:

Այսպիսով՝ գրական լեզվի զարգացմանը զուգահեռ՝ կետա-
դրական նշանների գործածության մեջ ձևավորվում են զու-
գաձևություններ, որոնք ժամանակ առ ժամանակ քննարկե-
լու և դրանց վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ մշակելու
անհրաժեշտություն է առաջանում: Այդ սկզբունքները մշակե-
լիս պետք է խուսափել խստորոշ կանոններ սահմանելուց. կե-
տադրական այն տարբերակը, որ չի խաթարում շարադրանքի
բովանդակությունը և չի հակասում ընդունված հիմունքներին
ու նորմերին, պետք է համարել զուգաձևություն:

³⁹ Տե՛ս **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի
կետադրություն, Եր., 2010, էջ 40-42:

ԳԼՈՒԽ 3.

ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարակարծություններն առաջ են գալիս հիմնականում հետևյալ պատճառներով. երբ նույն երևույթի գնահատման հիմքում դրվում են կամ առաջնային են համարվում կետադրական տարբեր հիմունքներ (տրամաբանական-իմաստային, հնչերանգային և շարահյուսական), սա առաջին, և երկրորդ՝ երբ կետադրությունը մատուցվում է խիստ անհատական մոտեցմամբ՝ առանց քերականական կամ տրամաբանական պատճառաբանվածության⁴⁰: Մենք քննար-

⁴⁰ Ինչպես, օրինակ, հետևյալը. «...մեկ բառով արտահայտված բացահայտիչից հետո էլ որոշ դեպքերում կարելի է ստորակետ չդնել*Ինքը՝ Լուսավորիչը հայածվեցավ*» (տե՛ս **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի շարահյուսություն, Եր., 1986, էջ 170). որևէ կերպ չի բացատրվում՝ ինչ ասել է՝ **որոշ դեպքերում**: Մեկ այլ ձեռնարկում կարդում ենք՝ կապային կապակցություններով ժամանակի պարագայի կետադրությունը «կախված է խոսքային պայմաններից և այլ հանգամանքներից» («Ինչքան դյուրիչ է կյանքը՝ մահն այնպես մոտիկից զգալուց հետո»). ակնարկվող պայմանների մասին բացատրություն չկա: Կամ՝ ասվում է, որ վերջադաս դիրքում նաև պատճառի և պայմանի պարագաները «անհրաժեշտ հնչերանգի դեպքում» կարող են տրոհվել. «Մենք հանձն կառնենք կատարել այդ դժվարին գործը՝ աշխատավարձը ժամանակին վճարելու պայմանով»): դարձյալ առանց մեկնաբանության (տե՛ս **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Եր., 2010, էջ 45, 60): Եվ կամ՝ «**Հազվադեպ (ընդգծումը, - Յու. Ա.)** տրոհվում է նաև ծավալուն դերբայական դարձվածով կազմված ենթական, երբ գործածվում է անորոշ առումով: *Հասարակության մեջ ապրել և հասարակությունից դուրս գործել՝ հնարավոր չէ*» (տե՛ս **Դարբինյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., 1990, էջ 144):

կելու ենք միայն առաջինները, այսինքն՝ այն դեպքերը, որոնք արգասիք են ոչ թե խիստ անհատական (սուբյեկտիվ) մոտեցման, այլ մասնագիտական տարբեր մոտեցումների և մեկնաբանությունների: Դրանք մեր տպավորություններն են:

1) **Անուղղակի մեջբերվող խոսքում հարցական դերանունով արտահայտված անուղղակի հարցումը** գրավոր խոսքում սովորաբար կետադրական արտահայտություն չի ունենում. դերանվան վրա որևէ նշան չի դրվում («Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում / Որն է լավ, որը՝ վատ»): Երբեմն, սակայն, գրավոր խոսքում անուղղակի հարցումը արտահայտվում է շեշտի նշանով («Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում / Ո՞րն է լավ, ո՞րը՝ վատ»): Քերականության առանձին գրքերում, սակայն, հանձնարարվում է միայն առաջինը՝ առանց առոգանության որևէ նշանի տարբերակը: Շեշտի գործածությունը, կարծում ենք, միանգամայն տրամաբանական է անուղղակի հարցման պարագայում և ճիշտ է արտահայտում նաև բանավոր խոսքի հնչերանգը. դերանունը արտասանվում է որոշակիորեն բարձրացող և ընդգծված առոգանությամբ: Կետադրության նշանների գործածության որևէ հիմունքով չի արգելվում շեշտի գործածությունը՝ որպես առոգանական կամ հնչերանգային զուգաձևություն: Ի դեպ, հայոց լեզվի գործող դասագրքերում խնդիրը կարծես թե ճշգրտված չէ: Հինգերորդ դասարանի հայերենի դասագրքում շեշտադրվող իրողությունների շարքում երևույթը մատնանշվում է. «...կան բառեր և ձևեր,- կարդում ենք դասագրքում,- որոնք հատկապես ուժեղ են շեշտվում. դրանց շեշտը գրեթե միշտ դրվում է: Դրանք են՝ գ) **թե-ից** հետո եկող **ե՛րբ, որտե՛ղ, ո՛ւր, ո՛վ, ո՛ր, ի՛նչ, ինչպե՛ս, ինչո՛ւ, որքա՛ն** բառերը (օրինակ՝ *Չգիտեի՞նք, թե ի՛նչ էր ուզում մեզա-*

նից)»⁴¹: Ութերորդ դասարանի հայոց լեզվի դասագրքում թեև չի նշվում այս դեպքը, սակայն շարադրանքում որպես կանոն այդ գործածությունը արձանագրվում է, ինչպես՝ «...որոշի՛ր, թե կապերը ո՛ր հոլովի հետ են գործածվում», «Բացատրի՛ր՝ տեքստում ինչո՛ւ են ընդգծված **յուր, իրանց, ահյակ** բառերը», «Նշի՛ր, թե քանի՛ պարզ նախադասություն կա տրված բարդ նախադասություններից յուրաքանչյուրի կազմում», «...ենթակայի դիմաց նշի՛ր՝ ինչո՛վ է արտահայտված» և այլն⁴²:

2) Առանձին ձեռնարկներում խոսվում է այսպես կոչված **բայական բացահայտչի** (բացահայտչի այն տեսակը, որը... բայական անդամ է, այսինքն՝ նախադասություն) նոր կետադրության մասին. առաջարկվում է տրոհել բուրժով, քանի որ միջակետով տրոհումը խոսքը դարձնում է կցկտուր, քերականորեն սխալ կապակցված: Այսպես՝ «Առաջին պահ արտառոց կթվա, եթե զուգահեռը շարունակվի՝ Կոմիտասը կոչվի նաև քաղաքագետ»⁴³:

Կետադրական այս կանոնի անպայման կիրառությունը նախ՝ հավելյալ ենթակետով ծանրաբեռնում է բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների՝ միջակետով տրոհման կանոնը և կարող է շփոթության առիթ տալ ու անհարկի դժվարություններ / բազմաձևություններ ստեղծել, ինչպես՝ «Առաջին պահ արտառոց կթվա, եթե զուգահեռը շարունակվի.(.) Կոմիտասը կոչվի նաև քաղաքագետ»: Բացի այդ, կանոնական քերականության մեջ կարծես հստակեցված է այն սկզբունքը, որ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները, շա-

⁴¹ Գյուրջինյան Դ. և այլք, Մայրենի, 5-րդ դասարան, Եր., 2015, էջ 169:

⁴² Տե՛ս Բարսեղյան Հ., Մեթոդիկանյան Փ., Հայոց լեզու (դասագիրք 8-րդ դասարանի համար), Եր., 2012, էջ 46-47, 75, 81:

⁴³ Ջաքարյան Հ., նշվ. աշխ., էջ 25:

րահյուսական հարաբերության բնույթով պայանավորված, կարող են տրոհվել ստորակետով կամ միջակետով («Չի վերադառնա. այդպես է եղել մեր պայմանավորվածությունը»: «Խոսե՛ք, Ձեզ չեն խանգարում»): Բուրթի գործածությունը վերապահվում է միմիայն շաղկապի զեղչման դեպքերին, ինչպես՝ «Ասում են՝ (թե) ուտին աղջիկ էր ինձ պես»:

Բուրթի այդօրինակ գործածության ներմուծումը միգուցե և քերականորեն մասամբ պատճառաբանված է (քերականական-իմաստային առումով գործ ունենք բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության հետ), սակայն դա պահանջում է լրացուցիչ գիտելիքներ (ներմուծվում է նոր հասկացություն՝ **բայական բացահայտիչ**), որոնք հանրակրթական դպրոցներում չեն մատուցվում, և դրա անհրաժեշտությունն էլ, կարծում ենք, չկա: Սա այն դեպքերից է, երբ անհարկի «քերականացվում են» կետադրական կանոնները: Ավանդաբար գործող կետադրությունը այս դեպքում նախընտրելի է ու նաև քերականորեն պատճառաբանված:

3) Այսպիսով, ասենք, օրինակ, դիցուք, ավելին, մի խոսքով, այսպես և բացահայտման այլ բառեր տրոհվում են սկզբից ստորակետով, վերջից՝ բուրթով: **Օրինակ** բառի համար առաջարկվում է նաև միջակետով տրոհումը («Նախադասությունը կարող է կազմված լինել նաև մեկ բառից: **Օրինակ**. Մթնեց»): Մեկնական այս բառի առանձնացումը չունի որևէ հիմնավորում. պարզապես բանավոր խոսքի համեմատաբար տևական դադարի գրավոր արտահայտություններից է, հետևաբար նույն վերապահությունը կարելի է անել նաև նույն կարգի մյուս բառերի համար, եթե դրանք բանավոր խոսքում արտասանվում են տևական դադարով: Ավելին, բացահայտական բառերի համար (օրինակ, ավելին, այսպիսով, այսպես) կարելի է ընդունելի համարել նաև վերջակետի գործածությունը, երբ դրանց հաջորդում է երկարատև

դադար: **Այսպես.** «Գործոնները բազմազան են: **Ավելին:** Դրանք խստորեն պատճառաբանված են»: Թեև պիտի ասել, որ վերջակետի գործածությունը այս դեպքում ձեռք է բերում ավելի շատ ոճական արժեք՝ ընդգծելու համար իրողությունը, փաստարկումը, հաղորդվող տեղեկույթը կամ այլինչ: Բոլոր դեպքերում, եթե նշված բացահայտման բառերը նախադասության սկզբում են, այսինքն՝ հաջորդում են նախորդ նախադասության վերջակետին, ստորակետից և միջակետից բացի՝ կարող են տրոհվել նաև վերջակետով, եթե դրանց հաջորդում է նախադասությամբ/նախադասություններով ծավալուն բացատրություն: **Օրինակ:** *Միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի և լեզվական ակնհայտ ընդհանրությունների մասին է վկայում մեր լեզվի երկու ճյուղերը «սահմանագատող» հնչյունային, բառային և քերականական փաստերի ամենապարզ համադրությունն անգամ:*

Այսպես: *Միջին հայերենում առկա է գրական արևմտահայերենին հատուկ հնչյունական-հնչյունափոխական բոլոր երևույթների աստիճանական զարգացումը: Ըստ որում, դրանք ձևավորվում են կամ գրաբարի ուշ շրջանում և կամ վաղ միջնադարում: Ինչպես, օրինակ՝ ա-ի սղումը....:*

Ավելորդ չենք համարում մի ծավալուն օրինակ բերել «Առավոտ» օրաթերթից. «Այլերկրացի «դեզեներատ» բառը այլաբանություն է ընդամենը և այլնայլ իմաստներ պետք է փնտրել այլուր: **Այսպիսով:** Մեծարգո Դատարան, եթե Դուք ենթարկվեք որոշ դեզեներատների ճնշմանը և **դեզեներատ** բառը հայտարարեք վիրավորական, ապա այն կարող է դուրս մղվել մեր բառապաշարից և գործածվել միայն հատուկ արտոնագիր ունեցող բժիշկների կողմից՝ որպես դիագնոզ» (2002.03.02):

4) Միության գծիկով հարադրավոր բարդությունների տղադարձի ժամանակ, երբ ենթամասն նույնացվում է միու-

թյան գծիկին, հաջորդ տող է տեղափոխվում երկրորդ բաղադրիչը առանց միության գծիկի: Կարծիք կա, որ նույնացումը կանխելու համար նպատակահարմար է միության գծիկը տանել հաջորդ տող⁴⁴: Մեր տպավորությամբ՝ դա անհարկի ծանրաբեռնում է գրավոր խոսքը, եթե գրության այդ ձևը չունի հատուկ նպատակադրում, ասենք, օրինակ՝ թելադրություններում կամ պարզապես ուղղագրական գիտելիքները ստուգող աշխատանքներում:

5) Կախման կետերի (երեք կետ՝ ...) և բազմակետերի (չորս կամ ավելի կետեր՝) տարբերակված կիրառությունը որոշակի է. առաջինը նշում է հեղինակային չդրսևորված հույզ, զգացմունք («Շատ եմ ափսոսում, բայց...»), մյուսը դրվում է խոսքի որևէ հատվածը, բառը կամ բառակապակցությունը անավարտ թողնելու, մեջբերման կրճատված մասի տեղում («- Դրանք հայտնի փաստեր են, - գրում է հեղինակը, -այլ տեղեկություններ ես չունեմ....»):

Վերջին շրջանում միտում է նկատվում խախտելու կախման կետերի և բազմակետերի գործածության տարբերակվածությունը, նույնիսկ փորձեր են արվել տեսականորեն հիմնավորելու այդ իրողությունը: Ս. Աբրահամյանը սկզբունքորեն մերժում է այս կարգի ոչ գիտական մոտեցումները, որոնք տեսական և գործնական հարցերում կարող են հանգեցնել էական սխալների, և բերում է հիմնավոր փաստարկներ իր տեսակետը հաստատելու համար: Ավելորդ չենք համարում դրանք ներկայացնել ստորև.

ա) Բազմակետով նշվում է մեջբերման որևէ մասի, բաղադրիչի կրճատված լինելը, իսկ կախման կետերի միջոցով հեղինակը ընթերցողին մղում է զգալու, ապրելու չդրսևորված հույզ, զգացմունք, մտորում:

⁴⁴ Ջաքարյան Հ., նշվ. աշխ., էջ 47:

բ) Բազմակետը գործածվում է միայն մեջբերվող, իսկ կախման կետերը՝ թե՛ հեղինակային, թե՛ մեջբերվող խոսքում:

գ) Բազմակետի դեպքում կրճատված մասը տվյալ պարագայում ավելորդ է համարվում ընթերցողի համար, իսկ կախման կետերով հեղինակը ոճահաղորդակցային նպատակ է հետապնդում:

դ) Բազմակետը հիմնականում գործածվում է գիտական ոճում, մինչդեռ կախման կետերը գործածվում են գերագանցապես գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում:

ե) Բազմակետը արտասանական նշանակյալ չունի, իսկ կախման կետերը կիրառությունների մեծ մասում ունեն. երբ հույզը, մտածումը լրիվ չի արտահայտվում, ասելիքը մնում է առկախ, անավարտ, դա արտաբերվում է որպես նախադասության կամ նրա որևէ մասի չավարտվածության նշում⁴⁵:

Բազմակետերը և կախման կետը պայմանավորում են որոշակի և տարբեր կետադրական «միջավայրեր»:

Կախման կետերից հետո վերջակետ չի դրվում. այն ունի վերջակետի արժեք, շարունակությունը սկսվում է մեծատառով: Եթե խոսքը առնված է չակերտների մեջ, ապա երկու դեպքում էլ վերջակետը դրվում է. *Մտածում էր. «Ի՞նչ պիտի անեն...»:* «Այլ բացատրություններ չկան...»:

Բազմակետերի դեպքում, եթե դրանց հաջորդում է կիսատ նախադասություն, շարադրանքը սկսվում է փոքրատառով (*Հիշում եմ այդ տողի վերջին երկու բառերը. «...անուշադրության մատնելով»*), նոր նախադասության դեպքում՝ մեծատառով (*Քառատան վերջին տողերը հետևյալն են. «...Հե-*

⁴⁵ Արթուրյան Ս., նշվ. աշխ., էջ 12-13:

տո կամաց-կամաց / Յավով մեր շողշողուն / Որպես կորած տեսիլք / Մենք կթաղվենք հողում»):

Վերջադաս բազմակետը փոխարինում է վերջակետին.

*Յուրաքանչյուր բացվող առավոտվա
Կամ իմ տեսած յուրաքանչյուր երազի մեջ....*

Երկակի կետադրություն ունեն այն կառույցները, երբ կախման կետերին կամ բազմակետերին հաջորդում է բառով կամ բառախմբով կամ անվան տառ(եր)ով արտահայտված և փակագծերում առնված հեղինակի անունը. կախման կետերից հետո, ինչպես նշվեց, վերջակետ չի դրվում, իսկ բազմակետերից հետո կարող է դրվել ըստ անհրաժեշտության, այսպես՝

- Դրանք հայտնի փաստեր են, - գրում է հեղինակը, -այլ տեղեկություններ ես չունեմ....:

«Մի՛ գանահարիր արդեն ընկածիս...» (Նարեկացի): / «Մի՛ գանահարիր արդեն ընկածիս, / Գայթակղվածիս կործանման մի՛ տար...» (Նարեկացի):

Միօրինակացման համար կարելի է նշված բոլոր գործածություններում և՛ կախման կետերի, և՛ բազմակետերի դեպքում վերջակետը դնել (*Մի՛ գանահարիր արդեն ընկածիս....: Մի՛ գանահարիր արդեն ընկածիս, / Գայթակղվածիս կործանման մի՛ տար....: Շատ եմ ափսոսում, բայց...:*)՝ բացառությամբ բազմակետերի գործածության այն դեպքի, երբ նախադասությունը կեսից շարունակվում է (*Շատ եմ ափսոսում, բայց... դու այդ մասին գիտեիր*):

Ակնհայտ անմիօրինակություն կա կախման կետերին / բազմակետերին նախորդող կամ հաջորդող խոսքը նախադասության հիմնական մասից **բացատրով** առանձնացնելու մեջ: Խոսքի կտրտվածությունից խուսափելու և միօրինա-

կուրթյան համար կարելի է չօգտագործել բացատր. կախման կետերը գրել նախադասության այն անդամին կցված, որին անմիջականորեն հաջորդում-լրացնում է, իսկ բազմակետերը՝ նախադասության այն բաղադրիչին, որին անմիջականորեն վերաբերում է (այսինքն՝ կրճատված հատվածին), ինչպես՝ «Չանցած մի վայրկյան՝ սարսռեցնող մի ոռնոց լավեց թփուտների միջից. գայլերի ոհմակը շրջապատեց մեզ...»: «Ճաշից հետո Հայկը մտավ փոստի բաժանմունք. պետք է նամակ գրեր որդուն.....: Ծոցատետրից թուղթ պոկեց...»: «-Խնդրում եմ, շարունակիր պատմել մինչև քնելս, - տատիկին ընդդիմացավ փոքրիկը»:

6) **Թվարկում արտահայտող բառերի և բառակապակցությունների (նախ, ապա, հետո, մի կողմից, մյուս կողմից, առաջին, երկրորդ, վերջապես և այլն) վրա** դրվում է բուրք. «**Մի կողմից**՝ լարված իրավիճակը, **մյուս կողմից**՝ միայնակությունը նրան ստիպում էին անկանխատեսելի քայլերի դիմել»⁴⁶: Երբեմն առաջարկվում է բուրթի փոխարեն դնել ստորակետ, եթե հաջորդում է շաղկապով սկսվող երկրորդական նախադասություն. «Մենք հաջողության կհասնենք **նախ**՝ համախմբվածությամբ, **երկրորդ**, եթե պետությունը մեզ թիկունք կանգնի, **երրորդ**, եթե առավելագույնս ներդնենք մեր նյութական ու մտավոր ներուժը...»⁴⁷: Կարծում ենք՝ այսօրինակ տարբերակվածությունը պատճառաբանված չէ և ավելորդ ենթակետով ծանրաբեռնում է կետադ-

⁴⁶ Հիշենք, որ սրանցից տարբեր են ժամանակային հաջորդականություն արտահայտող **նախ, ապա, հետո** և տարածական հարաբերություն արտահայտող **մի կողմից, մյուս կողմից** բառերն ու արտահայտությունները, որոնք ինքնին տրոհում չեն պահանջում: Օրինակ՝ «**Նախ** պիտի ճշտեք ձեր հնարավորությունները, **ապա** հանդիպեք գործընկերների հետ, **հետո** անցնեք անհրաժեշտ գործողությունների»: «**Մի կողմից** պարսից գորբն էր գրոհում, **մյուս կողմից** բյուզանդական հզոր բանակն էր»:

⁴⁷ Տե՛ս **Զաքարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 58-59:

րությունը, քանի որ խոսքի ընդհանուր կառուցվածքը ստորադասական շաղկապներով կառույցների պարագայում չի փոխվում, և թվարկում արտահայտող բառերի գործառույթը սկզբունքորեն փոփոխություն չի կրում: Այսպես՝ «Մենք հաջողության կհասնենք **նախ**՝ համախմբվածությամբ, **երկրորդ**՝ եթե պետությունը մեզ թիկունք կանգնի, **երրորդ**՝ եթե առավելագույնս ներդնենք մեր նյութական ու մտավոր ներուժը...»: Ըստ որում, բուրթի փոխարեն ստորակետի գործածությունը չի համապատասխանում նաև ձևակերպված կանոնին («Եթե տրոհվող միավորին հաջորդում է դրա մեջ չներառված մեկ այլ տրոհվող միավոր, ապա գերակա է հաջորդող միավորի պահանջած կետադրությունը»)⁴⁸, քանի որ տրոհվող միավորին հաջորդում է դրա մեջ ներառված համարժեք միավոր՝ որպես թվարկվող բաղադրիչներից մեկը⁴⁹: Եվ, ի վերջո, խախտվում է կետադրական միօրինակությունը. թվարկվող երկու բաղադրիչները տրոհվում են բուրթով, իսկ երրորդը՝ շաղկապով սկսվող համասեռ բաղադրիչը՝ ստորակետով:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 87:

⁴⁹ Այլ է վերջից բուրթով տրոհվող զիջման, հիմունքի, նպատակի պարագայի, բացահայտիչին հաջորդող վերջադաս տրոհվող դերբայական դարձվածի, հետադաս տրոհվող որոշչի, առաջադաս տրոհվող դերբայական դարձվածին հաջորդող տրոհվող ներդրյալ միավորի և այլ նման իրողությունների պարագան, որոնցում գերակա է հաջորդող միավորի պահանջած կետադրությունը, ինչպես՝ «Դուք ամեն անգամ պիտի կրկնեք, **իհարկե՛ն**՝ հեռացեք», «Չնայած մեր պահանջին, որ թիմերը համատեղ հանդես գան,՝ խաղերը այլ կերպ ընթացան», «Ներս մտավ Վահանը՝ մեր հին ծանոթը՝ փոքր-ինչ շփոթված ու հուզված, և արագ տեղավորվեց առաջին շարքերում», «Փորձիր հասկանալ, սիրելի՛ս՝(.) նրա մտքինն ինչ է», «Չիմանալով, որ իրեն նկատել են,՝) շարունակում էր թաքնվել», «Ըստ կանխատեսումների,՝) պարոնայք, վաղը լարվածությունը շարունակվելու է», «Ըստ մեր ծրագրի,՝) եթե նոր խոչընդոտներ չծագեն, հաղթանակը մերը կլինի»:

7) **Հայերենի շարահյուսական համակարգում ունենք նույնատիպ կառույցներ, որոնց համար սահմանվում է նույն կետադրությունը:** Այդպիսիք են, օրինակ, բարդ նախադասության երկու բաղադրիչները միացնող շաղկապին հաջորդող տրոհվող դերբայական դարձվածը, շաղկապին հաջորդող նախադասության կամ նախադասության բաղադրիչի սկզբում գտնվող հիմունքի կամ զիջման պարագան, **բացի, առանց, զատ** կապերով կապակցությունները:

Նորմատիվ քերականությամբ առաջարկվում է այդ կառույցները անջատել թե՛ վերջադասի, թե՛ միջադասի կանոններով, այսինքն՝ տրոհել թե՛ բույծով, թե՛ ստորակետերով. «Եկավ և հարգալից գլուխ տալով՝ նստեց իր տեղը»: / «Եկավ և, հարգալից գլուխ տալով, նստեց իր տեղը»: Կամ՝ «Գիտեր այդ մասին և(,) ըստ պայմանավորվածության(,) վաղ առավոտյան պիտի մեկներ», «Ուշ աշուն էր, բայց(,) հակառակ մեր սպասածի(,) ամռան ջերմություն կար արևի շողերում», «Երկար սպասեցինք, սակայն(,) բացի մեզանից(,) ոչ ոք չեկավ»:

Միջադասի կանոնով տրոհումը հիմնավորվում է այն փաստարկումով, որ նշված կառույցները կարող են դիտարկվել ամբողջ նախադասության կամ բարդ նախադասության տեսակետից⁵⁰: Այս գուգաձևությունը դերբայական դարձվածի պարագայում կարող է տարակարծությունների տեղիք տալ այն տրամաբանությամբ, որ նախ՝ միջադաս դերբայական դարձվածը չի սահմանվում որպես շաղկապի և նախադասության այլ անդամ(ներ)ի միջև ընկած շարահյուսական միավոր և չի կարող դիտարկվել ամբողջ բարդ նախադասության տեսակետից, քանի որ անմիջականորեն լրացնում է հաջորդող նախադասությանը: Եվ երկրորդ (սա վերաբե-

⁵⁰ Տե՛ս **Զաքարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 222:

րում է վերը նշված նույնատիպ երկու կառույցներին էլ՝ և՛ հիմունքի ու զիջման պարագաներին, և՛ դերբայական դարձվածին)՝ ստորակետերով տրոհումը նույնատիպ այլ կառույցներում չի հանձնարարվում, ինչպես՝ «Մտավ բակ: Բայց տեսնելով մեզ՝ վերադարձավ»: Կամ՝ «Ուներ բողոքարկելու իրավունք: Սակայն համաձայն գործող օրենսդրության՝ դա կարող էր իրականացվել դատավճիռը ուժի մեջ մտնելուց երկու օրվա ընթացքում»:

Այս փաստարկումները, սակայն, առավելաբար մասնագիտական բովանդակություն ունեն: Մովորական լեզվակիրառողի գործը ավելի դյուրին դարձնելու համար կարելի է թույլատրելի համարել նաև ստորակետերով տրոհումը՝ ըստ բանավոր խոսքի ելևէջումների և դադարների:

Սա հիմնավորվում է և՛ շարահյուսական, և՛ հնչերանգային, մասամբ նաև տրամաբանական-իմաստային հիմունքներով: Ունենք շարահյուսական որոշակի կառույց, որն առանձնանում է արտասանական ընդգծված դադարներով: Իմաստային տեսակետից էլ ենթական և ստորոգյալով կառույցը կազմում են մեկ միասնական ամբողջություն. դերբայական դարձվածով մի տեսակ լրացական՝ հավելյալ տեղեկություն է հաղորդվում: Եվ վերջապես՝ տասնամյակներ շարունակ և ավանդույթի ուժով գործել է միջադաս դերբայական դարձվածի համար ընդունված և ընկալելի կետադրություն՝ տրոհումը ստորակետերով: Այս բոլորը հիմք են տալիս պաշտպանելու մասնագիտական գրականության մեջ ընդունված և գրավոր խոսքում արտահայտված տեսակետը:

Նշված կառույցներում ընդունելի համարելով բուրժով կամ ստորակետով տրոհումը՝ այնուամենայնիվ խիստ վերապահություն է արվում այն դեպքի համար, երբ շաղկապի փոխարեն առկա է շաղկապական բառ, որը նախադասության անդամ է և դերբայական դարձվածի կազմում չէ, այս-

ինքն՝ դերբայական դարձվածը համարվում է միջադաս և երկու կողմից պետք է տրոհվի ստորակետերով, ինչպես՝ «Կինը անհանգիստ նայեց ամուսնուն, որ, բազմոցին նստած, ննջում էր»⁵¹: Կարծիք կա, որ հարաբերական դերանունով կառույցներում կարելի է թույլատրելի համարել դերբայական դարձվածների՝ նաև բուրժով տրոհումը, ինչպես՝ «Հյուրերը, որ պատշգամբից հեռանալով՝ մոտեցել էին սանդուղքին....»: «Բարձունքին ծերուկ հովիվն է, որ կոթնած իր հին ձեռնափայտին՝»: «Կետադրության այսպիսի երկակիությունը, կարծում ենք, նախ ունի քերականական հիմնավորում,- գրում է Լ. Թեյլանը,- համապատասխանում է **որ** բառի գործառական երկակի արժեքին (նկատի ունի **որ** բառի հարաբերական և շաղկապական գործառույթները,- **Յու. Ա.**), ապա և չի հակասում հայերենի կետադրության տրամաբանությանը՝ կառույցի առոգանական նկարագրի տեսակետից»⁵²: Այս մոտեցմամբ՝ սովորական լեզվակիրառողի համար ավելի դյուրին կլինի կողմնորոշվել լեզվաբանի բնորոշմամբ «անցումային» բնույթի այնպիսի կառույցները կետադրելիս, որոնցում **որ** բառի դերանվանական իմաստը ակնհայտորեն «նահանջել» է, ինչպես՝ «Դուք, **որ դիմադրության չհանդիպելով**, հասաք հաջողության, պարտավոր եք հաշվի նստել հանրային կարծիքի հետ»: // «Դուք, որ, **դիմադրության չհանդիպելով**, հասաք հաջողության, պարտավոր եք հաշվի նստել հանրային կարծիքի հետ»: «Մենք, որ, անընդհատ աջակցելով, փորձել ենք քեզ դարձի բերել, մի՞թե այդ վերաբերմունքին ենք արժանի»: // «Մենք, որ անընդհատ աջակցելով՝ փորձել ենք քեզ դարձի բերել, մի՞թե այդ վերաբերմունքին ենք արժանի»:

⁵¹ Տե՛ս նույն տեղը:

⁵² **Թեյլան Լ.**, *Որ*. շաղկապ, թե՞ դերանուն, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2016, № 2(15), էջ 30:

8) Եթե **հատկացուցիչը և հատկացյալը** ընդմիջվում են առարկայանիշ դերանունով, ապա հատկացուցչի վրա բուրբ կարող է դրվել կամ չդրվել, ինչպես՝ *Վահանի(՝) նրան ուղարկած ծաղիկները զգլխիչ բուրմունք ունեին*:

Կա կարծիք, որ նախընտրելին բուրբ չդնելն է, քանի որ «հատկացուցիչներն այդ դերանուններին չեն վերագրվում, և իմաստային շփոթ չի առաջանում»⁵³: Մեր կարծիքով՝ նախընտրելի է բուրբով տարբերակը, քանի որ բանավոր խոսքում առաջանում է որոշակի դադար, որը, ենթադրվում է, իր կետադրական արտահայտությունը պիտի ունենա գրավոր խոսքում: Այսինքն՝ ելակետ պիտի ունենալ ոչ թե իմաստային-տրամաբանական հիմունքը, որը այստեղ ըստ էության չունի դերակատարություն, այլ հնչերանգայինը: Ի դեպ, հակառակ տեսակետի կողմնակիցները նույնպես ընդգծում են «արտասանական ելևէջումի առկայությունը» բանավոր խոսքում⁵⁴: Բոլոր դեպքերում, ընդունելով, որ այսպիսի կառույցներում իմաստային շփոթի վտանգ չկա, բայց կա առոգանական դադար, հետևաբար կարող են ճիշտ համարվել և՛ բուրբով, և՛ առանց բուրբի տարբերակները:

Տեսական գրականության մեջ սկզբունքորեն տարակարծություններ չկան, սակայն գործնականում կետադրական տարբերություններ են ծագում նաև այն դեպքում, երբ հատկացուցիչ և հատկացյալի միջև ընկած է հեղինակի անուն կամ տեղանուն: Պետք է պարզապես առաջնորդվել հետևյալ սկզբունքով. եթե այդ գոյական անունը հատկացյալի հետ կազմում է իմաստային մեկ ամբողջություն, այսինքն՝ անմիջականորեն վերաբերում է նրան կամ կապվում է նրա հետ՝ որպես տրամաբանական շարունակություն, ապա

⁵³ Տե՛ս Մարգարյան Ա., նշվ., աշխ., էջ 27:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը:

չպետք է տրոհվի («Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ նոր գրականության գեղագիտական հանգանակն էր»), իսկ եթե հեղինակի անուն չէ կամ հատկացյալի հետ իմաստային ամբողջություն չի կազմում, նրա տրամաբանական շարունակությունը չէ, ապա տրոհվում է («Գրականագետ Պ. Հակոբյանի՝ «Վերք Հայաստանի» վեպի բովանդակային-գաղափարական վերլուծությունները համոզիչ են»):

9) Ընդունված գուգաձևություններից է **հարցական դերանունն չպարունակող անուղղակի մեջբերվող խոսքում (արդյոք վերաբերականի առկայությամբ) հարցական նշան թե՛ դնելը, թե՛ չդնելը**. «Չգիտեի, թե մասնակցելո՞ւ ենք արդյոք հանդիսությանը»: Սակայն առանձին շարահյուսական բազմանդամ կառույցներում հարցական նշանի առկայությունը ճշգրտում է հարցման նշանակությունը, որոշակի է դարձնում հարցման առարկան, և հետևաբար դրա գործածությունը դառնում է նախընտրելի կամ պարտադիր, ինչպես առանց հարցական դերանվան սովորական հարցական նախադասություններում, հմմտ.՝ «Չգիտեի՝ արդյոք նրա՞ն պիտի տուն ուղեկցեի՞նք»: / «Չգիտեի՝ արդյոք նրան պիտի՞ տուն ուղեկցեի՞նք»: / «Չգիտեի՝ արդյոք նրան պիտի տո՞ւն ուղեկցեի՞նք»: / «Չգիտեի՝ արդյոք նրան պիտի տուն ուղեկցեի՞նք»:

10) Կետադրության որոշակի կանոն չի գործում նաև այն դեպքում, երբ բազմության թվարկվող տարրերից առաջ լինում է մասնավորեցում նշող սաստկական վերաբերական (այդ թվում, ընդ որում, մասնավորապես, հատկապես և այլն). դրանք երբեմն տրոհվում են բուրժով կամ ստորակետով, իսկ երբեմն էլ՝ ոչ, ինչպես՝ «Եկել էին շատերը, **այդ թվում՝** երիտասարդներ», «Ժամանել էին նաև արտերկրից, **մասնավորապես** Եվրոպայից», «Գործն ավարտեցի շատ արագ, **ընդ որում,** միայնակ»: Միօրինակություն հաստատելու համար մասնավորեցում նշող այսօրինակ վերաբե-

րականները կարելի է տրոհել բուժով՝ նկատի ունենալով ստորոգյալի զեղչման պարագան: Այսպես՝ «Եկել էին շատերը, **այդ թվում**՝ (եկել էին) երիտասարդներ», «Ժամանել էին նաև արտերկրից, **մասնավորապես**՝ (ժամանել էին) Եվրոպայից», «Գործն ավարտեցի շատ արագ, **ընդ որում**՝ (ավարտեցի) միայնակ», «Կարոտել էի բոլորին, **հատկապես**՝ (կարոտել էի) ծնողներին»:

Ձեղչման բուժը սովորաբար չի դրվում վերաբերականների (այն էլ, մանավանդ, նամանավանդ, մինչև անգամ, անգամ, նույնիսկ, մինչև իսկ), շաղկապական բառերի ու շաղկապների վրա, ներդրյալ միավորից առաջ կամ հետո, ինչպես՝ «Գիշերով չեմ ուզում ելնել, մանավանդ մենակ», «Նրան չէի սպասում, այլ քեզ», «Բոլորը,մինչև անգամ....»: Ձեղչման բուժը սովորաբար դրվում է **բայց, սակայն** ներհակական շաղկապների վրա, եթե դրանց հաջորդող թերի նախադասությունը արտահայտում է նախորդին հակասող միտք, ինչպես՝ «Փորձեցի ինչ-որ բան անել, բայց իզուր», «Շատ էր ուզում այդ գործը ավարտին հասցնել, սակայն՝ ոչ մենակ»:

Թերևս ելակետը շարահյուսական հիմունքն է. շաղկապի, շաղկապական բառի կամ վերաբերականի վրա ընդունված չէ բուժ դնել. դրանք լիիմաստ բառեր չեն, հետևաբար զեղչում որպես այդպիսին ըստ էության գոյություն չունի⁵⁵: Մա-

⁵⁵ Այս կարծիքի պաշտպաններից Ա. Սարգսյանը բերում է վերը նշված սկզբունքներով տարբերակվող հետևյալ օրինակները՝ «Նայեց ինձ, **ապա** ընկերոջը»: / «Նայեց ամուսնուն, **հետո** եղբորը». նշվում է, որ առաջին դեպքում նախադասությունները կապող **ապա** շաղկապի վրա բուժ չի դրվում, իսկ երկրորդ դեպքում **հետո** բառի վրա բուժը դրվում է, քանի որ լիիմաստ բառ է, և բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև «միավորական թվարկվող հարաբերություն չէ» (**Սարգսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 108): Նախ դժվար է համաձայնել, որ առաջին դեպքում գործ ունենք շաղկապի հետ (**ապա**-ն այստեղ, մեր տպավորությամբ, ունի նույն **հետո**-ի մակբայական իմաստը), և երկրորդ՝ արդյոք ք հավելյալ

կայն կենդանի խոսքում առկա ընդգծված դադարը գրավոր խոսքում հաճախ արտահայտվում է համապատասխան կետադրությամբ (հնչերանգային հիմունք), այսպես՝ «Գիշերով չեմ ուզում մեկնել, մանավանդ՝ մենակ», «Նրան չէի սպասում, այլ՝ քեզ», «Բոլորը,մինչև անգամ՝....», «Ազնվությունն ու անազնվությունը արքունիքի համար են, բայց ոչ հպատակներին»: Սա չի հանձնարարվում:

Ստորոգյալի զեղչման յուրահատուկ դեպք է այն, երբ զեղչված ստորոգյալի փոխարեն գործածվում է ժխտական իմաստով բառ՝ **ոչ, բնավ, երբեք, ոչ մի դեպքում** և այլն: Այս դեպքում նրան հաջորդող բառի վրա դրվում է բութ, եթե նա լիիմաստ բառ է: Ինչպես՝ *Մենք մեկնեցինք, իսկ նա՝ ոչ: Առաջին գումարտակը փոքր-ինչ դիմադրություն, այնուամենայնիվ, ցույց տվեց, երկրորդը՝ բնավ: Դու կարող ես մասնակցել ընտրություններին, ես՝ ոչ մի դեպքում:*

Նշված բառերից **ոչ**-ի առիթով Ա. Սարգսյանը այն կարծիքն է հայտնում, որ «Այս դեպքում բութ չդնելը թերևս ավելի ճիշտ է, քանի որ զեղչված ստորոգյալի փոխարեն այնուամենայնիվ գործածված բառ կա (**ոչ**)⁵⁶»: Մեկ այլ առիթով հավելում է, որ բութի նման կիրառությունը ճիշտ չէ, քանի որ վերաբերականները տրոհվում են ստորակետերով⁵⁷:

Նախ՝ կարծիքի հեղինակն ինքը խիստ վերապահությամբ է անում առաջարկը՝ ընդունելով, որ **ոչ**-ը ըստ էության «փոխարինում է զեղչված ստորոգյալի չ մասնիկին»: Ասել է թե, շարահյուսական տեսակետից իրապես գործ ունենք ստորոգյալի լրիվ զեղչման հետ: **Ապա**՝ հնչերանգային առումով

գիտելիքները չեն դժվարացնում կետադրությունից օգտվողի գործը, մանավանդ որ երբեմն նման մասնավորեցումները գործնական դժվարություններ են ստեղծում անգամ մասնագետների համար:

⁵⁶ Տե՛ս **Սարգսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 108:

⁵⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 64:

ունենք ակնհայտ դադար, որը տրամաբանորեն իր արտահայտությունը կարող է ստանալ գրավոր խոսքում: **Հետո**՝ բութի նման կիրառությունը նաև շատ տարածված է գրական գրավոր խոսքում: Դա ընդունում է նաև կարծիքի հեղինակը: **Եվ վերջապես**՝ այս մոտեցմամբ առկախ է մնում նույն՝ ժխտական իմաստ ունեցող այլ բառերի պարագան. չէ՞ որ դրանք նույնպես զեղչված ստորոգյալին փոխարինող բառեր են: Հետևաբար, կարծում ենք, առավել նպատակահարմար է այս դեպքում բութի գործածությունը համարել կանոնական, իսկ չկետադրվող տարբերակը՝ զուգաձևություն:

Ծանոթություն: Կարծում ենք՝ հնարավոր տարբերակ չպետք է համարել բութի գործածությունը բոլոր այն դեպքերում, երբ նախորդող բառը լիիմաստ չէ, շաղկապ կամ շաղկապական բառ է, վերաբերական և այլն, ինչպես «Պիտի համաձայնես **կամ՝ ոչ**»: «Միգուցե փորձենք նրա հետ հանդիպել ու բանակցել: **Բայց՝ ոչ**, դա նախընտրելի տարբերակ չէ»: «Խոսեցի նրա հետ, **սակայն՝ իզուր**. ոչ մի արդյունք»: «Դու ինձ հարցնում ես, թե այդ ճանապարհով հաջողության կհասնե՞նք: **Իհարկե՝ ոչ, բոլորովին, երբեք**»: Որևէ հիմունքով չմեկնաբանվող կետադրություն է, որը անհարկի ավելացնում է խոսքի կետադրական բեռը:

Կետադրական ուշագրավ զարգացումներ են արձանագրվում նաև **կամ** և **բայց** շաղկապների յուրահատուկ գործածություններում: **Կամ**-ը, հանդես գալով **օրինակ** (ևս մեկ օրինակ) մեկնական բառի նշանակությամբ, սովորաբար սրոհվում է բութով՝ ըստ էության փոխարինելով ենթադրվող **օրինակ**-ին, ինչպես՝

Փոխաբերությունը գեղարվեստականացնում, զարդարում է խոսքը: Օր.՝ Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան / Եվ արնոտ միզում ճարձատում են դեռ» (Ե2): Կամ՝ Ձեր երազան-

քի նավակները բախվել են իրականության ժայռերին ու ջարդուփշուր եղել:

Միջին հայերենի դերանվանական համակարգը այժմ է ընկնում հոլովական ձևերի բազմազանությամբ, այսպես՝ **մենք** դերանվան բացառականի տարբերակներից են՝ **ի մեզնե, ի մեզանե, մենե, մեզե, մեզնե, ի մենե**, կամ՝ **դու** դերանվան բացառականի տարբերակներից են **ի քեզնե, ի քեզմե, ի քեզե, ի քենե, ի քեզանե** և այլն:

Հիմք հասկացությունը հայերենում ունի տարբեր սահմանումներ. բառի այն ձևը, որին մասնիկ է ավելանում, կոչվում է հիմք, **կամ**՝ հիմքը բառ կամ բառաձև է՝ առանց վերջին քայլում ավելացած քերականական մասնիկի, **և կամ**՝ հիմքը բառի իմաստակիր այն մասն է, որը ձևակազմության կամ բառակազմության մեջ էլաձև է:

Բայց-ի հակադրական նշանակությունը երբեմն գուգորդվում է մեկնական նշանակությամբ, և այդ գուգորդումը ընդօժեյու համար երբեմն տրոհվում է բութով, օրինակ՝

Արևմտահայերենում **անցնել** ներգործական բայը իր չեզոք գուգահեռին հակադրելու համար հաճախ գրում են **ը-ով՝ անցրնել/անցնիլ**. «Առաջ կ'ուզես անցնիլ», **կամ**՝ «Եւ մինչ մարդիկ կը խնդան / Ու կ'անցնին ծանր հեգնութեամբ», **բայց**՝ «Անիկա ուրախ ժամանակ կ'անցրնե», «Այդ չորս տարիները կ'անցրնե ուսուցչութեամբ եւ գրական աշխատանքներով»:

11) Գրագրության զանազան ձևերում, ելույթներում ընդհանուր շարադրանքին նախորդող և այդ շարադրանքից **պարբերությամբ անջատված կոչականը** հաճախ տրոհում են ստորակետով, դրվում է նաև շեշտ (Միրելի՝ գործընկերներ,): Շեշտի գործածության խնդիրը այստեղ կարծես չի վիճարկվում, բայց ահա ստորակետի հարցը տարակարծությունների առիթ է տալիս: Առաջարկում ենք ստորակետ չդնել

(Միրելի՛ գործընկերներ ; Մեծարգո՛ նախագահ), **նախ**՝ որովհետև իրականում մենք գործ ունենք այսպես կոչված ձևական կոչականի հետ, որը պարբերությամբ բաժանված է մեծատառով սկսվող ընդհանուր շարադրանքից և ունի մի տեսակ վերնագրային արժեք, և **երկրորդ**՝ ստորակետը ծանրաբեռնում է տեքստը ավելորդ կետադրությամբ: Այսպես

Միրելի(՛) հայրենակիցներ

.....

Մեծահա(՛)րգ նախագահ

.....

Հարգարժա(՛)ն գործընկերներ

.....

12) Ներհակական **բայց, սակայն** շաղկապների այսպես կոչված գեղչումը կամ ենթադրվող բացակայությունը երբեմն արտահայտվում է բուրձով (Տուն գնացի՛ (բայց) տանը ոչ ոք չկար), որով մասամբ դրսևորում է ներհակական հարաբերությամբ կապակցված բաղադրիչ նախադասությունների՝ քանավոր խոսքին բնորոշ հնչերանգը: Պիտի նկատել սակայն, որ այդպիսի կետադրությունը խախտում է համագոր նախադասությունների համար ընդունված կետադրության միօրինակությունը և ստեղծում է կետադրական անհարկի բազմաձևություն: Հետևաբար այսպիսի դեպքերում բուրձի գործածությունը ճիշտ կլինի վերապահել գեղարվեստական խոսքին կամ առհասարակ ոճական կիրառություններին:

13) Ցանկում կամ շարադրանքում մեջբերված վերնագրի և ենթավերնագրի կամ վերնագրի մաս կազմող բաղադրիչի միջև դրվում է վերջակետ, եթե դրանք մտքով անմիջակա-

նորեն կապված չեն իրար հետ: Մա կանոնակարգված կետադրություն է: Մակայն հստակորեն սահմանված չէ վերջին բաղադրիչից / ենթավերնագրից հետո վերջակետ դնելը կանոնը: Եթե առաջին բաղադրիչը / վերնագիրը ավարտվում է վերջակետով, ապա շարունակությունը տրամաբանորեն նույնպես պիտի ավարտվի վերջակետով: Բայց այս դեպքում խախտվում է վերնագրից հետո վերջակետ չդնելու կանոնը, և անմիօրինակություն է ստեղծվում ցանկում եղած միաբաղադրիչ / ենթավերնագիր չունեցող վերնագրերի կետադրության հետ: Հետևաբար կարելի է առաջնորդվել հետևյալ սկզբունքով. եթե վերնագիրը / ենթավերնագիրը մեջբերված է ցանկում, ապա միօրինակությունը պահպանելու համար **կարելի է չդնել վերջակետը**.

Մոլեկուլների քառասյին շարժման արագությունը և մարմնի ջերմաստիճանը: Ջերմաչափ: Ջերմաստիճանային սանդղակ

Ցեղասպանությունը որպես հանցանք: Հայոց ցեղասպանությունը

Իսկ եթե մեջբերված է շարադրանքում, պետք է դնել՝

Բագրատունյաց տիրույթների ամբողջականության վերականգնումը: Արաս թագավորի օրոք Բագրատունիների թագավորության սահմանների վերաբերյալ պահպանվել է սահմանափակ նյութ, որի պայմաններում...

14) Փոխարինության (գիջման) **փոխանակ, փոխարեն, տեղակ, տեղ** կապերով (վերջին երկուսը բնորոշ են խոսակցական լեզվին) կապակցությունները չունեն կետադրական միօրինակություն. սովորաբար տրոհվում է **փոխանակ** կապը. առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բուրծով («Փոխանակ խոսելու՝ լռում էր», «Լռում էր՝ փոխանակ խոսելու»), իսկ միջադասում՝ ստորակետերով («Նա, փոխանակ խոսելու, լռում էր»), մինչդեռ **փոխարեն, տեղակ, տեղ** կապերը

սովորաբար չեն տրոհվում («Խոսելու փոխարեն լռում էր», «Նա խոսելու փոխարեն լռում էր», «Սրի տեղ ցույ էր ձեռքն առել»): Միօրինակության համար կարելի է փոխարինության բոլոր կապերի համար ընդունելի ճանաչել և՛ կետադրելը, և՛ չկետադրելը: Ըստ որում, հետադրություն կապերի դեպքում (փոխարեն, տեղ) թերևս նախընտրելի կարելի է համարել չտրոհելը:

15) Որոշ տարակարծություններ կան նաև կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում **տեղեկույթ պահանջող բառի կամ բառակապակցության** կետադրության հարցում: Ընդունված տեսակետն այն է, որ վերջինների վրա դրվում է բույթ, քանի որ դրանք ունեն մեկնական բառի նշանակություն: Այսպես՝ *Խմբագիր՝ Ա. Գևորգյան*⁵⁸: Այլ մոտեցմամբ՝ այդպիսիք դիտվում են որպես որոշիչ-որոշյալի կապակցություններ և ուստի չեն տրոհվում, ինչպես՝ *Խմբագիր Ա. Գևորգյան*⁵⁹: Կարծում ենք՝ առավել համոզիչ է առաջին բացատրությունը. բառակապակցության երկրորդ բաղադրիչը ունի տեղեկույթային նշանակություն: Բացի այդ, այս իրողությունը կարելի է համարել ստորոգյալի զեղչման յուրահատուկ դեպք, երբ անվանական թերի նախադասություններում (գլխական նկարագրություններ ու թվարկումներ, կապակցված խոսքից դուրս գործածվող վերնագրեր, տեղեկատու արտահայտություններ) առկա է ոչ վերջադաս ենթակա կամ ստորոգյալի լրացում, որի վրա էլ դրվում է բույթ՝ ստորոգում արտահայտելու համար: Եվ վերջապես՝ հայերենի կետադրության կանոններում և առավել ևս գործնական գրագրության մեջ ավանդաբար ընդունված է բույթով տարբերակը, ուստի կարծում ենք՝ հարկ չկա առանց խիստ անհրաժեշտության փո-

⁵⁸ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 44:

⁵⁹ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 116:

փոխություններ կատարելու կետադրության ավանդական և արդեն իսկ ամրագրված կանոններում:

17) Արդի արևելահայերենում ընդունված է, ինչպես բացահայտիչի մյուս տեսակների դեպքում, **մասնական բացահայտիչը** (ձևավորվում է **որպես, իբրև** կապերով) տրոհել բուրժով՝ *ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում Ղարաբաղի որպես բանակցային կողմի ներգրավման հարցը չպետք է լինի քննարկման առարկա*: Կա տեսակետ, ըստ որի՝ «Եթե մասնական բացահայտիչ-բացահայտյալ (ոչ թե բացահայտյալ-բացահայտիչ) կապակցությանը նախորդում է նրան չկապվող որևէ բառ կամ բառախումբ, ապա բացահայտիչը չի տրոհվում»⁶⁰: Այսպես՝ *Ուսուցիչը որպես պարտաճանաչ աշակերտի նրան հանձնարարեց նոր աշխատանք*: Տեսակետը հավանաբար ունի տրամաբանական-իմաստային հիմքեր. բուրժի առկայության դեպքում չկապվող բառ կամ բառախումբը կարող է ընկալվել մասնական բացահայտիչի բաղադրիչ՝ *Ուսուցիչը որպես պարտաճանաչ աշակերտի՝ նրան հանձնարարեց նոր աշխատանք*: Մեր համոզմամբ՝ նախ՝ այստեղ քերականական-իմաստային շփոթի վտանգ չի կարող լինել, քանի որ քերականական համաձայնությունը ակնհայտ է, և երկրորդ՝ նույնիսկ այդպես լինելու դեպքում բուրժի չգործածությունը հազիվ թե պիտի չեզոքացներ ենթադրվող վտանգը: Կա ընդամենը շարադասական որոշ անհարթություն, որը շտկվում է սովորական շարադասության դեպքում՝ *Որպես պարտաճանաչ աշակերտի՝ ուսուցիչը նրան հանձնարարեց նոր աշխատանք* (այս դեպքում բուրժի գործածությունը հանձնարարվում է): Եվ վերջապես, առավել ճշգրիտ լինելու և կետադրությունը պարզեցնելու համար (որպեսզի չունենանք անհարկի բազմաձևություն) կարելի է բոլոր նշված

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

դեպքերում պահպանել բուրժի գործածությունը, և որպես զուգահեռ տարբերակ՝ հնարավոր համարել նաև լրացում համարվող բառ կամ բառախումբը տրոհել ստորակետով, մանավանդ որ բանավոր խոսքում այդ բաղադրիչից հետո ունենք արտասանական դադար, այսպես՝ *Ուսուցիչը(,) որպես պարտաճանաչ աշակերտի՝ նրան հանձնարարեց նոր աշխատանք:*

18) **Նպատակի պարագան** ավանդաբար (համենայն դեպս՝ վերջին երկու-երեք տասնամյակներին) ունեցել է որոշարկված կետադրություն. վերջադաս նպատակի պարագայից առաջ դրվում է բուրժ, եթե այն անմիջաբար չի հաջորդում ստորոգյալին⁶¹: Եվ ապա՝ հետևյալ մասնավորեցումը. «Եթե վերջադաս նպատակի պարագան տրական հոլովով դրված անորոշ դերբայով (առանց կապի) դերբայական դարձված է, ապա տրոհվում է՝ անկախ վերը նշված հանգամանքից»⁶²: Այս ձևակերպման հեղինակ Ս. Աբրահամյանը որևէ ենթականոն չի սահմանում կապային կառույցներով հետադաս նպատակի պարագաների համար: Իսկ բերված օրինակներում **համար** կապով կառույցը («Ուշ երեկոյան գորախմբի հրամանատարները հավաքվեցին իշխանի վրանում՝ ամրոցի գրոհը նախապատրաստելու **համար**») ենթադրել է տալիս, որ առաջարկվում է առհասարակ նպատակի պարագա կապային բոլոր կառույցները տրոհել ընդհանուր կանոնով, ինչպես՝ «Ուշ երեկոյան գորախմբի հրամանատարները իշխանի վրանում հավաքվեցին՝ ամրոցի գրոհը նախապատրաստելու **համար**», կամ՝ «Ուշ երեկոյան գորախմբի հրամանատարները հավաքվեցին իշխանի վրանում՝ ամրոցի գրոհը նախապատրաստելու **նպատակով**», «Զին-

⁶¹ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 44:

⁶² Նույն տեղում:

վորներն ընկան մարտում՝ **հանուն** հայրենի հողի պաշտպանության» և այլն:

Այս տեսակետը փոքր-ինչ այլ ձևակերպմամբ պաշտպանում է Ա. Սարգսյանը. «Հետադաս նպատակի պարագաները միշտ տրոհվում են, եթե նպատակի պարագայի և նրա լրացյալ բայի միջև կա(ն) նպատակի պարագային չլրացնող անդամ(ներ)»⁶³: Բայց Սարգսյանը անում է մի վերապահություն, որը սկզբունքորեն տարբերվում է մինչ այդ ընդունված ձևակերպումից: Ըստ այդմ՝ «Հետադաս նպատակի պարագաները միշտ տրոհվում են, եթե նրանց նախորդում է շրջուն շարադասություն ունեցող օժանդակ բայով ստորոգյալ, որին լրացնում են (օժանդակ բայը կարող է զեղչված լինել)»⁶⁴: Այսպես՝ «Խանութ **էի գնացել**՝ հացի», «Փայտ **էին հավաքում**, տարբեր իրեր **պատրաստում**՝ շուկայում վաճառելու համար», բայց՝ «**Գնանք** պուրակում զբոսնելու», «**Ժամանել էր** գործերը կարգավորելու համար» և այլն:

Դպրոցական գործող դասագրքում նույն իրողության մասին տրվում է լրացուցիչ ևս մեկ բացատրություն, ըստ որի՝ եթե նպատակի պարագայի և նրա լրացյալ բայի միջև կա նպատակի պարագային լրացնող գոնե մեկ անդամ, ապա նպատակի պարագան չի տրոհվում, ինչպես՝ *Գնաց թարմ ջուր բերելու: Գնաց թարմ ջուր բերելու համար*⁶⁵: Այս բացատրությունը սկզբունքորեն մերժում է տրական հոլովով դրված անորոշ դերբայով (առանց կապի) դերբայական դարձված նպատակի պարագայի անպայման տրոհման պահանջը, որը սահմանվում է Ս. Աբրահամյանի կետադրության

⁶³ Տե՛ս **Սարգսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 40:

⁶⁴ Նույն տեղում, էջ 39:

⁶⁵ Տե՛ս **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, Եր., 2010, էջ 187:

ձեռնարկով⁶⁶: Այդ կարծիքը պաշտպանվում է նաև կետադրական մեկ այլ ձեռնարկում: Սահմանվում է հետևյալը. մեկ բառով, բառակապակցությամբ կամ դերբայական դարձվածով արտահայտված նպատակի պարագան չի տրոհվում, եթե հաջորդում է բայ-ստորոգյալին. այս տրամաբանությամբ՝ դերբայական դարձվածով նպատակի պարագան տրոհվում է միայն այն դեպքում, եթե բայ-ստորոգյալի և նրա միջև ընկած է լինում նախադասության որևէ այլ անդամ, ինչպես՝ «Նա գնաց հացի», բայց՝ «Նա գնաց խանութ՝ հացի», կամ՝ «Մենք, զենքը ձեռքներին, ելնում էինք պաշտպանելու այս երկիրը», «Այդ բազմությունը մրջյունի պես ջանք էր թափում ծռելու հեղեղի հոսանքը»⁶⁷: Մոտեցումը փորձ է արվում հիմնավորել նրանով, որ անմիջապես բայ-ստորոգյալին հաջորդելիս իբրև թե նպատակի պարագա դերբայական դարձվածը հնչերանգային դադարով չի առանձնանում⁶⁸: Հեղինակները առաջնորդվում են գերազանցապես հայ դասական գրականության լեզվական փաստերով:

Ա. Սարգսյանը իր սահմանած նոր կանոնը որևէ կերպ չի մեկնաբանում: Երևույթը, մեր կարծիքով, քերականորեն բավարար չափով պատճառաբանված չէ. ստորոգյալի՝ պարզ կամ բաղադրյալ դիմավոր ձևերով արտահայտված լինելը

⁶⁶ Առանձին ձեռնարկներում թեև չի խոսվում նպատակի պարագայի կետադրական նորմերի մասին, սակայն բերված օրինակները վկայում են կետադրական անմիօրինակության կամ սահմանված նորմերից ակնհայտ շեղումների մասին, ինչպես՝ «*Գումիտասը Մանթաշովի հովանավորությամբ գնաց Բեռլին սովորելու: Երեխաները իջան գետը լողանալու: Ընկերներով գնացինք ամառանոց՝ հանգստանալու և գետից ձուկ բռնելու:Աղջիկները գնացին դաշտ՝ ծաղիկ քաղելու: Վարագներն իջնում էին ջուր խմելու*» և այլն (տե՛ս **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2008, էջ 163):

⁶⁷ Տե՛ս **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, նշվ. աշխ., էջ 44:

⁶⁸ Տե՛ս նույն տեղը:

(ենթադրվում է, որ պարզ դիմավոր ձևերի դեպքում չի հանձնարարվում կետադրել) կամ օժանդակ բայի շարադասությամբ պայմանավորված լինելը կարծես հիմնավոր փաստարկներ չեն: Եթե հիմքում նկատի է առնվում առողանական դադարը, ապա օժանդակ բայի նախադաս և հետադաս կիրառություններում չունենք առողանական դադարի էական տարբերություն, հմմտ.՝ «Գնանք՝ պուրակում զբոսնելու»: / «Գնացել ենք՝ պուրակում զբոսնելու»: / «Դուրս էինք եկել՝ պուրակում զբոսնելու»: / «Գնանք պուրակ՝ զբոսնելու (համար)»:

Մեր կարծիքով՝ նպատակահարմար է պահպանել գործող կանոնը. վերջադաս նպատակի պարագայից առաջ դրվում է բուր, եթե այն անմիջաբար չի հաջորդում ստորոգյալին. անորոշ դերբայով դերբայական դարձված նպատակի պարագան տրոհվում է՝ անկախ վերը նշված հանգամանքից:

19) Կապական կառույցներով արտահայտված հիմունքի և զիջման պարագաների կետադրությունը նույնպես կարգավորված է կանոնով. կապերով ձևավորված նախադաս և հետադաս հիմունքի և զիջման պարագաների և նախադասության մյուս անդամների միջև դրվում է բուր, միջադաս դիրքում՝ ստորակետեր: Տարակարծություն կա այդ կառույցների հետադաս և նախադաս դիրքերի կետադրության վերաբերյալ, երբ պարագան անմիջապես հաջորդում է այնպիսի ստորոգյալի, որի օժանդակ բայը շրջուն շարադասությամբ չէ, կամ էլ ստորոգյալը առհասարակ չունի օժանդակ բայ, ինչպես՝ «Մեկնեցինք համաձայն հրահանգի»: «Շենքը կառուցված է ճարտարապետական նախագծի համաձայն»⁶⁹: Այս տարրնթերցումը, ինչպես և նպատակի պարագայի դեպքում, կարծում ենք՝ և՛ քերականորեն, և՛ առողա-

⁶⁹ Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 41-42:

նական հատկանիշներով, բավարար չափով չի հիմնավորվում: Ոչ միայն խախտվում է գործող ավանդույթը, այլև լեզվակիրառողի համար ստեղծում է ենթականոններ մտապահելու դժվարություններ: Կարելի է առաջնորդվել ընդհանուր կանոնով. կապերով ձևավորված հիմունքի և զիջման պարագաները տրոհվում են: Կարող են չտրոհվել, երբ անմիջաբար հաջորդում կամ նախորդում են ստորոգյալին (անկախ ստորոգյալի բնույթից). «Մեկնեցինք համաձայն հրահանգի»: / «Մեկնում ենք համաձայն հրահանգի»: / «Այսօր ենք մեկնում համաձայն հրահանգի»: «Շենքը կառուցված է ճարտարապետական նախագծի համաձայն»: / «Ճարտարապետական նախագծի համաձայն շենքը կառուցվեց»:

20) Եթե դերբայական դարձվածից առաջ կա ցանկացած միավոր (բացի շաղկապից), որը չի մտնում դերբայական դարձվածի մեջ, ապա դարձվածը միջադաս է կամ վերջադաս, հետևաբար պետք է տրոհվի համապատասխան կետադրությամբ՝ «Ցավոք, հավատալով ընկերոջը, նա արեց այդ քայլը»: «Հետո, լսելով նրան, մենք ամեն ինչ պարզեցինք»:

Կարծիք կա, սակայն, որ դերբայական դարձվածը պետք է համարել միջադաս միայն այն դեպքում, երբ ենթական դրված է նրանից առաջ՝ «Ջոկատը, շրջանցելով ջրամբարը, հայտնվեց ճամբարում»: Մյուս դեպքերում առաջնորդվել առաջադաս դերբայական դարձվածի կանոնով՝ «Ցավոք, հավատալով ընկերոջը՝ նա արեց այդ քայլը»: «Հետո, լսելով նրան՝ մենք ամեն ինչ պարզեցինք». այսպիսի կետադրությունը չի արտացոլում շարույթի առոգանական յուրահատկությունները: Բացի այդ, նման կառույցներում կետադրությունը սովորաբար կատարում է նաև իմաստազատիչ դեր, ինչպես՝ «Վաղ առավոտյան իմանալով այդ մասին՝ հետ վերադարձանք» (վաղ առավոտյան իմանալով այդ մասին),

«Վաղ առավոտյան, **իմանալով այդ մասին**, վերադարձանք» (վաղ առավոտյան վերադարձանք) և այլն:

21) **Լուրջ տարակարծությունների առիթ է տալիս վերաբերականների կետադրությունը:** Ընդունված է ասել, որ ամբողջ նախադասությունը եղանակավորող վերաբերականները առանձին հնչերանգով առանձնանում են նախադասության անդամներից, ինչը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետ(եր)ով: Այս ձևակերպումը լայն դուռ է բացում տարընթերցումների, քանի որ նախ շատ դժվար է կողմնորոշվել ամբողջ նախադասությունը եղանակավորելու հանգամանքում, և հետո՝ վերաբերականների մի մասը (օրինակ՝ **միմիայն, սուկ, հենց, թող, մի՞ թե** և այլն) առհասարակ չի կարող եղանակավորել ամբողջ նախադասությունը ու տրոհվել կետադրությամբ: Հարցի վերաբերյալ կարծես թե սպառիչ չէ նաև դպրոցական դասագրքի սահմանումը: Ասվում է, որ տրոհվում են վերաբերականների որոշ տեսակներ⁷⁰, և չկա որևէ բացատրություն այդ տեսակների վերաբերյալ: Այլ ձեռնարկներում փորձ է արվում առանձնացնելու նաև տրոհվող և չտրոհվող վերաբերականների մոտավոր տեսակներ. «Հիմնականում տրոհվում են հաստատական, ժխտական, զիջական, երբեմն էլ գնահատողական վերաբերականները:Մեծ մասամբ չեն տրոհվում երկբայական, սաստակական և սահմանափակման վերաբերականները»⁷¹: Այս «դասակարգումը» նույնպես հարցի լուծման որոշակի ուղիներ չի գծում: Մանավանդ որ

⁷⁰ Տե՛ս **Եզնկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու (դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար), Եր., 2010, էջ 186:

⁷¹ Տե՛ս **Միրումյան Մ.**, Հայոց լեզու, Եր., 2012, էջ 319: Ի դեպ, սույն ձեռնարկում *այո՛, ո՛չ* պատասխանական բառերի հետ միասին որպես պարտադիր շեշտադրվող վերաբերականներ են նշվում նաև *իրավ* և *իրոք* հաստատական վերաբերականները՝ *իրավ՛, իրոք՛* (տե՛ս նույն տեղը):

այն հաշտ չէ նախորդ ձևակերպման հետ, որը տրոհումը պայմանավորում է նախադասության անդամներին կամ ամբողջ նախադասությանը երանգավորելու հանգամանքով:

Որպես կանոն, առանձնացվում են երեք կարգի վերաբերականներ՝ ա) չտրոհվող, բ) տրոհվող, գ) ըստ դիրքի տրոհվող:

Առաջին խմբում է դասվում վերաբերականների մի որոշ մասը՝ **հենց, սուկ, գեթ, լոկ, միայն (թե), մի թե, թող, միմիայն** և այլն:

Երկրորդ խմբում են վերաբերականների արժեք ունեցող այն բառակապակցությունները, որոնք իրենց կառուցվածքով նման են նախադասությունների՝ **ինչ խոսք, ըստ որում, ըստ երևույթին, ինչ ասել կուզի, ինչպես չէ, ուր որ է, ինչ որ է** և այլն:

Կետադրվում են **այո, ոչ/չէ** պատասխանական բառերը՝ իրենց վրա կրելով շեշտ (ըստ առոգանության՝ նաև այլ նշաններ՝ բացանչական, հարցական):

Երրորդ խմբում են այն վերաբերականները, որոնք, դիրքով պայմանավորված, կարող են կետադրվել կամ ոչ: Այդպիսի վերաբերականներից են՝ **իհարկե, անշուշտ, հարկավ, այնուամենայնիվ, մանավանդ, իրավ, բարեբախտաբար, ցավոք սրտի, ըստ երևույթին, ի դեպ** և այլն:

Առաջին երկու դեպքերում տարակարծություններ կարձես չկան: Երրորդ խմբի վերաբերականների կետադրությունը սահմանվում է սովորաբար հետևյալ սկզբունքով. այդ վերաբերականները ստորակետով տրոհվում են, եթե չեն գտնվում այն բառի կողքին, որին եղանակավորում են, հակառակ դեպքում՝ չեն տրոհվում, այսպես՝ «**Ըստ երևույթին, դու ոչինչ չես արել**»: / «**Դու ըստ երևույթին չգիտես**»: «Պա-

հակը **այնուամենայնիվ** կողպեց դուռը»: / «**Այնուամենայնիվ**, պահակը կողպեց դուռը»: «Նա **իրոք** փրկեց մեզ»: / «**Իրոք**, նա փրկեց մեզ»: «Վարդանը **անշուշտ** կկարողանա օգնել մեզ»: / «**Անշուշտ**, Վարդանը կկարողանա օգնել մեզ»: / «**Անշուշտ** Վարդանը կկարողանա օգնել մեզ» և այլն⁷²: Այս ձևակերպումից ենթադրվում է, որ երրորդ խումբ վերաբերականները եթե բայ-ստորոգյալի կողքին են, ապա պարտադիր լրացնում են վերջինիս և չեն կետադրվում, իսկ եթե միջնորդավորված են այլ անդամ(ներ)ով, ապա չկետադրվելու դեպքում են լրացնում նրան: Այդ են ցույց տալիս նաև բերված օրինակները: Հետևաբար կարելի է կանոնը պարզեցնել հետևյալ ձևակերպումով. եթե կետադրվող վերաբերականները նախադասության մեջ դրվում են բայ-ստորոգյալի կողքին, ապա չեն կետադրվում, մյուս դիրքերում կարող են կետադրվել կամ ոչ՝ պայմանավորված հնչերանգային և իմաստային-տրամաբանական հիմունքներով: Ի դեպ, հարցին նվիրված ուսումնասիրություններից մեկում, որը կատարվել է համապատասխան լեզվական նյութի մանրակրկիտ քննությամբ և եղած տեսակետների հաշվառումով, նույնպես պաշտպանվում է այս ոլորտում կետադրական երկձևությունների և համեմատաբար ազատ կետադրության հնարավորությունը՝ ելակետ ունենալով գերազանցապես հնչերանգային հիմնավորվածությունը⁷³:

22) **Կոչականը ունի կանոնարկված կետադրություն**. տրոհվում է ստորակետ(եր)ով, կրում է շեշտ (կամ ըստ առգանության՝ բացականչական, հարցական նշան), եթե ունի լրացում, ապա շեշտը տեղափոխվում է լրացման վրա: Կան

⁷² Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 63:

⁷³ Տե՛ս **Մարգարյան Լ.**, Վերաբերականների տրոհության մի քանի հարցեր արդի արևելահայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Եր., 2017, № 1(22), էջ 51-60:

նան մասնակի դեպքեր: Դրանց կետադրության հարցում կարծես անհամաձայնություններ չկան: Տարակարծություններ կան հետևյալ դեպքում. կոչականը կարող է լինել գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև, որոնց կապող շաղկապը գեղջված է: Այդ դեպքում առաջարկվում է դնել բուրժ կոչականից առաջ կամ կոչականի վրա (ըստ գեղջման տեղի). «Գիտեմ, Արա՛մ՝ (որ) դու շատ չարչարվեցիր» և «Թվում է՝ (թե) Արա՛մ, դու ինձ չես լսում»: Այս կառույցներում չենք կարող բացառել, որ **Արամ** կոչականը կարող է դիտարկվել նաև երկրորդական նախադասության կազմում. տարընկալում կարող է առաջանալ գեղջված շաղկապի դիրքի վերաբերյալ. բուրժը պիտի դրվի կոչականից առաջ, թե՛ հետո: Այդ անհստակությունը ենթադրում է երկակի կետադրություն. «Գիտեմ, Արա՛մ՝ (որ) դու շատ չարչարվեցիր»: / «Գիտեմ՝ (որ) Արա՛մ, դու շատ չարչարվեցիր»: «Թվում է՝ (թե) Արա՛մ, դու ինձ չես լսում»: / «Թվում է, Արա՛մ՝ (թե) դու ինձ չես լսում»: Կամ՝ «Վերջապես հասկացա՛ (որ) Հակո՛բ, դու մեղավոր չես»: / «Վերջապես հասկացա, Հակո՛բ՝ (որ) դու մեղավոր չես»:

Այս տարընթերցումները հարթելու և կետադրությունը պարզեցնելու համար կարելի է պարզապես բոլոր դիրքերում և անկախ գեղջումներից՝ կոչականի կետադրությունը թողնել նույնը, այսինքն՝ կոչականը տրոհել ստորակետ(եր)ով, այսպես՝ «Գիտեմ, Արա՛մ, դու շատ չարչարվեցիր»: «Թվում է, Արա՛մ, դու ինձ չես լսում»: «Վերջապես հասկացա, Հակո՛բ, դու մեղավոր չես»: Այս դեպքում նաև կգործի կետադրական կանոնների հանդիպադրման ընդհանուր կանոնը. սովորաբար դրվում է հաջորդող կանոնի կետադրությունը:

Որոշ անհստակություն կա լրացումներ ունեցող կոչականի շեշտադրության վերաբերյալ: Ասվում է, որ «Եթե կոչականն ունի նախադաս լրացումներ, ապա շեշտը դրվում է կոչա-

կանին անմիջապես նախորդող լրացման վրա, օրինակ՝
 - *Իմ շատ սիրելի՛ գործընկերներ....*»⁷⁴: Կարծում ենք՝ այս
 պարագայում պիտի առաջնորդվել բանավոր խոսքի շեշ-
 տադրությամբ: Կունենանք երկու տարբերակ՝ - *Իմ շատ սի-
 րելի՛ գործընկերներ....* // - *Իմ շա՛տ սիրելի գործընկերներ....*:
 Կամ՝ «*Մեր բոլորի կողմից շատ սիրվա՛ծ երիտասարդ-
 ներ....*»: // «*Մեր բոլորի կողմից շա՛տ սիրված երիտասարդ-
 ներ....*»: // «*Մեր բոլորի՛ կողմից շատ սիրված երիտասարդ-
 ներ....*»:

Անհատակությունը վերաբերում է նաև այն դեպքին, երբ կո-
 չականը ունի դերանունով արտահայտված նախադաս
 լրացում: Գործող կանոնը սահմանում է, որ այդպիսի դեպ-
 քերում (երբ նախորդող բառը դերանուն է) դերանուն լրաց-
 ման վրա շեշտ չի դրվում: Որպես օրինակ է բերվում Ե. Չա-
 րենցի հետևյալ երկատողը. «Իմ բարեկա՛մ, իմ սե՛ր, հերո-
 սակա՛ն ընկեր, // Դու ապրեցիր, անցար ու չկաս հիմա»⁷⁵:
 Կարծիքը բացատրված չէ: Մեր տպավորությամբ՝ պնդումը
 դժվար է հիմնավորել տրամաբանական կամ շարահյու-
 սական հիմունքով: Ինչ վերաբերում է հնչերանգային հիմ-
 նավորվածությանը, ապա այս դեպքում դարձյալ դժվար է
 անվերապահորեն պնդել, որ դերանուն լրացումը չի կարող
 արտասանվել առանձնացող հնչերանգով՝ ձայնի բարձրա-
 ցումով կամ «հաղորդակցային ընդգծված երանգով». բա-
 նավոր կենդանի խոսքում հաճախ շեշտողաբար է արտա-
 սանվում նաև դերանունով արտահայտված լրացումը, և դա
 հնչում է շատ բնական ու տրամաբանական (հավելում է
 նրբիմաստային ինչ-ինչ երանգներ), ինչպես՝ «Ուրեմն, ի՛մ

⁷⁴ Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու (դասագիրք
 ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար), Եր., 2010,
 էջ 190:

⁷⁵ Տե՛ս Աբրահամյան Մ., նշվ., աշխ., էջ 65:

սիրելիներ, ինչպես ամեն ժամանակ, այսօր առավել ևս գործելու, արարելու պահն է»: «Ես սիրում եմ քեզ, **ի՛մ հայրենիք,** Հայաստան՝ իմ սի՛րտ»:

23) **Բացառման, բացասման հարաբերությունն արտահայտող բացի, զատ, առանց կապերով կապակցությունները,** ըստ գործող կանոնի, կարող են տրոհվել կամ ոչ: Առաջադաս կամ վերջադաս դիրքում տրոհումը արտահայտվում է բուրժով կամ ստորակետով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով: Այսինքն՝ առաջադաս և վերջադաս դիրքերում ունենք եռաձևություն, այսպես՝ «Բացի հիշատակվածներից () (.) հանցակազմի այլ նշաններ չկային»: «Հանցակազմի այլ նշաններ չկային () (.) բացի հիշատակվածներից»: Կարծիք կա նաև, որ «սովորաբար մեկ անդամ ունեցող կապակցությունները կարելի է նույնիսկ չտրոհել... Օրինակ՝ «Բոլորը **բացի Կարենից** ընդունեցին իրենց մեղքը»⁷⁶, սակայն այս մոտեցումը հազիվ թե կարող է արդարացվել կետադրական որևէ հիմունքով. քերականորեն հիմնավորված չէ, քանի որ գործ ունենք նույն քերականական կառույցի հետ, հնչերանգային պատճառաբանվածություն կարծես չկա. և՛ միանդամ, և՛ ծավալուն կապակցությունների դեպքում կա շատ որոշակի դադար, դժվար է հիմնավորումներ գտնել նաև տրամաբանական-իմաստային առումով:

Մեկ այլ մոտեցմամբ՝ բացառման կապեր համարվող **առանց** նախադրությամբ և **դուրս** հետադրությամբ ձևավորված որոշիչները և ձևի պարագաները (երկրորդի դեպքում նաև տեղի պարագաները) չպետք է տրոհել՝ «Մայրիկս առանց աչքերը բանալու մի թևով պինդ գրկեց ինձ», «Տեսնո՞ւմ ես, ահա առանց լուսամուտի այն տունը մերն է», «Քա-

⁷⁶ Տե՛ս **Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.,** Հայոց լեզու (դասագիրք 8-րդ դասարանի համար), Եր., 2012, էջ 48:

դաքից դուրս մրգատու այգիներ էին», «Այդ խելքից դուրս մտքերը քո տունը կքանդեն», «Ելույթ ունեցավ ծրագրից դուրս»: Ըստ որում, այս մոտեցումը որևէ կերպ չի մեկնաբանվում⁷⁷:

Ձևաբանության բուհական ձեռնարկում գեղարվեստական գրականությունից իբրև օրինակներ ներկայացվող նմուշները առաջադաս կամ վերջադաս դիրքում տրոհված են ստորակետով կամ ոչ. *Ամենալավ կերակուրն էլ ինձ համար համ չունի առանց աղի (ՀԹ), Առանց լվացվելու նա տնից դուրս թռավ (ԳՍ), Բացի ուսանողից և երկրորդական բարիտոն Բորելլիից, բոլորը հետևեցին նրան (Շ)* և այլն⁷⁸:

Կարելի է համաձայնել, որ **դուրս** կապով կապակցությունների՝ և՛ որպես որոշիչ, և՛ որպես պարագա գործածությունները (ինչպես նաև **առանց** կապով ձևավորված որոշիչները) չեն առանձնանում առոգանական դադարով, չունեն նաև կետադրական նշանի գործածության քերականական կամ տրամաբանական հիմնավորումներ, հետևաբար դրանք գրավոր արտահայտություն չեն կարող ունենալ, այսինքն՝ չեն կարող կետադրվել, ինչպես՝ «Հավաքվեցինք **քաղաքից դուրս** գտնվող նրա առանձնատանը»: «Հագին հնամաշ, **առանց կոճակների** մի վերարկու էր»: «**Առանց փողկապի** այդ երիտասարդը մեր նախկին ուսանողն է»: «Շտապ մեկնեցինք **քաղաքից դուրս**»: Բայց **առանց** կապով կապակցությունների **պարագայական կիրառությունները** արտասանվում են որոշակի դադարով, հետևաբար կարող են նաև կետադրվել՝ միջադաս դիրքում՝ ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բուրձով, այսպես՝ «Առանց որևէ խոսք ասելու(´) հեռացավ»: / «Հեռացավ(´)

⁷⁷ Տե՛ս **Զաքարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 31-32:

⁷⁸ Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 549:

առանց հրաժեշտի»: / «Նա(,) առանց հրաժեշտի խոսք ասելու(,) հեռացավ»: «Այդ երիտասարդը հանդիսությանը մասնակցեց(՝) առանց փողկապի»: Եթե չունենք դերբայական դարձված, նախընտրելի է չկետադրելը:

Առանց կապով առանձին կառույցներում կետադրական նշանի (չ)առկայությունը կատարում է խոսքի բովանդակությունը ճշգրտող դեր: Այսպես՝ «Կարելի է տեղադրել պատուհանների վրա առանց ավելորդ անցքեր բացելու» նախադասությունը, բովանդակությամբ պայմանավորված, կարող է կետադրվել երկու տարբերակով: Առաջինում՝ «Կարելի է տեղադրել պատուհանների վրա առանց ավելորդ անցքեր բացելու», ձևի պարագա կապական կառույցի (պատուհանների վրա առանց ավելորդ անցքեր բացելու) տրոհումով շեշտվում է **պատուհանների վրա ավելորդ անցքեր չբացելու** գաղափարը, իսկ երկրորդում՝ «Կարելի է տեղադրել պատուհանների վրա՝ առանց ավելորդ անցքեր բացելու», ընդգծվում է **պատուհանների վրա տեղադրելու** գաղափարը, իսկ անցքեր չբացելը կարող է վերաբերել պատուհաններին կամ ոչ: Մեկ այլ նախադասություն. «Իմ գործունեությունը առանց բարեգործության կրթության արհեստի կնմանվեր» (հարցազրույցի վերնագիր է). անորոշ է ասվածի իմաստը. առանց բարեգործության կրթության՝ նմանին է խոսքը, թե՞ առանց բարեգործության գործունեության: Ճշգրտված իմաստով կունենանք հետևյալ կետադրությունը, որը ոչ թե նախընտրելի, այլ միակ տրամաբանական և ճշգրիտ տարբերակն է՝ «Իմ գործունեությունը, առանց բարեգործության, կրթության արհեստի կնմանվեր»:

Նույն հարաբերությունը արտահայտող **անկախ, բացառությամբ, չհաշված** կապական բառերով կապակցությունները առաջադաս և վերջադաս դիրքերում սովորաբար տրոհվում են բուրժով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով, ինչպես՝

«Ձեր ջանքերը չեն գնահատվելու՝ անկախ արդյունքից»։ / «Անկախ արդյունքից՝ ձեր ջանքերը չեն գնահատվելու»։ / «Ձեր ջանքերը, անկախ արդյունքից, չեն գնահատվելու»։

Միօրինակացման համար կարելի է վերը նշված **առանց, բացի, զատ** կապերի պարագայում նույնպես գործածել վերջինների համար սովորական դարձած կետադրությունը, այսինքն՝ **առանց, բացի, զատ** կապերով և **անկախ, բացառությամբ, չհաշված** կապական բառերով կապակցությունները առաջադաս և վերջադաս դիրքերում տրոհել բուրժով, իսկ միջադաս դիրքում՝ ստորակետերով։ Այսպիսի մոտեցումը բխում է նաև «Հայերենի կետադրություն» ձեռնարկում ստորակետի և բուրժի գործածության այն ընդհանուր կանոնից, որ վերաբերում է կապերով ձևավորված հիմունքի և զիջման պարագաների տրոհությանը. **ըստ, նայած, համաձայն, համապատասխան, հակառակ, հանդերձ, չնայած, չհաշված, փոխանակ, ի տարբերություն, ի հեճուկս, բացի, զատ, բացառությամբ** կապերով կապակցությունները միջադաս դիրքում նախադասության մյուս անդամներից տրոհվում են ստորակետերով, իսկ նախադաս և հետադաս դիրքերում՝ բուրժով⁷⁹։

25) Կրկնադիր շաղկապների կետադրությունը հստակ ձևակերպված է նաև դպրոցական դասագրքերում. «Համագոր նախադասություններ և նախադասության համագոր բազմակի անդամներ կապող **և՛....., և՛....., կա՛մ....., կա՛մ....., թե՛....., թե՛....., ո՛չ....., ո՛չ....., է՛լ....., է՛լ.....** շաղկապները թվարկություն կամ հակադրություն արտահայտելիս շեշտվում են, իսկ կրկնվող շաղկապից առաջ միշտ դրվում է ստորակետ»⁸⁰։ Կարծիք կա, սակայն, որ «եթե բազմակի ան-

⁷⁹ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 31 և 38-39։

⁸⁰ **Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ.**, Հայոց լեզու (դասագիրք 8-րդ դասարանի համար), Եր., 2012, էջ 55։

դամներից առաջինից առաջ չկա կրկնադիր շաղկապ, ապա հաջորդ կրկնվող շաղկապները չեն շեշտվում, և ստորակետեր չեն դրվում... *Նկարիչը վճռել էր նկարել գետը կամ դաշտը կամ էլ լեռը*⁸¹: Մեկ այլ մոտեցմամբ՝ «կրկնադիր համադասական շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջը, որը մինչև այժմ էլ տեղ է գտնում որոշ գրքերում և կետադրության պրակտիկայում» կանոնական չէ, քանի որ պայմանավորված չէ գրական կենդանի խոսքի արտասանական օրինաչափությամբ: «Կենդանի խոսքի դիտարկումները ցույց են տալիս, - գրում է Ս. Աբրահամյանը, - որ կրկնադիր շաղկապները շատ դեպքերում չպետք է շեշտադրել»⁸²: Եվ ապա շատ ուշագրավ է երևույթի վերաբերյալ Ս. Աբրահամյանի, այսպես կոչված, ռճաբանական հիմնավորումը Վ. Տերյանի եռատողերից մեկի վերլուծությամբ.

*Եվ չըկար ոչինչ, որ սիրտըս դյութեր՝
Ոչ սիրո կարոտ, ոչ բախտի ծարավ,
Ոչ հարստության և մեծության բեռ:*

«*Ոչ... ոչ* կրկնադիր շաղկապի շեշտումով այս անթերի, բարձրարվեստ, կենդանի խոսքը կինչեր անբնական, կխախտվեր բանաստեղծական տողերի ռիթմը, և այս ամենի հետևանքով կթուլանար խոսքի ներգործությունը»⁸³:

Կանոնական քերականության այլ մաստյաններում այսպիսի տեսական մասնավորեցումներ կարծես թե չունենք: Բայց դրանցում հարցի քննարկության առիթով բերված օրինակները, որոնցում կրկնադիր շաղկապները հաճախ շեշտադրված չեն, վկայում են նույն այդ կողմնորոշման մասին, ինչպես՝ «Եվ հնչում է երգը, / Եվ գնում է երթը, / Եվ ձու-

⁸¹ Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 82:

⁸² Աբրահամյան Ս., նշվ. աշխ., էջ 11:

⁸³ Նույն տեղում:

լում են բազում ձայներ, / Ու թվում է՝ օդում խնդություն է հորդում...»: «Թե կացինը լավ չէր կտրում, թե փայտն էր պինդ, թե աշխօրն էր քիչ ու դատարկ...»: «Ոչ հասակակից ընկերները կան, / Ոչ պատանության իր մտերմուհին, / Ոչ գառ ու գմբուխտ հավքերն այն գարնան, / Ոչ Արփաչայի ուռիները հին»⁸⁴:

Բոլոր դեպքերում, անմիօրինակություն չստեղծելու և մտապահելը ավելի դյուրին դարձնելու համար թերևս նպատակահարմար է պահպանել գործող կետադրությունը. կրկնադիր շաղկապները շեշտադրել և տրոհել ստորակետով՝ բացառությամբ առաջին շաղկապի, այսպես՝ «Պատժվելու էր կա՛մ Վահանը, կա՛մ Անդրեասը, կա՛մ Պետրոսը և կա՛մ Հակոբը»:

26) **Հայերենում ուղղակի խոսքը** հեղինակի խոսքի նկատմամբ լինում է առաջադաս կամ վերջադաս՝ համապատասխան կետադրությամբ.

Բշխանը գլուխը բարձրացրեց և հարցրեց.

- Հուսի՛կ, այդ դու՞ ես:

«Մի անգգույշ խոսք, մի անգգույշ շարժում կարող է մատնել ինձ: Ես պետք է թաքցնեմ իմ տխրությունը», - մտածեց Սամվելը:

Ընդունված չէ հեղինակի խոսքի նկատմամբ ուղղակի խոսքի միջադաս գործածությունը, երբ ուղղակի խոսքի տրոհումը իրականացվում է վերջադաս և առաջադաս տարբերակների կանոնների համակցումով, ինչպես հետևյալ օրինակում է.

Թիկնապահին ասաց.

⁸⁴ Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1991, էջ 43-44:

- Շտապ պիտի մեկնենք,- ապա ավելացրեց,- հապաղելը վտանգավոր է:

Սակայն պիտի ասել, որ կանոնի սահմանափակումը սկզբունքորեն չունի որևէ տրամաբանական կամ շարահյուսական հիմնավորում և, բացի այդ, էապես նվազեցնում է խոսքի կառուցման ճկուն հնարավորությունները և խոսքը զրկում է ոճական բազմազանությունից:

Հետևաբար կարելի է գործածական համարել երկուսն էլ՝ նախընտրությունը տալով ընդունված տարբերակին՝

1) - Շտապ պիտի մեկնենք, - ասաց թիկնապահին, ապա ավելացրեց. - հապաղելը վտանգավոր է:

2) Թիկնապահին ասաց.

- Շտապ պիտի մեկնենք, - ապա ավելացրեց. - հապաղելը վտանգավոր է:

27) Կան կապակցություններ, որոնք, ձևով նման լինելով բացահայտիչ-բացահայտյալին, չեն կետադրվում դրանց նմանողությամբ: Որպես այդպիսիք՝ ավանդաբար ընդունվել են **դերանուն + դերանուն** կապակցությունները՝ **ես ինքս, դու ինքդ, մենք ինքներս, մենք բոլորս, դուք ամենքդ**. դրանք ձևավորված են ոճական ավելադրությամբ և ունեն խստացնող նշանակություն: Գրվում են առանց կետադրության: Կարծում ենք՝ սրանց շարքում չպետք է դասել **դերանուն + փոխանուն թվական** կապակցությամբ կառույցները (մենք երեքս, դուք երկուսդ, մենք առաջիններս), քանի որ այս դեպքում հարկ կլինի նախ՝ ընդլայնել այդ կապակցությունների շարքը՝ **դերանուն + փոխանուն ածական** (մենք վերջիններս, դուք ընտրյալներդ, մենք մեծերս), **դերանուն + փոխանուն հարակատար դերբայ** (դուք կոչվածներդ, դու հալածվածդ), **դերանուն + փոխանուն մակբայ** (դուք

շատերդ) և այլն: Ապա՝ դերանուն-թվական կապակցություններում թվական բաղադրիչի՝ լրացում ստանալու դեպքում (մի բան, որը հնարավոր չէ դերանուն-դերանուն կապակցություններում) բուրով տրոհումը դառնում է կանոնական (ինչպես բացահայտիչ-բացահայտյալ կապակցություններում է), օրինակ՝ «Մենք **ցուցակում վերջին երկուսս**, տեղյակ չենք եղել», կամ՝ «Դուք՝ **ի վերուստ կոչվածներդ**, անտրտունջ կրում եք ձեր խաչը»: Հետևաբար շարահյուսորեն առավել հիմնավորված կլինի չտրոհվող կապակցություններ համարել միայն **դերանուն + դերանուն** կապակցությամբ կառույցները. մյուսները դիտարկել որպես բացահայտիչ-բացահայտյալ:

28) **Կետ-ստորակետ (;):** Հայերենում հազվադեպ գործածվող նշան է. սովորաբար հանդիպում է գիտական գրականության մեջ՝ ստորակետերով տրոհվող բազմանդամ թվարկումներով կառույցներում: Երբ թվարկվող անդամները (բառ կամ բառակապակցություն) այսպես կոչված խմբային հատկանիշներ ունեն և պիտի առանձնացվեն միմյանցից, ստորակետի գործածությունը կարող է շփոթ ստեղծել: Կետ-ստորակետը շատ հարմար միջոց է տրամաբանական այդ առանձնացումը նշելու համար: Այսպես՝

«Զուգադիր շաղկապներից են՝ եթե, ապա.....; ոչ միայն, այլև.....; թեև, սակայն.....; և այլն»:

«Փոփոխել տրված դարձվածքները՝ մի ծաղկով գարուն չի գա; համբերությունը կյանք է; լեռը երկնեց, մուկ ծնեց; մի՛ դատիր, որ չդատվես; պղտոր ջրում ձուկ որսալ»:

29) **Երկու գուգահեռ զծերի (գուգազիծ) (//) գործածությունը** սովորաբար նշանակում է լեզվական համարժեք միավորների կամ կառույցների գուգահեռություն (գրե՛ք//գրեցե՛ք, ե՛լ/ելի՛ր, համարանիշեր//համարանիշներ, կայսեր//կայս-

րի, կապակցությամբ (//վերաբերյալ) և այլն): Երկրորդաբար այն գործածվում է նաև իրար հաջորդող չափածո տողերը մեկ տողով գրելիս («...Որ ինչքան էլ չի այրվում մայրամուտը հրով, // Գոնե լուսաբացից գեղեցիկ է լինում»):

30) **Կոտորակի գիծը (մեկ գիծ՝ /)** սովորաբար գործածվում է՝ նշանակելու համար տարբերվերը (**2017/2018 ուստարում, 2015/2016 թթ.**), որոշ բառակապակցությունների կամ բարդությունների համառոտագրված տարբերակներ (**ա/թ** (սույն թվականի), **գ/Ֆ** (գեղարվեստական ֆիլմ), **զ/ծ** (զինծառայող), **գ-լ/գ-տ** (գեներալ-գնդապետ) **մ/վ** (մետր/վայրկյան), **կմ/ծ** (կլիումետր/ժամ), այլընտրանք՝ **կա՛մ...., կա՛մ....** կրկնադիր շաղկապի նշանակությամբ (և/կամ, ը/ն), հերթագայություն (ի/ու, ք/ց, այ/ո), շենքի համար և ենթահամար (Երևան, Եղբայրության 12/2, բն. 18) և այլն:

Կոտորակի գիծը երկու զուգահեռ գծերի նման կարող է գործածվել իրար հաջորդող չափածո տողերը մեկ տողով գրելիս:

Վերջին շրջանում կոտորակի գիծը գործածվում է նշանակելու համար նաև համագործություն. այդ գործածությունը հավասարազոր է ստորակետի՝ համագործության նշանակությամբ գործածությանը, ինչպես՝ «**Պարտեզը/այգին՝** իբրև մշակված հասարակական տարածք (ածու), հիշատակում է նաև Մովսես Խորենացին իր «Չայոց պատմության» մեջ»: Դա կարելի է համարել կանոնական գործածություն՝ հավելելով կոտորակի գծի մյուս գործածություններին:

31) Օտար բառերի շեշտադրման վերաբերյալ ՀՀ լեզվի պետական կոմիտեն սահմանում է հետևյալը. «Օտար շեշտադրությունը համարելով հայերենի հնչերանգին խորթ, նրա խոսքի առոգանության ու ռիթմի ազգային բնույթը խաթարող երևույթ՝ տերմինաբանական կոմիտեն իր որոշումը

սահմանափակել է հատուկ անձնանունների վերաբերյալ՝ այն էլ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևերում, այսպես՝ **Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Չիկոֆա՛վա, Բայց՝ Լերմոնտովի՛, Մայակովսկո՛ւ, Չիկոֆավայի՛**»⁸⁵:

Դպրոցական գործող դասագրքերը վերը նշված կանոնը տարածում են նաև՝ ա) **-իա**-ով վերջացող տեղանունների՝ **Իտա՛ լիա, Իսպա՛նիա, Ավստրա՛ լիա, Գերմա՛նիա, Դա՛նիա** և այլն⁸⁶, և բ) փոխառյալ օտար բառերի վրա՝ **մաթեմա՛ տիկա, ռա՛ դիո, տե՛ խնիկա** և այլն⁸⁷: Կենդանի գրական լեզվի զարգացումը իրոք հաստատում է նման շեշտադրության տարածվածությունը բանավոր խոսքում: Օտար բառերի ուղիղ ձևերում ոչ վերջին վանկի շեշտադրումը որպես կանոն է ձևակերպված նաև Ս. Աբրահամյանի ուսումնական ձեռնարկում. «Որոշ փոխառյալ բառերի, հատկապես անունների ուղիղ ձևերում,- գրում է նա,- շեշտը դրվում է ոչ վերջին վանկի վրա, իսկ նրանց բառակազմական և քերականական ձևերում՝ վերջին վանկի վրա»: Օրինակներում նշվում են նաև հետևյալ անունները՝ **Ա՛սիա, Ամե՛րիկա, Բուլղա՛րիա, Անտարկտի՛ դա**⁸⁸:

Այնուամենայնիվ, թյուրընկալումներից և անհարկի գուգաձևություններից խուսափելու համար թերևս ճիշտ կլինի դասագրքերում և ձեռնարկներում կանոններ սահմանող այս կամ այն ձևակերպումը որպես կանոն զետեղել միայն համապատասխան որոշումների առկայության դեպքում:

⁸⁵ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 185:

⁸⁶ Տե՛ս **Եզեկյան Լ., Մարգարյան Ա., Մաքսապետոյան Ռ.**, Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, Եր., 2010, էջ 190:

⁸⁷ Տե՛ս **Գյուրջինյան Դ. և այլք**, Մայրենի, 5-րդ դասարան, Եր., 2015, էջ 169:

⁸⁸ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 68:

32) Մասնագիտական գրականության մեջ քիչ է խոսվել **և, ու, կամ** շաղկապներով կապակցվող շարահյուսական այնպիսի կառույցների մասին, որոնք իրենց կազմում ունեն միակազմ նախադասություն(ներ) կամ բաղկացած են հնչերանգային տարբեր տիպի բաղադրիչ նախադասություններից՝ անկախ միակազմ կամ երկկազմ լինելու հանգամանքից:

Միակազմ բաղադրիչ նախադասության կամ նախադասությունների դեպքում ընդհանուր առմամբ գործում է որոշակի նորմ.

ա) Միակազմ և երկկազմ նախադասություն(ներ). այս դեպքում նշված շաղկապներից առաջ դրվում է ստորակետ. «Ինչ-որ ձայներ, և(ու) ամեն ինչ թաղվեց մթության մեջ», «Հաշտություն, կամ ինչպես որ կպայմանավորվեն կողմերը»:

բ) Նույն ենթատեսակների (անդեմ-անդեմ կամ դիմավոր-դիմավոր) միակազմ նախադասություններ. այս դեպքում նշված շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում. «Մթնեց և մի քանի ժամ անց՝ ցրտեց», «Գարուն և գունազարդ այգեստաններ»:

գ) Միակազմ անդեմ և միակազմ դիմավոր նախադասություններ. այս դեպքում շաղկապներից առաջ դրվում է ստորակետ. «Լուսացավ, և(ու) չորս կողմը արևի ջերմացնող ներկայությունը»: «Մի՛ դատիր..., կամ քարեր նետելու ժամանակը»:

դ) Տարբեր տիպերի դիմավոր միակազմ նախադասություններ. ստորակետ դրվում է. «Նրան նոր պաշտոն են տվել, և(ու, կամ) երկաթն էլ տաք-տաք են ծեծում»⁸⁹:

⁸⁹ Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, թիվ 2, էջ 168:

ե) Տարբեր տիպի անդամ միակազմ նախադասություններ (անվանական անդամ-բայական անդամ). ստորակետ դրվում է. «Չորս կողմը ծաղկած այգեստաններ..., և չաղմկել ու չանհանգստացնել ոչ ոքի»: «Լռել, և վայ անհնազանդներին»:

Պիտի ասել, որ գործող այս կետադրությունը շարահյուսական որոշակի գիտելիքներ է պահանջում և որոշ դժվարություններ է ստեղծում սովորական լեզվակիրառողի համար: Հարցի լուծումը, ի վերջո, կարող է երկու տարբերակ ունենալ. կա՛մ առաջնորդվել գործող կանոններով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված կառույցները հազվադեպ գործածություն ունեն խոսքի բոլոր դրսևորումներում և կա՛մ այս կառույցներում առաջնորդվել ազատ կետադրելու հնարավորությամբ՝ դարձյալ հաշվի առնելով վերը նշված հանգամանքը:

Ինչ վերաբերում է **հնչերանգային տարբեր տիպի բաղադրիչ նախադասություններով** շարահյուսական կառույցների կետադրությանը, ապա դրանց վերաբերյալ պետք է ասել հետևյալը: Չկա հստակ մոտեցում: Արմատական կարծի դիրքորոշում է առաջարկում որդեգրել Գ. Գարեգինյանը. «**Եվ, ու, կամ** շաղկապներից առաջ ստորակետ չպետք է դնել, գրում է նա, - երբ նրանցով կապվում են **հարցական, հորդորական** (հրամայական) և **բացականչական** նախադասություններ՝ անկախ նրանց երկկազմ կամ միակազմ լինելուց, նույն կամ տարբեր ենթականերով ձևավորված լինելուց»⁹⁰: Բերվում են համապատասխան օրինակներ՝ «Ինչպիսի՞ հույսեր ունե՞ր հայ ժողովուրդը և ինչպե՞ս դաժանորեն խաբեցին նրան» (հարցական նախադասություններ), «Թող բախտը միշտ ժպտա քեզ և թող հաջողությունը անպակաս լինի քեզանից» (հորդորական նախադասություններ), «Որքա՞ն գե-

⁹⁰ Նույն տեղում, էջ 168:

ղեցիկ է այստեղ բնությունը և ինչպիսի՛ գեղեցիկ ծաղիկներ կան սարալանջերին» (բացականչական նախադասություններ)⁹¹: Կարծում ենք՝ հնչերանգային տարբեր տիպի նախադասությունների վերաբերյալ այսպիսի մասնավորեցումը անհարկի ծանրաբեռնում է և դժվարացնում հայերենի կետադրությունը: Արդեն իսկ ունենք հստակ ձևակերպված կանոններ մի դեպքում՝ **և, ու, կամ** շաղկապներով կապակցված և տարբեր ենթականեր ունեցող նախադասությունների կետադրության վերաբերյալ՝ անկախ հնչերանգային տեսակից («Ստորակետ դրվում է **և, ու, կամ** շաղկապներով կապակցված համադաս նախադասությունների միջև, որոնք չունեն ընդհանուր ենթակա»⁹²), և մյուս դեպքում՝ միակազմ նախադասությունների վերաբերյալ, ինչպես վերը ներկայացվեց: Հնչերանգային գործոնով պայմանավորված նոր սկզբունքներ սահմանելը այնքան էլ նպատակահարմար չէ և չի նպաստում կետադրական կանոնների միասնականացման ու միօրինակության սկզբունքին:

33) Իրար անմիջապես հաջորդող շաղկապների (կամ **շաղկապ+հարաբերական բառ կառույցի**) կետադրությունը դարձյալ միասնական մոտեցումներ չի արձանագրում: Կա կարծիք, որ «...իրար հաջորդող շաղկապների կամ հարաբերական բառերի միջև ստորակետ չի դրվում. ստորակետ դրվում է համադասական շաղկապից առաջ՝ անկախ այն բանից՝ ենթական փոխվե՞լ է, թե՞ ոչ»⁹³: Մեկ այլ առիթով կրկնակի շաղկապների վերաբերյալ արվում է առավել կտրուկ ձևակերպում. «Պետք է մեկընդմիջտ հիշել, որ երկու շաղկապների (լինեն դրանք երկուսն էլ համադասական, թե ստորադասական կամ խառը՝ համադասական-ստորադաս-

⁹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 169:

⁹² Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 27:

⁹³ **Սահակյան Վ. Ա, Սահակյան Վ. Վ.**, նշվ. աշխ., էջ 94:

սական) միջև ստորակետ չի կարելի դնել»⁹⁴: Բերված օրինակներից են՝ «Մի ուղևոր տեսավ լացող մանուկին, խղճաց, տարավ իր տուն, **և որովհետև** զավակներ չուներ, որդեգրեց նրան», «Երբ հոգնած եմ եղել, **և երբ** խաբվել եմ սիրուց...», «Պատահում էր, որ երբ գիշերը վրա էր հասնում, ճանապարհը վստահում էինք ձիերին», «Ես սկսեցի համոզվել, **որ եթե** որևէ մեկը ոտք դներ այս կողմին, նա չէր կարող նկատել որևէ հետք»⁹⁵:

Կա նաև այլ կարծիք, որը հիմնված է առավելապես քերականական փաստարկումների և պատճառաբանությունների վրա: Ա. Սարգսյանը վերը նշված դեպքերի վերաբերյալ առանձնացնում է ստորակետով տրոհման երկու դեպք. բացատրությունը բերում ենք ամբողջությամբ.

ա) Երկու համադաս նախադասություններից երկրորդը կարող է ունենալ իրեն լրացնող երկրորդական նախադասություն: Այդ երկրորդականը սովորաբար հաջորդում է իր գլխավորին, բայց կարող է նաև լինել երկու գլխավորների միջև: Այդ դեպքում նրանից առաջ և հետո դրվում է ստորակետ:

Հմտ.՝ Ես գնացի տուն և սկսեցի պարապել, որովհետև քնություն պետք է հանձնեի:

Ես գնացի տուն և, որովհետև քնություն պետք է հանձնեի, սկսեցի պարապել:

բ) Գերադաս նախադասությունը կարող է ունենալ իրեն լրացնող ստորադաս նախադասություն, որն էլ իր հերթին կարող է ունենալ մեկ այլ երկրորդական: Հնարավոր է, որ գլխավորի և նրան լրացնող երկրորդականի միջև ընկնի

⁹⁴ Նույն տեղում, էջ 100:

⁹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 94-95:

երկրորդականին լրացնող ստորադաս նախադասությունը: Այդ դեպքում իրար հաջորդող ստորադաս շաղկապների (հարաբերական դերանունների) միջև դրվում է ստորակետ:

Հմմտ.՝ Իմացավ, որ իրեն կգտնեն, եթե մնա այդ քաղաքում:

Իմացավ, որ, եթե մնա այդ քաղաքում, իրեն կգտնեն:

Եկավ այն մարդը, որը, եթե սկսեինք կառուցումը, պետք է օգներ մեզ:

«Մրանցից բացի,- շարունակում է Ա. Սարգսյանը,- հնարավոր են այլ զուգակցումներ, որոնց դեպքում, սակայն, իրար անմիջապես հաջորդող շաղկապների (հարաբերական դերանունների) միջև ստորակետ չի դրվում»⁹⁶:

Մյուս զուգակցումների վերաբերյալ հեղինակի հանգամանակից բացատրությունները չենք ներկայացնում: Այս դեպքում, սակայն, խնդիր է ծագում. արդյո՞ք անհրաժեշտությունը կա այդչափ «քերականացնելու» քննարկվող կառույցների կետադրությունը, երբ դա մանավանդ պատճառ չի դառնում տրամաբանական կամ իմաստային անճշտությունների:

Մեր խորին համոզմամբ՝ այդ կառույցների կետադրության հարցում կարծի օրենքներ սահմանելը չի հիմնավորվում կետադրության գործող մյուս հիմունքներով, և եթե չունենք շարահյուսական կառույցի յուրահատկություններով պայմանավորված իմաստային-տրամաբանական անճշտությունների առաջացման վտանգ, ապա պետք է առաջնորդվել ազատ կետադրելու հնարավորությամբ՝ նախապատվությունը տալով իրար հաջորդող շաղկապների կամ շաղկապ-հարաբերական բառերի միջև ստորակետ չդնելու սկզբուն-

⁹⁶ Սարգսյան Ա., նշվ. աշխ., էջ 95:

քին: Այսպես՝ «**Իսկ(,) թե** հանկարծ սև աչերդ արտասվեն, / Թող արցունքդ սրտիս վրա վերք լինի»: «Լիլիթը հիացմունքով դիտում էր կարապներին **և(,) երբ** ծունկի իջավ, հանկարծ ջրի վրա տեսավ մի պատկեր ու հասկացավ կատարվածը»: «Զգում էր, **որ(,) երբ** մտածում էր այդ մասին, հարստությունը ձգում էր իրեն»: «Առանց վերնազգեստի դուրս եկավ սենյակից, **բայց(,) քանի որ** օդի մեջ սառնություն զգաց, կարգադրեց համհարզին թիկնոցը բերել»: «Ես լսում էի, թե ինչպես առվի ավազի մեջ զրնգում է նրա ծանր բահը, **իսկ(,) երբ** բարձրացնում է բահը, արևը լուսավորում է այն»: «...**Իսկ(,) երբ** սայթաքես, մուճակիդ փռշին մեծ մարդ է դառնում և քեզ հարվածում»: «Եկավ մեզ այցելության, **ու(,) թեև** շտապում էր, մենք երկար զրույց ունեցանք անցած-գնացած օրերից»:

34) **Նոր պարբերությունը** հաջորդ տողի խորքից սկսելը հազիվ թե կետադրական կանոնների ցանկում հաճախակի է արձանագրվում, սակայն մեզանում ավանդաբար ընդունված է գրության այդ կերպը: Վերջին շրջանում հատկապես օտար գրագրության ձևավորումների ազդեցությամբ շրջանառության մեջ է մտնում պարբերության կետադրական «արձանագրման» մեկ այլ տարբերակ, այն է՝ պարբերությունը սկսել նոր տողի հենց սկզբից՝ առանց խորքի: Ավելի հաճախ դա ուղեկցվում է բացատրով. պարբերությունները իրարից տրոհվում են միջտողային հեռավորության չափից փոքր-ինչ ավելի: Այսպես՝

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կազմվում է տվյալ կազմակերպության ընդհանուր բլանկի վրա կամ ձևակերպվում է մաքուր թղթի վրա (ձևաչափ՝ A4), որտեղ կանխավ նշվում են ընդհանուր բլանկի համար նախատեսած պարտադիր պահանջները: Արձագրության տիպային օրինակը ներառում է հետևյալ տվյալները՝ կազ-

մակերպության (բաժանմունքի) անվանումը, փաստաթղթի տեսակի անվանումը, կազմելու թվականը, գրանցման համարը, հրապարակման տեղը, վերնագիրը, տեքստը, ստորագրությունները:

Փաստաթղթի տեսակի անվանումը (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ). զետեղվում է կազմակերպության անվանումից 2 ազատ տող ներքև՝ ընդհանուր բլանկի տվյալների երկայնական դասավորությամբ էջի կենտրոնական մասում, անկյունային դասավորությամբ էջի ձախ սահմանագծից:

- **Թվականը.** համապատասխան նիստի թվականն է և ոչ թե փաստաթղթի ձևակերպման և վավերացման թվականը:
- **Գրանցման համարը.** հերթական նիստի համարն է:
- **Տեղը** (բնակավայրը), որտեղ կազմվել կամ հրապարակվել է արձանագրությունը:
- **Վերնագիրը.** հակիրճ արտահայտում է նիստի բովանդակությունը և ձևակերպվում է սեռական հոլովաձևով:
- **Արձանագրության տեքստը.** ունենում է 2 բաժին՝ ներածական և հիմնական մաս:

Առաջինը, որ խիստ ձևայնացված է, պարունակում է նիստի մասնակիցների մասին հակիրճ տեղեկություններ՝ մասնակիցների **կազմը** և **օրակարգը**: Կազմում նախ՝ արձանագրվում են նախագահի և քարտուղարի անունները, ապա՝ մասնակիցներին, հրավիրվածներին: Եթե վերջիններիս թիվն անցնում է 15-ը, ցուցակը ներկայացվում է կից հավելվածով:

Օրակարգում ներկայացվում են քննարկվելիք հարցերը (ինչի՞ մասին), ինչպես նաև զեկուցողի մասին տեղեկություններ՝ պաշտոնը, ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը (ի դեպ, վերջին փաստի հաղորդման համար երբեմն կիրառվող հերթականությունը՝ անուն-ազգանուն-հայրանուն, հայերենում ձևափոխությունների ժամանակ դժվար

ըություններ է ստեղծում՝ Արամյան Հակոբ Վազգենիից (°): Ուստի հայերենում նախընտրելի է հակառակ հերթականությունը՝ անուն-հայրանուն-ազգանուն՝ Հակոբ Վազգենի Արամյանից)

Կամ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК

РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CENTRAL BANK OF THE

REPUBLIC OF ARMENIA

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրամավարկային քաղաքականության

հանձնաժողովի նիստ

08.11.2012 № 1

Նախագահ՝ անուն-ազգանուն

Քարտուղար՝ անուն-ազգանուն

Ներկա էին՝ Ա. Ծ. Խաչատրյան, Հ. Մ. Մկրտչյան, Վ. Հ. Բագրատյան, Հ. Մ. Սահակյան, Հ. Կ. Մալխասյան, Մ. Մ. Ավագյան, Ա. Ա. Հակոբյան:

Հրավիրվածներ՝ ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ Մ. Մ. Ղարիբյան, ՀՀ ԿԲ ֆինանսական գործառնությունների դեպարտամենտի տնօրեն Ա. Մ. Վարդանյան:

ՕՐԱԿԱՐԳ.

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի մասին
Ձեկուցող՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտի տնօրեն Ա. Ծ. Խաչատրյան:

2. Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում «2013 թվականի հիմնահարցի» լուծման մասին *Զեկուցող` ՀՀ ԿԲ տեղեկատվական կենտրոնի մասնագետ Մ. Մ. Ավագյան:*

1. ԼՄԵՑԻՆ.

Մ. Մ. Խաչատրյանին – Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի մասին: Զեկուցման տեքստը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Վ. Մկրտչյան - _____

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով կատարված առաջարկություններն ու դիտողությունները՝ հանձնարարել ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտին լրամշակել և մինչև օրվա վերջ ՀՀ ԿԲ խորհրդի հաստատմանը ներկայացնել ՀՀ 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի վերջնական տարբերակը:

2. ԼՄԵՑԻՆ.

Մ. Մ. Ավագյանին - Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում «2013 թվականի հիմնահարցի» լուծման....

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ա. Ա. Հակոբյան - _____

Ա. Դ. Ավետիսյան - _____

ՈՐՈՇԵՑԻՆ.

2.1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը՝ երկրորդ կետում ավելացնելով հետևյալ ենթակետը՝ «ՀՀ բանկերին՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել տեղեկանք՝ ծրագրի ավարտի վերաբերյալ»:

2.2. Հանձնարարել ՀՀ ԿԲ ֆինանսական գործառնությունների դեպարտամենտին....

 Նախագահ՝ (ստորագրություն) անուն-ազգանուն
 Քարտուղար՝ (ստորագրություն) անուն-ազգանուն

Շարադրանքի այս ձևը, կարծում ենք, օգնում է տեքստը ավելի արագ ընթերցելուն և ընկալելուն, տնտեսում է դրանց վրա ծախսվող էներգիայի որոշակի չափ և վերջապես, տեքստի գեղագիտական ձևավորման տեսակետից կարծես նախընտրելի տարբերակ է:

35) Խիստ անմիօրինակություն կա հղումների մեջ տրվող ձևավորումներում և կետադրության մեջ, երբ ընդհանուր վերնագրին հաջորդում է դրա մասնավորում-բացատրությունը կամ բացատրական շարունակությունը: Վերնագիրը և դրա, այսպես կոչված, մասնավորումը գրականության մեջ հանդիպում է՝ կետադրված մի քանի տարբերակներով՝

միջակետով. շարունակությունը՝ մեծատառով. *Դարբինյան Մ., Տամանակակից հայոց լեզու. Կետադրություն, Եր., 1990;*

ստորակետով. շարունակությունը՝ փոքրատառով. **Գյուլ-բուղադյան Ս., Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), պարզ նախադասություն, Ե., 1988;**

ստորակետով. շարունակությունը՝ մեծատառով. **Վ. Մարգսյան և ուրիշներ, Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Ե., 2014: Ս. Աբրահամյան և այլք, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Ե., 2004;**

վերջակետով. «Գրականագիտության ներածություն: Քրեստոմատիա» (կազմ. Էդ. Ջրբաշյան և այլք), Եր., 1984: **Գ. Գևորգյան, Ա. Սահակյան, Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր: Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք (ընդհանուր և հումանիտար հոսքերի համար), Ե., 2009;**

փակագծերի մեջ. Թորոսյան Ա., Հայերենի կետադրությունը (ուսումնաօժանդակ ձեռնարկ):

Միօրինակության համար, թերևս, նպատակահարմար է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- վերնագրին հաջորդող՝ աշխատանքի բնույթի կամ նշանակության բացատրությունը տալ փակագծերի մեջ. **Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն (դասագիրք VII-VIII դասարանների համար), Եր., 1976: «Գրականագիտության ներածություն (քրեստոմատիա)» (կազմ. Էդ. Ջրբաշյան և այլք), Եր., 1984: Գ. Գևորգյան, Ա. Սահակյան, Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր (հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք ընդհանուր և հումանիտար հոսքերի համար), Ե., 2009;**

- վերնագրին հաջորդող մասնավորում-բացատրությունը տրոհել միջակետով՝ սկսելով փոքրատառով, այսպես՝ **Դարբինյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն,**

Եր., 1990: Ս. Աբրահամյան և այլք, Հայոց լեզու, 2-րդ մաս. շարահյուսություն, Ե., 2004: Միջակետի գործածության այս դեպքը կանոնական է համարվում նաև Ս. Աբրահամյանի ձեռնարկում՝ որպես առավելապես վերնագրերում մեկը մյուսի վերաբերյալ մասնավորում արտահայտող բառերի և կամ բառակապակցությունների տրոհության նշան⁹⁷:

Այսպիսով: Թեև արդի հայերենի կետադրության խնդիրները մշտապես եղել են քննարկման առարկա, և մեծ աշխատանք է կատարվել կետադրությունը կանոնարկելու և ճշգրտելու առումով, այնուամենայնիվ դրա հետ կապված շատ իրողություններ տակավին տարակարծությունների առիթ են տալիս: Այսօր ակնհայտ միտում կա կետադրության կանոնները, այսպես կոչված, ազատականացնելու և կանոնական համարելու մի շարք զուգաձևություններ, եթե դրանք սկզբունքորեն չեն հակասում կետադրության ընդհանուր հիմունքներին:

⁹⁷ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 21:

ԳԼՈՒԽ 4.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կետադրությունը հատուկ գրանշանների համակարգ է, որով գրավոր խոսքում նշվում են լեզվական որոշ միավորների (նախադասությունների, նախադասության անդամների, բառերի ու դրանց բաղադրիչների) սահմաններն ու փոխհարաբերությունը, բառերի կամ տառերի զեղչումը, ինչպես նաև բանավոր խոսքի հնչերանգի որոշ տարրեր:

Սովորաբար առանձնացվում է կետադրական նշանների երեք խումբ՝ **տրոհության, բացահայտության և առոգանության**:

1. ՏՐՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մրանք գրավոր շարադրանքում նախադասությունները և դրանց շարահյուսական բաղադրիչները սահմանազատող (միացնող), դրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև բանավոր խոսքի համապատասխան դադարներն արտահայտող կետադրական նշաններն են՝ **վերջակետ, միջակետ, ստորակետ, բույժ, կետ-ստորակետ**: Կան նաև տրոհության համակցված նշաններ՝ **ստորակետ-գլիծ, միջակետ-գլիծ, վերջակետ-գլիծ, բազմակետ-գլիծ**:

ՎԵՐՁԱԿԵՏ

Դրվում է.

1. Ավարտված նախադասության վերջում՝ նշելով համեմատաբար մեծ դադար: Հաջորդող նախադասությունը սկսվում է մեծատառով: Օր.՝

Մեր իրավունքներն ու պարտականությունները հոշակվում են ՀՀ Սահմանադրությամբ: Յուրաքանչյուրս պարտավոր է ճանաչել և հարգել այդ օրենքները:

2. Շարադրանքից պարբերությամբ չանջատված վերնագրից, ենթավերնագրից (այդ թվում՝ *վարժություն, խնդիր, առաջադրանք, հոդված, ծանոթություն* և նման բառերից կամ դրանց թվահամարից) հետո: Օր.՝

Հայոց պատմություն: Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք

Ազգերի լիզայի նպատակը և կառույցը: Միջազգային այս աստյանի կանոնադրությունը հաստատվեց 1919 թ.: Պաշտոնապես գոյատևել է մինչև 1946 թ.:

Հարցեր և առաջադրանքներ: 1. Ինչո՞ւ 1923 թ. Եվրոպայում ճգնաժամ առաջացավ, և ինչպե՞ս այն լուծվեց: 2. Ե՞րբ է Փարիզում ստորագրվել խաղաղության հոշակագիրը:

Վարժություն 1: *Տրված շարադրանքից դուրս գրել անկանոն բայերը:*

Հոդված 4: *Դիվանագիտական ծառայության խնդիրները: Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ ա. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականություն իրականացնելը, բ. միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը:*

3. Ընդհանրական միտք արտահայտող ինքնուրույն նախա-

դասության և դրա մասնավոր դրսևորումները թվարկող նախադասություններից յուրաքանչյուրից հետո: Օր.

ՀՀ քրեական օրենսգրքով՝ մեղքը սահմանվում է հետևյալ կերպ:

1. *Մեղքը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:*

2. *Անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով:*

Ծանոթություն: Եթե բաղադրիչ նախադասությունները պակաս ինքնուրույն են և առավել սերտ կապի մեջ են իրար հետ, ապա կարող են տրոհվել միջակետով (տե՛ս միջակետի գործածության 9-րդ կետը):

4. *Մատենագիտական ցանկում կամ տողատակի հղման մեջ՝ մատենագիտական ամեն մի առանձին տեղեկանքից հետո: Օր.*

Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927, էջ 3802: Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Եր., 1934, էջ XX: Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 136:

5. *Այս կամ այն բնագավառին վերաբերող հարցեր, դրույթներ, թեմաներ ներկայացնող բառերի, բառակապակցությունների միջև, որոնք որպես անվանական նախադասություններ, թվարկմամբ անմիջաբար հաջորդում են իրար: Օր.*

Կինեմատիկայի հիմունքները: Ուղղագիծ հավասարաչափ շարժում: Ուղղագիծ հավասարաչափ շարժման արագություն (սահմանումը ֆիզիկական իմաստով): Արագության մոդուլը: Ճանապարհային արագություն: Արագության միավորը:

Ծանոթություն: Վերջակետ չի դրվում.

ա) Վերջադիր կախման կետերից հետո: Օր.՝

Կոմիտասը տրորեց ճակատը, գլուխը բարձրացրեց... Հավաքած երգերից քչերն էին անխառն:

Չինական այբուբենը շատ բարդ է. ավելի շատ բառարան է, քան այբուբեն... Պահանջվում է մի քանի տարի՝ լավ սովորելու համար:

բ) Շարադրանքից դուրս գործածված վերնագրից, ստեղծագործության, պարբերականի կամ այլ անվանումից, կարգախոսից, կոչից, աղյուսակի, քարտեզի կամ նկարի մակագրությունից, գովազդային կամ տեղեկատու նշանակությամբ նախադասությունից հետո: Օր.՝

Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք

Հաղորդիչների տաքանալն էլեկտրական հոսանքով. Ջոուլ Լենցի օրենքը

«Հանդես ամսօրեայ» պարբերական

«Գագառու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հգոր է այն ժողովուրդը, որը հգոր օրենքներ ունի

Աղյուսակ 5. Ջերմաշարժիչներ

Հոդված 29. Հանցանքը դիտավորությամբ կատարելը

Սպառողական վարկեր

Առանց գրավի

գ) Պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ և այլն), զեկուցումներում և այլ կարգի փաստաթղթերում՝

առանձին տողով գրվող դիմում-կոչականից հետո: Օր.

Տիկնա՛ յք և պարոնա՛ յք

Հարգարժա՛ն գործընկերներ

Մեծահա՛րգ նախագահ, հարգարժա՛ն հյուրեր, սիրելի՛ ներկաներ

Վերապատվելի՛ պարոն

Անջատման գծի հետ գուգորդվելով՝ կազմում է **վերջակետ-գիծ** համակցված նշանը, որը դրվում է ուղղակի մեջբերվող խոսքի երկու ինքնուրույն նախադասությունների միջև ընկած հեղինակային խոսքից հետո: **Օր.**

— *Ի՛նչ կուրացուցիչ լույս է Պասկալը, — նրա «Խորհրդածություններ» գրքի առիթով իր հիացմունքը չի կարողանում զսպել Վոլտերը: — Նա միայնակ կանգնած է իր դարի ավերակների վրա:*

«Եթե հանկարծ մարդը վերանա, տիեզերքեն բան մը կը պակսի՞», — հարցնում էր Մարոյանը, ու ինքն էլ հետևություն անում: — Ըսել է՝ մարդն ու աստղը տիեզերքի համար միևնույն բանն են»:

ՄԻՋԱԿԵՏ

Դրվում է.

1. Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև՝

ա) եթե բաղադրիչ նախադասությունները կապված են առանց շաղկապի, ունեն բովանդակային զգալի ինքնուրույնություն և արտասանվում են զգալի դադարով.

Գարուն էր, և ձյուն չէր արել. թուխայ էր նստած Երևանի վրա:

Լավագույն ժամանակը ծառ տնկելու համար քսան տարի առաջ էր. մյուս լավագույն ժամանակը հենց հիմա է:

բ) Եթե բաղադրիչ նախադասություններից առաջինը պարունակում է ընդհանուր գաղափար, դատողություն, նկարագրություն, որը մասնավորեցվում-բացատրվում է հաջորդ նախադասությամբ կամ նախադասություններով.

Բարին միշտ պիտի հաղթի. դա է երկնային ճշմարտությունը:

Հանդիսատեսը զարմանալի զգայուն հավաքական սիրտ ունի. ինչքան հանդուրժող է ու լայնաբուռ արժանավորի, այնքան ժլատ է անարժանի նկատմամբ:

Բացատրությունը շատ պարզ է. ոչ միայն այս, այլև ցանկացած փորձի ճշտությունը կախված է կատարված չափումների քանակից:

գ) Եթե բաղադրիչ նախադասություններն ունեն պատճառի, հետևանքի, հիմունքի հարաբերություն և միջակետով տրոհվելու փոխարեն կարող էին կապվել **որովհետև, քանի որ, ուստի** շաղկապներով, կամ առկա է **չէ՞ որ** վերաբերականը.

Վրդովված էր. չէր ուզում հաշտվել կատարվածի հետ:

Հանկարծ սիրտը թպրտաց. դիմացից գալիս էր հյուծախտավորի նման վտիտ մի մարդ:

Մարդը ստեղծված է հասարակության համար. նա ընդունակ չէ և քաջություն չունի ապրելու միայնակ:

Կան մարդիկ, որոնք բարոյականությանն այնպես են վերաբերվում, ինչպես որոշ ճարտարապետներ՝ տներին. առաջնային է դառնում հարմարավետությունը:

Ինչո՞ւ ես լռում։ չե՞ որ բոլորը քո խոսքին են սպասում։

2. Անվանում, կոչ, հարցադրում, պնդում կամ դատողություն արտահայտող այն բառից, բառակապակցությունից կամ նախադասությունից հետո, որին հաջորդում է դրա հետ ուղղակիորեն կապված, դրան անմիջականորեն վերաբերող կարծիք, գնահատություն, եզրակացություն կամ մեկնություն։ Օր.

Բացատրական և թարգմանական բառարաններ. սրանք են իմ ամենօրյա օգտագործման գրքերը։

Ձարգացման ի՞նչ ուղի պետք է որդեգրի մեր երկիրն այսօր. այս հարցն է, որ պիտի հուզի մեր քաղաքագետներին։

Վատ բաները ամենավատը չեն, որ կարող են մեզ հետ տեղի ունենալ. ոչինչ. ահա ամենավատ բանը, որ կարող է մեզ հետ տեղի ունենալ։

Ժողովուրդը զարմանալիորեն երկարատև հիշողություն ունի. դա երբևէ չպետք է մոռանալ։

Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ. սա նրա անհրաժեշտությունն է։

3. Այնպիսի բառակապակցությունների միջև, որոնցից երկրորդը արտահայտում է առաջինի վերաբերյալ կամ նրա կապակցությամբ մասնավորում, ընդհանրացում, լրացուցիչ միտք։ Դա հաճախ հանդիպում է վերնագրերում, ենթավերնագրերում, բուն վերնագրի և նրա հավելվածի միջև։ Առաջին բաղադրիչը երբեմն կարող է նախադասություն լինել։ Օր.

Հոռմեական մասնավոր իրավունք. հոռմեական իրավունքի աղբյուրները։

Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. սթաիվելու պահը։

Ոստիկանները Ուկրաինայի ՆԳՆ շենքը հանձնել են ցուցարարներին. ուղիղ միացում Կիևից:

4. Առաջադաս հեղինակային խոսքի վերջում՝ չակերտով կամ անջատման գծով սկսվող ուղղակի մեջբերվող խոսքից առաջ: Օր.

Կոմիտասը ցավեց Սասունից բացակա ձայնի համար ու մտքում որոշեց. «Ձայնեղ մի ծուռ կճարեմ»:

Հանքի վարիչը՝ ողջախոհ, առույգ մի մարդ, ինձ ընդունեց բարյացակամ ողջույնով.

— Դու ժամանակին ես եկել, ինչպես ջրահեղձին է ջրասուզակը փրկում:

5. Իրենից հետո թվարկում ենթադրող ավարտուն նախադասության վերջում, կանոններից, սահմանումներից հետո, երբ դրանց անմիջապես հաջորդում է օրինակը՝ առանց բացահայտման օրինակ, ինչպես, այսպես և նման բառերի: Օր.

*Փորձերի հիման վրա կազմվել է մետաղների արտամղման շարքը. **K, Na, Mg, Al, Zn, Fe, Ni, Sn, Pb:***

Ոչ թե... այլ—ը համադասական շաղկապ է և կապում է համագոր նախադասություններ. «Ժողովրդական հերոսները ժողովրդի ավանդությունների մեջ ոչ թե մեռնում են, այլ դարերի ընթացքում հետզհետե աճում են, մեծանում»:

6. Համառոտագրությունից հետո: Օր.

1920 թ. դեկտեմբերի 2-ին խորհրդայնացված Հայաստանն ուներ մոտ 30.000 քառ. կմ տարածք:

*Համառոտագրության եղանակներից մեկը հետևյալն է. գրվում են բառի միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը, օր.՝ **հմմտ.** (համեմատի՝ ը), **պրն** (պարոն), **արնմտ.***

(արևմտյան), **թրգմ.** (թարգմանություն), **մսնգ.** (մասնագիտական), **հմ.** (համար), **հզվդ.** (հազվադեպ), **օտորբ.** (օտարաբանություն), **դվնգ.** (դիվանագիտական), **փխբ.** (փոխաբերություն), **բժշկ.** (բժշկագիտական), **տնտսագ.** (տնտեսագիտական), **ժղ.** (ժողովրդական):

Ծանոթություն 1: Համառոտագրությունը գրվում է առանց միջակետի, եթե՝

Ա. չափ ու կշռի միավոր է՝ **մ** (մետր), **կգ** (կիլոգրամ), **Վ** (վոլտ), **Հգ** (հերց) և այլն,

Բ. պարունակում է վերջին տառը՝ **մյն** (միլիոն), **հվ** (հարավ), **սբ** (սուրբ), **Հս Քս** (Հիսուս Քրիստոս) և այլն:

Ծանոթություն 2: Համառոտագրությունը գրվում է թվակա՛նով արտահայտված լրացումից անջատ՝ բացատով.

2019 թ., 300 մ, 5 կգ, 2001-2006 թթ., 120 կմ/ժ:

7. Թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո: Օր.՝

1. *Ի՞նչն են ընդունում որպես լարման միավոր:*
2. *Ինչպե՞ս են անվանում այդ միավորը:*
3. *Ի՞նչ լարում են օգտագործում լուսավորման ցանցում:*

Ծանոթություն 1: Թվարկում նշող այն թվանշանը (քանակական թվականը), որից հետո դրված է միջակետ կամ փակագիծ, կարդացվում է որպես դասական թվական՝

1. – առաջին; 1) – առաջին
2. – երկրորդ; 2) – երկրորդ
10. – տասներորդ; 10) – տասներորդ

Ծանոթություն 2: Եթե թվարկում արտահայտող թվանշա՛ն

նից կամ տառից հետո կա փակագիծ, ապա միջակետ չի դրվում: **Օր.**

Բազմապատկե՛ք հետևյալ թվերը.

ա) 94 x 84, գ) 81 x 317,

բ) 314 x 15, դ) 189 x 563:

8. Թվարկվող այն միավորների միջև, որոնք արտահայտված են բառակապակցություններով կամ ունեն ստորակետով նշված ներքին տրոհումներ: Օր.

Արտերկրում ՀՀ դիվանագիտական անձնակազմը հիմնականում ունենում է հետևյալ կառուցվածքը.

1. արտակարգ և լիազոր դեսպան կամ գործերի հավատարմատար.

2. խորհրդականներ (քաղաքական, տնտեսական և այլն).

3. առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարներ.

4. մշակութային կցորդներ (որոշ երկրներում՝ ռազմական):

Ծանոթություն 1: Եթե թվարկվող միավորներն ունեն վերջակետով նշված ներքին տրոհումներ, ապա թվարկվող միավորները տրոհվում են վերջակետով: **Օր.**

Ծրագրով նախատեսված նյութը բաժանվում է մի քանի հիմնական մասերի:(.)

1. Կինեմատոիկա և դինամիկա:

2. Պահպանման օրենքները մեխանիկայում: Հեղուկներ և գազեր:

3. Մոլեկուլային ֆիզիկա: Ջերմային երևույթներ:

4. Էլեկտրաստատիկա: Մագնիսական դաշտ:

Ծանոթություն 2: Կապակցված խոսքից դուրս՝ նոր տողից

կատարվող սուսկական թվարկումների դեպքում տրոհության նշան չի դրվում: **Օր.**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2010 թ. բուհական ընդունելության քննության ծրագիր

1. Հայաստանի բնաշխարհը

ա) Հայկական լեռնաշխարհը

բ) Գետերն ու լճերը

գ) Վարչական բաժանումները

9. Թվարկում արտահայտող այն նախադասությունների միջև, որոնցից առաջինն արտահայտում է առարկան, երևույթն ընդհանուր կերպով, իսկ մյուսները նրա մասնավոր հատկանիշերն են, դրսևորումները, պակաս ինքնուրույն են և առավել սերտ կապի մեջ են իրար հետ՝ ի տարբերություն վերջակետով տրոհվող նախադասությունների: **Օր.**

ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածը սահմանում է.

1. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

2. Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը:

10. Թվանշաններով գրված տվյալների միջև, երբ դրանք նշում են՝

Ա. համար և ենթահամար(ներ). վերջին ենթահամարից հե-

տո դրվում է միջակետ. գրվում են առանց բացատի.

3.2.1. կամ՝ 1.1.3.

Բ. օր, ամիս, տարի (կամ՝ **տարի, ամիս, օր**). վերջում միջակետ չի դրվում. գրվում են առանց բացատի.

02.03.2019

կամ՝ **2019.03.02**

Գ. ժամ, րոպե, վայրկյան. վերջում միջակետ չի դրվում. գրվում են առանց բացատի.

Երգի տևողությունը՝ 3.26.15:

Կհանդիպենք 7.30-ին:

Դ. Գումարի չափ կամ չափական այլ միավոր. վերջում միջակետ չի դրվում. գրվում են առանց բացատի.

3.500 դրամ, 11.125.000.00 դրամ, 11.515 կմ, 10.055 հեկտար:

Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է *միջակետ-գիծ* համակցված նշանը, որը դրվում է բարդ համադասական նախադասությամբ արտահայտված ուղղակի մեջբերվող խոսքի երկու համեմատաբար ինքնուրույն նախադասությունների միջև ընկած հեղինակային խոսքից հետո:
Օր.

— *Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ, — գրում է Հր. Աճառյանը. — լեզուն այն միջոցն է, որով գիտակցությունը մարմին է առնում, մտածմունքը՝ նյութականանում:*

«*Գոյություն ունի արդարության երկու նախասկիզբ, — հայտարարեց բանախոսը. — ոչ ոքի չվնասել և օգուտ բերել հասարակությանը*»:

ԲՈՒԹ

Դրվում է.

1. Բացահայտյալի և ցանկացած տեսակի բացահայտիչի միջև:

Ա. Բուն բացահայտիչ: Օր.

Ամեն ինչ՝ երգ, հրթիռ, ատոմ ստեղծելու մասին գիտեմ, հող ստեղծելու մասին՝ ոչ:

Հայաստանի բոլոր քաղաքները՝ Վան, Կարին, Բագավան, Վաղարշապատ, Արտաշատ, բռնված էին պարսից զորքերով:

Նոբելյան մրցանակը՝ իբրև ողջ աշխարհում ճանաչված ամենապատվավոր պարգև, կրում է շվեդ ճարտարապետ-քիմիկոսի՝ Ալֆրեդ Նոբելի անունը:

Բ. Մասնավորող պարագայական բացահայտիչ: Օր.

Արևելքի հինավուրց քաղաքներից մեկում՝ արքայական դղյակի ժայռեղեն ոտքերի տակ, միջօրեին մեղվանոցի պես բզզում էր շուկան:

Վճարում կատարվում է հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Ծանոթություն: Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող են լինել կրկնակի, եռակի և այլն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ և տրոհվել բուրժով: **Օր.**

Լև Տոլստոյը թաղված է Յասնայա Պոլյանայում՝ անտառում՝ խոր ձորակի փեշին, ուր մի ժամանակ եղբայրների հետ

փնտրում էր այն «կանաչ փայտիկը», որի վրա գրված էր, թե ինչպես կարելի է բարի ու երջանիկ դարձնել մարդկանց:

Հերթական ժողովը կկայանա հաջորդ շաբաթ՝ հինգշաբթի օրը՝ աշխատանքից հետո՝ ժամը վեցին:

Գ. Մասնական բացահայտիչ (տե՛ս նաև էջ 65-66): **Օր.**

Նրան բոլորն էին ճանաչում՝ որպես անվանի ճարտարագետի:

Արիստոտելին՝ որպես իմ ուսուցչի, պարտական եմ նույնքան, ինչքան իմ հորը. հայրս ինձ կյանք է տվել, իսկ Արիստոտելը՝ այն, թե ինչպես կարելի է լավ ապրել:

Իբրև նկարիչ՝ մեծ ճանաչում ուներ, իբրև քաղաքացի՝ բնավ:

Ծանոթություն 1: Երբ մասնական բացահայտիչը նախադաս է, բուժը դրվում է նրանից հետո, իսկ բացահայտյալից հետո ստորակետ չի պահանջվում: **Օր.**

Իբրև հին ծանոթներ՝ նրանք պետք է համերաշխության ձեռք մեկնեին միմյանց:

Որպես հայոց դարավոր մշակույթի կենդանի վկաներ՝ խաչքարերը սփռված են Հայաստանի ամբողջ տարածքով:

Ծանոթություն 2: Մասնական բացահայտիչի հետ չպետք է շփոթել **որպես, իբրև** կապերով ձևի պարագա բառակապակցությունները, որոնք սովորաբար հանդես են գալիս բայ-ստորոգյալի կամ դերբայի կողքին՝ որպես նրա լրացում: **Օր.**

Դիվանագիտական գործակալը պարտավոր չէ ցուցմունքներ տալ որպես վկա:

Որպես տեքստի դրսևորման անվանումներ գործածվող «բանավոր տեքստ» և «գրավոր տեքստ» արտահայտությո-

յունները չեն ընդգրկում տեքստի դրսևորման բոլոր կամ գոնե հիմնական ձևերը:

Որպես ամփոփում ասենք, որ վիպակն ավարտվում է ողբով, քանի որ ծաղրածուն այդպես էլ չի կարողանում հանրությանը պարտադրել իր նկարագիրը:

Պատասխան չուղարկելը վարչական դատարանը կարող է գնահատել **որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:**

Որպես անմիտ զրույց մեզ պատմել են մի օր / Նախնիների մասին մեր փառապանծ:

Որպես, իբրև կապերով ձևի պարագա բառակապակցությունը սովորաբար հնարավոր է լինում փոխարինել **պես** կապով ձևի պարագա բառակապակցությամբ: **Օր.**

Այդ ամենը մեզ մատուցվում էր **որպես անվերապահ ճշմարտություն:** > Այդ ամենը մեզ մատուցվում էր **անվերապահ ճշմարտության պես:**

Ծանոթություն 3: Բազմակի մասնական բացահայտիչներն ընկալվում են որպես բազմակի համագոր անդամներ և միմյանցից տրոհվում են ստորակետով: **Օր.**

Օրվա իշխողը խրոխտ քայլերով փորձում է հասնել այն բանին, որ իրեն՝ **որպես** Բորողինոյի ճակատամարտում հաղթածի, **որպես** հեղափոխության հզոր առաջնորդի, **որպես** արևմտյան արժեհամակարգն ու մտածողությունը տարածողի և, վերջապես, **որպես** «նյու-նապոլեոնի», պետք է տան մեծ դափնիները:

Իբրև հայտնի քանդակագործ, **իբրև** ակտիվ քաղաքացի՝ նա արժանի է բարձր պարգևների:

Ծանոթություն 4. Վերնագրերում որպես մասնական բացա-

հայտիչ ընկալվող կառույցները սովորաբար չեն տրոհվում՝ կետադրական ավելորդ բեռից խուսափելու համար: **Օր.**

Ծաղրածուն որպես նախորդ մշակույթի պահապան

Մահմանադրությունը որպես մեր կյանքի հիմնական օրենք

Բայր որպես խոսքի մաս

Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.)

2. Առաջադաս և վերջադաս տրոհված դերբայական դարձվածների (լրիվ կամ թերի) և նախադասության հիմնական մասի միջև:

Ա. Լրիվ դերբայական դարձված: Օր.

Գիտելիքը զարգանում է շարժման մեջ, մի վիճակից անցնելով մյուսին՝ դառնում է համընդհանուր:

Կավե զավաթից գինի էր ըմպում Օմար Խայամը՝ Խորասանի վշտահար բանաստեղծը՝ ոսկեղեն նարգիզների մեջ նստած:

1982 թ. գրականության ոլորտում Նոբելյան մրցանակի արժանանալով՝ Գաբրիել Գարսիա Մարկեսը դարձավ առաջին կոլումբիացին, որ ստացել էր այդ մրցանակը:

Բ. Թերի դերբայական դարձված (զեղչված գերադաս անդամ դերբայով, որը սովորաբար հնարավոր է մտովի վերականգնել): Օր.

Ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ՝ սողապատե փայլուն մանգաղը ուսին (դրած):

Աչքը հեռավոր ճամփեքին՝ սպասում էր ամուսնու վերադարձին:

Հայացքը առաստաղին (հառած)՝ լսում էր Հմայակ պապի խորհուրդը. «Ոչնչի չես հասնի, եթե չսկսես անել որևէ բան»:

Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մեջքին (դրած)՝ / Դեռ քայլում է սարով, ձորով, աշխարհով, / «Քելե լառ, քելե էրթանք մըր էրգիր»:

Ապրում էր հեռավոր լեռներում՝ քաղաքակիրթ աշխարհի անցուդարձին անհաղորդ (լինելով):

3. Առաջադաս և վերջադաս տրոհված (կապով և կամ դերբայական դարձվածով կազմված) հիմունքի և զիջման պարագաների և նախադասության հիմնական մասի միջև (տե՛ս նաև էջ 69-70):

Ա. Հիմունքի պարագա: Օր.՝

Ի պատասխան Ձեր գրության՝ տեղեկացնում ենք, որ շինարարական աշխատանքները կավարտվեն առավելագույնը երեք ամիս հետո՝ մինչև սույն թվականի նոյեմբերի տասը:

ԶՈՒ շտաբի որոշման համաձայն՝ վաղ առավոտից սկսվեց առաջին գծում տեղակայված գործերի տեղաշարժը:

Ի կատարումն ՀՀ ֆինանսների նախարարի 31.07.2017 թ.-ի թիվ 526-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ Ձեզ ենք ներկայացնում Նոր Նորքի ՀՏ-ում մուտքագրված դատական վճիռներ (այդ թվում՝ սնանկության գործերով) և դրանց հետ կապված համապատասխան այլ փաստաթղթեր:

Գործող քր. օր.-ի հոդված 104-ի առաջին մասի համաձայն՝ սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից գրկելն է:

Բ. Զիջման կամ հակառակ հիմունքի պարագա: Օր.՝

Չնայած գործարկվող ջանքերին՝ Ֆինանսական այդ ծրագիրը չիրականացավ:

*Նա մնաց անդրդվելի. չուզեց վերադառնալ հայրենի գյուղ՝
հակառակ բոլոր հորդորներին:*

***Փոխանակ արմատական քայլեր կատարելու՝** բավարար-
վում էք կառավարության կազմի կոսմետիկ փոփոխությ-
ուններով:*

Ծանոթություն 1: Եթե առաջադաս և վերջադաս կապական հիմունքի և զիջման պարագաները անմիջաբար հաջորդում կամ նախորդում են ստորոգյալին, ապա սովորաբար չեն տրոհվում: **Օր.**

*Ամեն ինչ կատարվեց շատ արագ և կատարվեց **համաձայն մեր նախկին պայմանավորվածության:***

*Բոլորին է հայտնի, որ նա գործել է **ըստ հրամանի:***

***Տնօրենի հրամանի համաձայն** հրավիրվեց ընդհանուր ժողով՝ կարգապահական հարցեր քննարկելու:*

*Մրցումներում մեր խումբը վերջին տեղը զբաղեցրեց **չնայած մեր բոլոր ջանքերին:***

***Օդերևութաբանների լավատեսական կանխատեսումներին հակառակ** սկսվեց ցուրտ ու դաժան ձմեռ:*

Ծանոթություն 2: Չեն տրոհվում նաև առաջադաս և վերջադաս հիմունքի այն պարագաները (անկախ դիրքից), որոնք ձևավորված չեն կապով կամ դերբայական դարձվածով: **Օր.**

*Արտաշես Առաջինը Արտաշատը հիմնադրել է **Հին աշխարհի հռչակավոր գորավար Հաննիբալի խորհրդով:***

***Վարչապետի ծրագրային ելույթից** հասկանալի դարձավ, որ մեր երկրում կաշառակերության ու թալանի դեմ պայքարն այլևս ձևական բնույթ չի կրելու:*

4. Բացառման որոշ կապերով (բացի, բացառությամբ և այլն) ձևավորված առաջադաս կամ վերջադաս անուղղակի խնդրի և նախադասության այլ անդամների միջև, մանավանդ եթե հեռացած է լրացյալից (տե՛ս նաև էջ 76-79): Օր.

Ազգային ժողովը երեկ ընդունեց նախորդ 2 օրերին քննարկված բոլոր օրինագծերը՝ բացառությամբ «Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» օրենքի նախագծի:

Բացի այդ՝ գործարարների խնդրանքով բացվելու է հատուկ հաշվեհամար, որտեղ նրանք ցանկություն են հայտնել ներդրումներ անելու:

Ես չգիտեմ առավելության այլ նշաններ՝ բացի բարությունից:

Նա ամեն ինչով լավն է՝ չհաշված բնավորության որոշ բերություններ:

Ծանոթություն: Այս և նման կառույցները կարելի է տրոհել նաև ստորակետով կամ չտրոհել, եթե իմաստային շփոթի վտանգ չկա: Օր.

Դրանից բացի, գործարարների խնդրանքով բացվելու է հատուկ հաշվեհամար, որտեղ նրանք ցանկություն են հայտնել ներդրումներ անելու:

Քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Սրանից գատ նկատելի էր, որ նա խոսում է անկազմակերպ, շատ չհասկանալով իր ասածը:

**5. Հետադաս բազմակի կամ ծավալուն որոշիչից առաջ:
Օր.**

Միջահասակ մարդ էր այցելուն՝ ցամաքած և նիհար կազմվածքով, ո՛չ մորուք ուներ, ո՛չ ընչազք:

Վարչության պետի կողմից կայացվել է որոշում, որով իմ նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 դրամի չափով՝ ՓԲԸ-ի կողմից 2016 թ. երկրորդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը չներկայացնելու փաստի հիմքով:

Միջերկրական ծովի ափին փոված է Ալեքսանդրիան՝ ուղղազիծ փողոցներով, մարմարիոն պալատներով՝ զարդաքանդակներով ու գունեղ որմնանկարներով:

6. Անորոշ առումով թվարկված վերջադաս բազմակի ենթականերից առաջ: Օր.

Միջուռքի հայաշատ քաղաքներից են՝ Լոս Անջելես, Բեյրութ, Հալեպ, Մոսկվա:

Դասագրքի հեղինակներն են՝ պ. գ. դ., պրոֆ. Վ. Հովհաննիսյան, պ. գ. թ., դոց. Ա. Սարգսյան, իրավբ. գ. թ., դոց. Մ. Ջաքարյան:

Դիվանագիտական գրագրության մեջ ընդունված դիմելաձևեր են՝ երկրի նախագահին՝ Ձերդ գերագանցություն, Պարոն նախագահ, արտգործնախարարին, օտարերկրյա դեսպանին՝ Ձերդ գերագանցություն, Պարոն նախարար, Պարոն դեսպան, Ամենայն հայոց կաթողիկոսին՝ Վեհափառ տեր:

**7. Հետադաս նպատակի պարագայից առաջ, եթե այն անմիջաբար չի հաջորդում ստորոգյալին (տե՛ս նաև էջ 66-69):
Օր.**

Կուժն առավ և հանդարտ քայլերով ուղղվեց մոտակա

աղբյուրը՝ ջրի:

*Երկու օրից պատվիրակությունը մեկնում է Ստրասբուրգ՝
բանակցությունների:*

Ծանոթություն 1: Դերբայական դարձվածով նպատակի պարագան տրոհվում է՝ անկախ վերը նշված հանգամանքից (անկախ նրանից՝ ստորոգյալին անմիջապես հաջորդում է, թե՛ ոչ): **Օր.**

Մեզ այդպես էլ հնարավորություն չտվեցին մեկնելու սահմանամերձ գոտի՝ հանդիպելու սահմանապահ զորքի հրամանատարի հետ:

Բակ դուրս եկավ՝ փոքր-ինչ հանգստանալու և մաքուր օդ շնչելու:

Ծանոթություն 2: Նպատակի կապով (*հանուն, համար, նպատակով, ի շահ և այլն*) ձևավորված հետադաս նպատակի պարագան, անկախ ստորոգյալի նկատմամբ դիրքից, կարող է տրոհվել կամ ո՛չ (տրոհելը նպատակահարմար է, երբ կա իմաստային շփոթի վտանգ): **Օր.**

Երբ վանահայրը նստեց քարին՝ հանգիստ առնելու, նրան մոտեցավ երիտասարդ արեղան(՝) մեկնելուց առաջ վերջին խորհուրդը ստանալու համար:

Այսինքն՝ X-ը թվապես հավասար է այն աշխատանքին, որն անհրաժեշտ է կատարել(՝) հեղուկի մակերևույթի մակերեսը միավորով մեծացնելու նպատակով:

Նոր վարչակազմը իր բոլոր ծրագրերն ու գործողությունները կատարում է(՝) ի շահ Հայաստանի Հանրապետության բարգավաճման:

Շուկայից կադամբ եմ բերել(՝) աղցանի համար:

8. Հեռացած հատկացուցիչից հետո՝ իմաստային շփոթը

կանխելու համար: Հատկացուցիչը բուժով տրոհվում է միայն այն դեպքում, երբ նրա և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված (կամ էլ իր կազմում գոյական ունեցող) այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ՝ իմաստային շփոթի տեղիք տալով (տե՛ս նաև էջ 56-57):

Օր.

ՀՀ նախագահի՝ վերջերս ԱՄՆ կատարած այցելությունը մեծ արձագանք է ստացել ամբողջ Սփյուռքում:

Ջանգվի ափին խաչաձև նստել էր Երևանի՝ շատերի համար գերեզման դարձած մռայլ և տխրադեմ բանտը, որի մութ միջանցքներում անընդհատ լսելի էր բանտապահների կոպիտ կոշիկների՝ գետինը դոփող ձայնը:

Հետազոտվող հեղուկը զբաղեցնում է գնդաձև ծավալի՝ M և N գծիկներով անջատված հատվածը:

Գազաչափից հոսելիս ջրի՝ օդով զբաղեցված ծավալում առաջանում է օդի նոսրացում:

Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով:

Ծանոթություն 1: Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի վրա բուրք դնել՝ իբրև զուգաձևություն: **Օր.**

Տնօրենության(՝) մեզ ուղարկած նամակի պատասխանը պատրաստ է:

Նկարիչը մեծագույն հափշտակությամբ սկսել էր կարգի բերել Արարատյան դաշտի(՝) իր բնանկարները:

Ծանոթություն 2: Հեռացած հատկացուցիչը չի տրոհվում, եթե նրա և հատկացյալի միջև չի լինում գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված անդամ.

*Երբ F ուժը ազդում է ձողի միջնակետում, ապա **ձողի** սեփական կշռով պայմանավորված **ճկմանը** կավելանա F ուժով պայմանավորված ճկում:*

***Ընկերների** նեղ և բարյացակամ **շրջանակն** այն ամենահիանալի նվերն է, որ մենք կարող ենք պարզևեղ մեր երեխային:*

*Խաղի ընթացքում **մեծերի** համարժեք ու խելամիտ **վարքը** երեխաներին օգնում է յուրացնելու մարդկային փոխհարաբերությունների հանրաճանաչ կանոնները:*

9. Նախադասության մեջ իրար հետ չկապվող, բայց իրար հաջորդող բառերից առաջինի վրա իմաստային շփոթը կանխելու համար: Օր.

*Հանցագործություն է համարվում **մեղավորությամբ կատարված՝ հանրության** համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:*

*Հիշեցնենք, որ ՆԱՏՕ-ի **գազաթաժողովներին գուգահեռ՝ Աֆղանստանում** է տեղի ունենալու «Վճռական աջակցություն» առաքելության մասնակից երկրների ղեկավարների հանդիպումը, որին այս տարի Հայաստանից կմասնակցի Նիկոլ Փաշինյանը:*

*Լարման **մեծացմանը համընթաց՝ այդ կախվածությունը** նախ գծային է, հետո ոչ գծային:*

10. Ստորոգյալի, շաղկապի, երբեմն էլ դերբայի զեղչումը նշելու համար:

Ա. Ստորոգյալի լրիվ զեղչում: Օր.

*Մեծ խելքի առջև գլուխս եմ խոնարհում, մեծ սրտի առջև՝
ծնկներս:*

*Կարճ խոսքը նշան է երկար խելքի, երկար խոսքը՝ կարճ
խելքի:*

*Գերմանացիներն աչքի են ընկնում իրենց ճշտապահությամբ,
լրջությամբ, իսկ կատակի ու հումորի նկատմամբ՝
ժխտողական կեցվածքով:*

*Արժե լսել միայն նրան, ում խոսքը ենթարկված է մտքին,
իսկ միտքը՝ ճշմարտությանն ու բարուն:*

*Հաղթահարե՛ք ատելությունը սիրով, սուտը՝ ճշմարտությամբ,
բռնությունը՝ համբերությամբ:*

Ծանոթություն: Եթե բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչի ստորոգյալը դրական խոնարհման բայ է, իսկ երկրորդը նույնն է՝ ժխտական խոնարհմամբ, ապա վերջինս զեղչվելիս փոխարինվում է **ո՛չ, բնավ, ամենևին** կամ **երբեք** բառով, որից առաջ բույժ է դրվում: **Օր.**

Ես տարածքին ծանոթ էի, նա՝ բնավ:

*Առաջ շատ էր մտահոգվում իր գործերով, սակայն այդ
դեպքից հետո՝ ամենևին:*

Նրան հաճախ ենք հանդիպում միջանցքներում, քեզ՝ երբեք:

Բ. Ստորոգյալի մասնակի (բաղադրյալ ստորոգյալի հանգույցի կամ պարզ ստորոգյալի օժանդակ բայի) զեղչում: Բարդ համադասական կամ պարզ նախադասության մեջ նշանակվում է բույթով, եթե՝

1. Զեղչված և չզեղչված ստորոգյալների ենթակաները տարբեր են.

Իմ գայրույթը լիքն է սիրով, / Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

Նպաստակր, այո՛, քաղաքական է, «փչացնելու, քանդելու» գործիքները՝ կատարյալ:

2. Ձեռչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հակադրական հարաբերություն, որն արտահայտված է կամ կարող է արտահայտվել **իսկ** շաղկապով.

*Տգեսների հետ վիճարանելը խիստ վտանգավոր է, քանի որ սկզբից նրանք քեզ իջեցնում են իրենց մակարդակին, **իսկ** հետո՝ հաղթում հարուստ կենսափորձի շնորհիվ:*

*Ս. Դալին մի առիթով գրել է. «Երեք տարեկանում երագում էի խոհարար դառնալ, (**իսկ**) հինգում՝ Նապոլեոն, այսօր ուզում եմ՝ ես ինքս լինեմ»:*

3. Ձեռչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հաջորդման հարաբերություն, որն արտահայտված է **ապա, հետո, այնուհետև, վերջապես** կամ ժամանակի այլ մակբայով.

*Սկզբում քեզ անտեսում են, **հետո՝** ծիծաղում քեզ վրա, **հետո՝** պայքարում քո դեմ, **իսկ** հետո դու հաղթում ես:*

Ծանոթություն: Եթե զեղչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա չէ հակադրական կամ հաջորդման հարաբերություն՝ արտահայտված ժամանակի մակբայով, և դրանք ունեն ընդհանուր ենթակա, ապա ստորոգյալի մասնակի զեղչումը բուրթով չի արտահայտվում: **Օր.**

*Շատերին էր հանդիպել, **լսել** նրանց դժգոհություններն ու **զգացել** տազնապները և միշտ **հավատացել**, որ ժողովրդի ազատատենչ ոգին անմար է:*

*Կրում էին ցնցոտիներ ու կնգուղ, քնում էին մերկ գետնին, աղոթում էին, երգում սաղմոսներ և ամեն օր **սպաշխարում:***

4. Ածականով արտահայտված ստորոգելին հանգույցի բացակայության դեպքում կարող է ընկալվել որպես ստորոգյալի լրացման կամ ենթակայի որոշիչ՝ առաջ բերելով իմաստային շփոթ.

Մեր երկիրը համեմատաբար աղքատ է մակերևութային և հարուստ՝ ստորերկրյա ջրերով:

Նա բարեկիրթ էր աշխատանքային միջավայրում, բայց անզիջում և կոշտ՝ օտարների հետ:

Օանթություն: Ստորոգյալի գեղջման դեպքում ընդունված չէ բութ դնել շաղկապների և շաղկապական բառերի կամ վերաբերականների վրա, քանի որ դրանք լիմաստ բառեր չեն: **Օր.**

*Գիշերով չեմ ուզում մեկնել, **մանավանդ** մենակ:*

*Աղվեսը փոխում է բուրդը, **բայց** ո՛չ բնույթը:*

*Ոչ թե կորստի ցավն էր նրան գիշերուզօր տանջում, **այլ** ամոթի դառն զգացողությունն ու խղճի անիմանալի խայթը:*

*Հարաբերությունների սերտացման ընթացքը որոշվում է ոչ թե Բրյուսելում, **այլ** Երևանում:*

*Ուժը վախի բացակայության մեջ է, **այլ ոչ թե** մարմնի մեջ:*

*Հրադադարի պահպանման մեխանիզմների ներդրումը Բաքուն համարում է ստատուս քվոյի ճանաչում և մերժում է: **Ու ի՞նչ:** Շարունակելո՞ւ ենք տեղապտույտը...*

5. Թերի նախադասությունը վերնագիր, թվարկում, տեղեկատու արտահայտություն կամ գիտական նկարագրու-

թյուն է՝ կապակցված խոսքից դուրս կամ անվանական անդեմ նախադասությանը կից.

Հեղինակ՝ Վահան Թոթովենց

Թարգմանիչ՝ Գ. Մխիթարյան

Չափսը՝ 70 X 100 1/16

Ձինակոչիկների անվտանգ ծառայությունը՝ գերխնդիր

*Սոցիալական խնդիրներին՝ առանձնահատուկ ուշադրու-
թյուն*

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան

*ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ԴԱՏԱԽԱԶ Վ. ՄԱՆԹԱՇՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆ Վ. ՀԱՄԲԱՐՅԱՆԻ
ՔԱՂՀԱՅՅՎՈՐ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ*

Դանիայի Թագավորություն: Տարածքը՝ 44.5 հզ. կմ²: Բնակչությունը՝ 5.3 մլն (1999): Մայրաքաղաքը՝ Կոպենհագեն (500 հզ.): Հայերի թիվը՝ շուրջ 3 հզ.:

Գ. Շաղկապի զեղչում: Բուրով նշանակվում են ստորադասական **որ, թե, եթե, ինչ** շաղկապների և **երբ** շաղկապական բառի զեղչումները: **Օր.**

Մեկ շաբաթ է (, ինչ/որ)՝ աշխատանքի եմ անցել:

(Թե/Եթե) Մեծ հաջողությունների ես ուզում հասնել՝ շա՛տ աշխատիր:

Հնարավոր է (, որ)՝ Աստված ցանկանում է (, որ)՝ մենք հանդիպենք ոչ այն մարդկանց, քանի դեռ չենք հանդիպել այն միակին, որպեսզի երբ դա վերջիվերջո տեղի ունենա, մենք կարողանանք երախտապարտ լինել:

Դ. Դերբայական դարձվածի գերադաս անդամի զեղչում: Բուրով նշանակվում է միայն նույն գերադաս անդամով

բազմակի դերբայական դարձվածներից որևէ մեկում դերբայի զեղչումը: **Օր.**

Մի թիակով ալիքների դեմ կռիվ տալով, մյուսով՝ ամեհի կենդանու՝ հազիվ հասա հանդիպակաց ափը:

Հետո տեղի ունեցան անցքեր՝ մեկը քաղցր հիշողության հետ կապված, մյուսը՝ դառն:

11. Տվյալ բաղադրիչ նախադասության սահմաններում վերջադաս հակիրճ (մեկ կամ մի քանի բառով արտահայտված), չակերտների մեջ չառնված և հեղինակային խոսքից պարբերությամբ չանջատված ուղղակի մեջբերվող խոսքից առաջ: **Օր.**

Երբ Ձեզ ասում են՝ ես ցավում եմ, նայեք այդ խոսքերն աստղի դեմքին... Որքանո՞վ էր նա անկեղծ...

Վերջապես լուսաբացի խաղաղ լռության մեջ հորդաց այնքա՛ն և սպասված հրամանը՝ առա՛ջ:

Բոլորն անհանգստացած իրար նայեցին՝ կարծես լռելյայն աղաղակելով՝ ո՞վ է ի վերջո պատասխան տալու, պարոնա՛յք:

Երբ դու կցանկանաս գտնել այնպիսի մարդու, որ կկարողանա հաղթահարել յուրաքանչյուր, նույնիսկ ամենածանր դժբախտություն և դարձնել քեզ երջանիկ, երբ դա այլևս ոչ ոք չի կարող անել, ուղղակի նայի՛ր հայելուն և ասա՝ ողջո՞ւյն:

12. Որոշիչի վրա, երբ նրան հաջորդում է մեկնական նշանակությամբ անհամասեռ որոշիչ (մասնավորող որոշիչ): **Օր.**

Դիմե՛ք մի նոր՝ փորձառու մասնագետի:

Նրա բոլոր գործողությունները, այնուամենայնիվ, խստո-

րեն պատճառաբանված՝ իրավաչափ բնույթ են ունեցել:

Շատ կուզեի այդ օրը հանդիսությունների սրահում տեսնել մեկ այլ՝ ավելի հանրաճանաչ կատարողի:

Հայտնի չէր, թե երբ է տեղի ունեցել արևմտահայոց նախորդ առաջին համագումարը:

13. Թվարկում արտահայտող նախ, ապա, հետո, մի կողմից, մյուս կողմից, առաջին, երկրորդ, երրորդ, վերջապես և նման այլ բառերի ու բառակապակցությունների վրա (տե՛ս նաև էջ 51-52): Օր.

Նախ՝ այդ մասին տեղյակ չենք եղել, ապա՝ փոխօգնության մասին մենք որևէ պայմանավորվածություն չունենք:

Նրա մոտ առկա են սիրահարության բոլոր «ախտանշանները»՝ առաջին անբնություն, երկրորդ՝ ախորժակի բացակայություն և երրորդ՝ ռտանավոր գրելու մարմաջ:

Մի կողմից՝ փաստերի բացակայությունը, մյուս կողմից՝ օրենսդրական բացը հնարավորություն չեն տալիս լիարժեք քննություն անցկացնելու:

Ծանոթություն: Սրանցից տարբեր են ժամանակային հաջորդականություն արտահայտող **նախ, ապա, հետո** և տարածական հարաբերություններ արտահայտող **մի կողմից, մյուս կողմից** բառերն ու արտահայտությունները, որոնք ինքնին տրոհում չեն պահանջում: **Օր.**

Ճանապարհի մի կողմից մեզ սպառնում էին ժայռից պոկվելու պատրաստ քարերը, մյուս կողմից անդնդախոր կիրճն էր բացել երախը:

Նախ կմտնես գրանցման բաժին, հետո կբարձրանաս երրորդ հարկ՝ բժշկի մոտ:

Սա էր նախկինների նպատակը, որը օտարի գործակալ-

ները նախ ձախողեցին, հիմա էլ ձգտում են նենգափոխելու:

14. Թվարկումների, օրինակների, մեկնաբանությունների նկատմամբ նախադաս բացահայտման վերաբերականների (*այսպես, այսպիսով, օրինակ, այսինքն, այն է* և այլն) վրա: Օր.

Պետք է ավելի գործնական լինել, այն է՝ համագործակցության նոր ուղիներ առաջարկել:

Այսպիսով՝ մեծ հաշվով կարելի է ասել, որ իրանական կողմը մերժել է առաջարկությունը՝ այն որակելով նաև քարոզական:

Ծանոթություն: Բացահայտման վերաբերականից առաջ սովորաբար դրվում է ստորակետ, երբեմն՝ միջակետ կամ վերջակետ: **Օրինակ, այսպիսով** բառերը միջադաս գործածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորակետերի մեջ (տե՛ս նաև էջ 46-47): Օր.

Դուք, օրինակ, այդ մասին պիտի տեղեկացված լինեիք մեկ շաբաթ առաջ:

Բարեկամներից, այսպիսով, պահանջվում էր միայն անդորրագիրն ամսագրից առանձնացնել և լրացնելով ուղարկել ընկերությանը:

15. Սովորաբար համարակալված թվարկումից առաջ, եթե թվարկմանը նախորդում է բառ կամ բառակապակցություն, որի անմիջական շարունակությունն են թվարկվող միավորները: Թվարկվող բաղադրիչները տրոհվում են միջակետով կամ ստորակետով: Օր.

Տուժողը սույն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- 1. ծանոթանալու առաջադրված մեղադրանքին,*
- 2. ցուցմունքներ տալու,*

3. բացատրություններ տալու,
4. ներկայացնելու նյութեր՝ քրեական գործին կցելու և հետազոտելու համար,
5. բացարկներ հայտնելու,
6. միջնորդություններ հարուցելու նն:

Բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝ ա. ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի աստիճանը. բ. ՀՀ արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի աստիճանը:

16. Բազմության մասնակիորեն թվարկվող կամ առանձնացվող տարր(եր)ին նախորդող սաստկական վերաբերականների վրա (այդ թվում, ընդ որում, մասնավորապես, հատկապես և այլն) նկատի ունենալով ստորոգյալի զեղջման պարագան: Վերաբերականից առաջ դրվում է ստորակետ: Օր.

Նիստին չէին մասնակցում շատ խմբակցություններ, **այդ թվում՝** իշխող կուսակցության խմբակցությունը:

Շատ տխրեցնող տեղեկություններ ստացանք կեսօրին Աբովյան քաղաքից, **մասնավորապես՝** 12/61, 12/66 տեղամասերից:

Ճակատագրապաշտությունը այս կամ այն չափով թերևս հատուկ է բոլոր ժողովուրդներին, **հատկապես՝** քրիստոնյա ազգերին:

Ծանոթություն: Եթե նույն սաստկական վերաբերականներով մասնավորեցումը կատարվում է առանց նշելու բազմությունը, ապա տրոհման կարիք չի լինում: **Օր.**

Թվում էր՝ դա վաղուց հայտնի էր ու պիտի լավ կազմակերպված լիներ **մասնավորապես** հանդիպումների և ակնկալիքների առումով:

Բարեկարգ, ինքնատիպ ու հարուստ ճարտարապետությամբ դաստակերտներով աչքի է ընկել **հատկապես** Գորիսը:

ՄՏՈՐԱԿԵՏ

Դրվում է.

1. Պարզ նախադասության *և, ու, կամ, թե* շաղկապներով չմիացած բազմակի (համագոր) կամ կրկնվող անդամների միջև: Օր.

Ու տուն վերադարձավ Արշակը զվարթ, ուրախ, ջահելացած, անհոգ:

Պատահում էր՝ նրան տիրում էր հոգեկան թուլություն, հուսալքություն, անտարբերություն, և այդ պահերին աշխարհը նրան թվում էր ամայի, ցուրտ, անհյուրընկալ, օտար:

Հայաստանի մայրաքաղաքներ են եղել Անին, Վանը, Դվինը, Վաղարշապատը, Արտաշատը, Արմավիրը և այլն:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի...

Մեր ընկերն էր, մեր մանկության ընկերը:

Ծանոթություն: Կրկնվող անդամների յուրօրինակ դրսևորում է նաև *և այլն* կապակցության կրկնությունը, որը նույնպես տրոհվում է ստորակետերով: Օր.

Այցը, ասում են, առանցքային նշանակություն ունի. բովանդակային փոփոխությունների հարց է բարձրացնում, արտաքին քաղաքական նոր օրակարգ է ձևավորում, դուռ է բացում նոր՝ արդյունավոր բանակցությունների, մեծապես աշխուժացնում է երկրի քաղաքականության առօրյան և այլն, և այլն, և այլն:

2. Անշաղկապ բարդ համադասական նախադասության այն բաղադրիչների միջև, որոնք սերտ կապված են թե՛ իմաստով, թե՛ հնչերանգով: Օր.

Շունը մոտեցավ, կանգնեց հետևի ոտքերի վրա, թաթերը

բարձրացրեց, դրեց տիրոջ կրծքին, քնքշանքով նայեց նրա երեսին՝ կենդանական բնագորով ցանկանալով գուշակել, թե ինչու է նա այդքան տխուր:

*Ծանոթ շները չեն հաչում վրադ,
Ծանոթ մարդիկ են հաչում քո վրա:*

*Հոգնեցրին ինձ արդեն օրերը լայն ու նեղ,
Հոգնեցրին ինձ արդեն մեղավոր ու անմեղ,
Հոգնեցրին ինձ արդեն տխրությունն այս ցանցառ
Ու կարոտներն այս խեղճ,
Դե բա՛ց կեղևդ, ծա՛ռ, ա՛ռ ինձ կեղևիդ մեջ:*

3. Շաղկապվոր բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև: Օր.

Նշանակում է՝ տատիցս առաջ կար հայրս, իսկ հորիցս առաջ կայի ես, ուրեմն որտե՞ղ է ակունքը:

Այդ խոսքերի մեջ մեծ ճշմարտություն կա, բայց քիչ չէ նաև ծաղրը:

Նոր Ձելանդիայում հայերը սկսել են հաստատվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, սակայն հայտնի է, որ դեռևս 1800-ականներից առանձին անհատներ (Չոհրաբյան գերդաստանի ներկայացուցիչներ) Մեծ Բրիտանիայից գաղթել են Նոր Ձելանդիա:

Ծանոթություն 1: Բարդ համադասական նախադասության՝ **և, ու, կամ** շաղկապներով կապակցված բաղադրիչ նախադասությունները՝

Ա. չեն տրոհվում, եթե ունեն ընդհանուր ենթակա.

Մի քանի մարտիկներ դուրս եկան տնից և գետնին պառկած՝ սկսեցին կրակել թշնամու վրա՝ նրա առաջխաղացումը կասեցնելու համար:

Բ. տրոհվում են, եթե ընդհանուր ենթակայով չեն, այսինքն՝
ա. ունեն տարբեր ենթականեր.

Նա, ով ընդունակ է թույլերին վշտակցելու, ուժեղ է, և նրանով էլ արտահայտվում է նրա ոգու ուժը:

Արշակը երեք օրվա ընթացքում պիտի ազատ արձակվեր, կամ պիտի քրեական գործ հարուցվեր, և նրան կալանավորեին:

Մեծ Բրիտանիայում առաջին հայ համայնքներն ստեղծվեցին XIX դ. 30-ական թվականներին, և պոլսեցի մի քանի հայ վաճառականներ առևտրական գրասենյակներ ու գործակալություններ հիմնեցին Լոնդոնում և Մանչեսթրում:

Ես միայն մեկ բռնակալ գիտեմ, և դա իմ խղճի կամացուկ ձայնն է:

բ. ենթական համագոր նախադասություններում կրկնվում է նույնությամբ կամ թեկուզ այլ բառով.

Նա միանգամայն տիրապետում է իրավիճակին, և նա՛ պետք է մեզ առաջնորդի:

Մեռավ կայսրը, և կեցցե՛ կայսրը:

Օհաննան շքեղորեն ներխուժեց սենյակ, և նա չնաշխարհիկ գեղեցկություն ուներ:

Պետք է ականջալուր լինել այն երեխայի ձայնին, որը մենք էինք մի ժամանակ, և որը ապրում է դեռ մեր մեջ՝ ինչ-որ անկյունում. եթե մենք լսենք նրան, մեր աչքերը կրկին փայլ կստանան, և եթե մենք չկորցնենք կապն այդ երեխայի հետ, ապա չենք կորցնի նաև մեր կապը կյանքի հետ:

Ծանոթություն 3: Ստորակետով տրոհվում են նաև **և, ու, կամ** շաղկապներին նախորդող տրոհվող անդամները՝ դեր-

բայական դարձված, բացահայտիչ, հիմունքի կամ զիջման պարագա, բազմակի կամ ծավալուն (բազմանդամ) որոշիչ, **բացի, առանց, զատ** կապերով կապակցություններ, երկրորդական նախադասություն և այլն: **Օր.**

Պլատոնն այնժամ նրան հորը վերադարձրեց և ասաց. «Նա արժանի է պալատում թագավոր լինելու՝ միշտ ոտքի վրա կանգնած, և ոչ իմ լսարանում լինելու, որովհետև ոչ նստել կարող է, ոչ էլ գլուխ խոնարհել»:

Խորհրդային Միությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ի հեճուկս Միացյալ Նահանգների, և հեղափոխություն հրահրեց Կուբայում:

Ձեռքով նշան էր անում դեպի ներքև՝ դեպի գետի արմունկը, և ինչ-որ բան էր փորձում հասկացնել:

Շուտով պիտի հնչեին եկեղեցու զանգերը՝ չոր ու գուժկան, կամ պիտի լռեին առհավետ:

Հայերի չյուբշմանը, տարբերակելով բնիկ հայկական տարրերը իրանական փոխառություններից, ժխտել է իր ժամանակ իշխող այն կարծիքը, թե հայերենը իրանական խմբին պատկանող լեզու է, և հանգել է այն եզրակացության, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է:

Հայտարարեց, որ լիազորված չէ իր պաշտպանյալի անունից խոսելու, և դուրս եկավ նիստերի դահլիճից:

4. Ստորադասական շաղկապներով կամ հարաբերական դերանուններով միացած գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև: Օր.

Բնչպիսի՞ն կլինի մարմնի շարժումը, եթե նրա վրա սկսի

ագդել մողուլով հաստատուն ուժ, **որն** ուղղված է արագության վեկտորի ուղղությամբ:

Այն գիծը, **որով** շարժվում է մարմինը, կոչվում է հետագիծ, իսկ հետագծի այն տեղամասի երկարությունը, **որով** մարմինը շարժվել է որոշակի ժամանակամիջոցում, կոչվում է ճանապարհ:

Գիտելիքներն ու իմաստությունն այցելում են մեզ այն ժամանակ, **երբ** դրանց կարիքը մենք այլևս չունենք:

Ազատությունը ոչինչ չարժե, **եթե** չի պարունակում սխալվելու ազատություն:

Զգուշացի՛ր նրանից, **ով** քո հարվածին չի պատասխանել:

Ես գլխարկ չեմ կրում, **որպեսզի** ոչ ոքի առաջ դա չհանեմ:

Ծանոթություն 1: Իրար հաջորդող երկու շաղկապների (նաև «շաղկապ + հարաբերական դերանուն» կառույցների) դեպքում երկրորդ միավորը առաջինից կարող է ստորակետով չանջատվել: Դա հատկապես նախընտրելի է, երբ առաջին միավորից առաջ արդեն ստորակետ կա: **Օր.**

Ժողովրդավարության ողջ հանդիսակարգը, նրա թագն ու պսակը, նրա գլխավոր էությունը ընտրություններն են, **և եթե** դրանք կեղծվում են, ուրեմն հասարակությունը առողջ չէ:

Վերջապես հայտնվեցին թիկնապահները, **և որքան** էլ փորձեցին անաղմուկ գործել, ոչինչ չստացվեց:

Սակայն եթե կանանց մասնակցության առումով նայում ենք հայ քաղաքական կուսակցությունների ներկա դեկավարական պատկերին, ապա նկատում ենք, որ վիճակը շատ տխուր է:

Ծանոթություն 2: Ստորադասական շաղկապից առաջ

ստորակետ չի դրվում, երբ շաղկապը միջադասված է երկրորդական նախադասությամբ: **Օր.**

Նրան թե տեսնես, բացատրի՛ր ստեղծված իրավիճակը:

Վահանը քանի որ անսահմանորեն հոգնած էր ու անտրամադիր, հապճեպ պատկեց քնելու:

Այս փուլում էթե «Մանչեսթրը» հաղթանակ չգրանցի, ապա հավանաբար դուրս կմնա կիսաեզրափակիչ խաղերից:

5. Նախադասության հիմնական մասի և կոչականի միջև: Վերջինիս միջանկյալ լինելու դեպքում ստորակետ դրվում է նրա երկու կողմից: Օր.

Որքան գովում են քեզ, աչքդ չի կշտանում. դու անգոհ ես, իմ էրգ, և ինքնապաշտ:

Յուրաքանչյուր բացվող առավոտվա կամ իմ / Յուրաքանչյուր տեսած երազի մեջ, / Անգամ մի դուռ է երբ իմ դեմ բացում քամին, / Հանդիպումդ եմ հսկում, ի՛մ Նավզիկե:

Լռությա՛ն երկինք, խոսի՛ր դու ինձ հետ....

6. Նախադասության հիմնական մասի և միջարկումների (միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների) միջև, եթե դրանք փակագծերի մեջ չեն առնված: Օր.

Վերջին օրերի տեսած խոսակցությունները, էթե կուզեք, Ձեր անհամբերության և հեղհեղուկ բնավորության հետևանքն են:

Մարդկային գործողությունների պատճառները, իբրև օրինաչափություն, անսահմանորեն ավելի բարդ ու բազմազան են, քան միշտ հետո մենք բացահայտում ենք դրանք, և հազվադեպ են որոշակի գծագրվում:

Որպես կանոն, վարչակազմը ներման վերաբերյալ միջնոր-

դուրսնուններ ներկայացնում է այն բանից հետո, երբ դատապարտյալը պատժի ժամկետի նշանակալի մասը կրել է:

7. Չայնարկությունների և նախադասության հիմնական մասի միջև: Օր.

Վա՛յ, ի՞նչ կա այդքան անհանգստանալու. շուտով ամեն ինչ կկարգավորվի:

Ավա՛դ, լուսնի տակ և վեհ բան չկա, / Ամեն ինչ՝ կոպիտ, բիրտ, անասնական, / Աննյութ, անմարմին, անկիրք սեր չկա, / **Ա՛խ,** մաքուր սերը երազ է միայն:

8. Տրոհվող վերաբերականների և նախադասության հիմնական մասի միջև (տե՛ս նաև էջ 71-73): Օր.

Եվ, **ցավոք,** իրականություն դարձավ նախազգացումս:

Նավը արագորեն ջրասույզ էր լինում, անձնակազմը, **սա-կայն,** դեռ չէր լքում խորտակվող նավը:

Հիրավի, դժվար է Աղթամարի տաճարը սուկ ճարտարապետական կոթող համարել, քանի որ այնքա՛ն առաջատար նշանակություն ունեն նրա հոյակապ բարձրաքանդակները:

Բնչ-որ բան, **իհարկե,** անպայման կպատահի, որովհետև չի լինում այնպես, որ որևէ բան ձգվի հավերժորեն:

9. Միջադաս տրոհված դերբայական դարձվածից, ինչպես նաև զեղչված դերբայով դարձվածից առաջ և հետո: Օր.

Մարտուն, շողարձակ ձյունը, **իջնելով մեղմասահ, հանդարտ,** մի քանի րոպեում ծածկոցի տակ առավ սար ու ձորի վայրիվերումները:

Ավելի ուշ Հայաստանյայց եկեղեցին, **հենվելով ավանդազրույցների վրա,** իր պատմությունը պիտի սկսի առաքյալներից:

10. Հիմունքի ու զիջման միջադաս տրոհված (կապով կամ դերբայական դարձվածով արտահայտված) պարագաներից առաջ և հետո: Օր.

Սոցիալական ճանաչողությունը, ի տարբերություն բնագիտական ճանաչողության, ուսումնասիրում է ոչ թե օրինաչափությունները, այլ առանձնահատուկը, ինքնատիպը, հետաքրքրականը:

Հայերը ՌԴ ազգությունների շարքում, պաշտոնական տվյալների համաձայն, զբաղեցնում են 5-րդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 4-րդ տեղը:

Որոշ ուժեր, փոխանակ «Երկրապահին» աջակցելու, իրենց անհեռատես գործելակերպով փորձում են արժեզրկել նրանց նվիրվածությունն Արցախի ժողովրդին:

Դուք, երիտասարդ, նրա անփառունակ գործունեությունը գովերգելու փոխարեն, լավ կլինի Ձեր անելիքների մասին մտածել:

Ծանոթություն: Հիմունքի ու զիջման միջադաս պարագաները չեն տրոհվում, եթե արտահայտված չեն կապով կամ դերբայական դարձվածով: Օր.

Գործի քննությունը իմ խորին համոզմամբ պետք է տեղափոխվի իրավական դաշտ:

Բեյառուսում 1989-1999 թթ. պաշտոնական մարդահամարի տվյալներով ապրում է 10 հազարից ավելի հայ:

11. Բացառման որոշ կապերով (բացի, բացառությամբ և այլն) ձևավորված միջադաս անուղղակի խնդրից առաջ և հետո, մանավանդ եթե հեռացած է լրացցալից (տե՛ս նաև էջ 76-79): Օր.

Բավական է, որքան հնությունների մասին խոսեցինք.

դրանք, բացի դատն հիշատակներից, ոչ մի ուրախալի բան չեն պարունակում իրենց մեջ:

Զգուշացումից հետո բոլորը, բացառությամբ մեր բաժնի աշխատողների, մասնակցեցին շաբաթօրյակին:

Անհրաժեշտ է ստեղծել արհեստավարժ պետական ծառայողների դաս, որը, անկախ կուսակցական ճնշումներից, կծառայի պետությանը:

Ծանոթություն: Այս և նման կառույցները կարելի է չտրոհել, մանավանդ եթե լրացյալի կողքին են, և եթե իմաստային շփոթի վտանգ չկա: **Օր.**

Օսմանյան կայսրության մեջ հայերից զատ կային հույներ, որոնց նկատմամբ այլ քաղաքականություն տարվեց, և կային նաև մուսուլման ժողովուրդներ, որոնց ինտեգրացումը (ձուլումը) կարծում էին կարելի դարձնել:

12. Բուն և մասնավորող պարագայական, ինչպես նաև հետադաս մասնական բացահայտիչներից հետո:

Ա. Բուն բացահայտիչ: Օր.

Երեք կարևոր փաստաթղթեր՝ ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը, սպայական կազմի պատրաստման ժամանակային քարտեզը և հայեցակարգի ապահովման միջոցառումների ժամանակային քարտեզը, ՀՀ Կառավարությունը հավանության արժանացրեց:

Երկրորդական ձևույթի մի տեսակը՝ ածանցը, ավելանալով արմատին կամ բառին, փոխում են նրա իմաստը կամ խոսքիմասային պատկանելությունը:

Բ. Մասնավորող պարագայական բացահայտիչ: Օր.

Քաղկեդոնի ժողովից հետո՝ ներկեղեցական գծությունների ժամանակ, հայոց եկեղեցին վարանոտ, բայց հետև-

դականորեն բռնեց, ավելի ստույգ՝ շարունակեց իր ինքնուրույնացման ճանապարհը:

Գ. Մասնական բացահայտիչ: Օր.

Դուք՝ որպես պատասխանող, պարտավոր եք, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան:

Ծանոթություն 1: Երբ մասնական բացահայտիչը նախադաս է, ստորակետը դրվում է նրանից առաջ: **Օր.**

Առաջին օրը, իբրև նոր ծանոթներ՝ մենք խոսեցինք քաշվելով ու կցկտուր:

Ծանոթություն 2: Բացահայտիչից հետո ստորակետ սովորաբար չի դրվում, եթե՝

1. սեռական–տրական հոլովի անորոշ առումով (անձնական դերանվան սեռական հոլովով) է.

Այդ լրագրողի՝ «Ազգ»-ի քեզ ծանոթ թղթակցի ելույթը մեզ հետաքրքրեց:

2. նրան հաջորդում է օժանդակ բայ կամ հանգույց.

Մեր մեծ հայրենակցին՝ Մոնթեին ենք պարտական ռազմական այդ մեծ հաջողությունների համար:

3. նրան հաջորդում է հավելական շաղկապ (էլ, ևս) կամ սաստկական վերաբերական (իսկ, անգամ, նույնիսկ և այլն).

Հակոբը՝ մեր ընկերն էլ ներկա պիտի լինի:

4. նրան հաջորդում է դերբայ.

Ոտքի էին ելել նաև կենտրոնում՝ սեղանի շուրջը բոլորած մարդիկ:

5. նրան հաջորդում է **կապ**, որն ընդհանուր է թե՛ բացահայտիչի, թե՛ բացահայտյալի համար:

Ներկայացված փաստաթղթի՝ հայտարարության մասին տեղյակ էին բոլորը:

6. նրան հաջորդում է բուժով տրոհվող այլ անդամ՝ տրոհված որոշիչ, վերջադաս դերբայական դարձված, հիմունքի կամ զիջման պարագա և այլն:

Կաթողիկոսական գահին նստած էր վեհաշուք Խրիմյան Հայրիկը՝ Ամենայն հայոց հայրապետը՝ արծվաքիթ, կապույտ աչքերով:

Հրաժարվում էք մտքից դուք՝ ուժին տիրապետողներդ՝ մոռանալով պատմության դասերը:

Հանդիպեցինք վաղ առավոտյան՝ դեռ արևը չծագած՝ ըստ պայմանավորվածության:

Ծանոթություն: Եթե բացահայտիչին հաջորդող կապը միայն նրանն է, ապա ստորակետ է դրվում կապից հետո: **Օր.**

Մեծ Հայքի Արցախ աշխարհում՝ Ադստն գետի մոտ, Սուրբ խաչ վանքն է:

Գեսօրին՝ նիստը սկսելուց կես ժամ առաջ, նա դեռ փորձում էր ինչ-որ փաստեր ճշտել:

12. Տրոհված հետադաս որոշիչից հետո: Օր.

Հին Գորիսում յուրաքանչյուր հողամաս զբաղեցնում էր 900 քառակուսի մետր, որի անկյունում՝ փողոցի վրա, տունն էր՝ մի կամ երկու միանման հարկով, և մարագը, իսկ մնացածը

պարտեզն էր՝ **գրեթե նույն ծառերով**, ինչ որ փողոցում:

Կառույցի բոլոր անդամները՝ **տարեց թե երիտասարդ**, հավաքված էին այդտեղ:

Այդ հսկա քաղաքը՝ **մարդաշատ և աղմկոտ**, ապրելու տեղ չէ:

13. Համեմատության կապերով (ինչպես, ասես, ոնց որ, քան և այլն) ձևի պարագաների և նախադասության այլ անդամների միջև: Օր.

Բարոյականության մեջ ուղիղ գիծը, ինչպես և մաթեմատիկայում, ամենակարճ ուղին է:

Պայծառ էր, ինչպես գարնան առավոտը:

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, որպես իր պապերը:

Մարդու համար չկա ավելի հետաքրքիր բան, քան մարդիկ:

14. Վերջադաս դերբայական դարձվածի և միավորիչ և, ու, կամ շաղկապներով սկսվող հաջորդող համադաս նախադասության միջև: Օր.

Վեր կացավ՝ հապշտապ ուղղելով փողկապը, և առանց հրաժեշտ տալու՝ հեռացավ:

Էյնշտեյնը ներքուստ վիրավորվում էր, որ իրեն վճարում են գիտության համար. երազում էր լինել ցրիչ կամ ջրկիր՝ դրանով վաստակելով իր ապրուստը, և զբաղվել գիտությամբ՝ առանց դրանից անձնական սպասելիքներ ունենալու:

15. Մատենագիտական աղբյուրի նկարագրության մեջ ներկայացվող տվյալների միջև: Օր.

«Վիեննայի կոնվենցիան դիվանագիտական հարաբերու-

թյունների մասին», Վիեննա, 1961 թ., ապրիլի 18:

«Հայ սփյուռք: Հանրագիտարան», Երևան, 2013:

Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է ստորակետ-գիծ համակցված նշանը, որը դրվում է.

1. ամբողջական նախադասությամբ ուղղակի մեջբերվող խոսքի նկատմամբ միջանկյալ հեղինակային խոսքից առաջ ու հետո.

«Այս մարդը, — մտքում ասաց երիտասարդը, — այնքան մեծ վերք է պատճառել ինձ, բայց ոչինչ չի հիշում»:

2. ամբողջական նախադասությամբ վերջացող ուղղակի մեջբերվող խոսքի նկատմամբ վերջադաս հեղինակային խոսքից առաջ (եթե ուղղակի մեջբերվող խոսքը չակերտավոր է, ապա փակող չակերտից հետո).

— Ես ձեռքերս լվանում եմ այս անմեղի արյունից, — գոչեց Պոնտացի Պիդատոսը:

«Որտե՞ղ են նրանք», — մտածեց երիտասարդը, և նրա դեմքի վրա նկատվեցին անհամբերության նշաններ:

ԿԵՏ-ՍՏՈՂԱԿԵՏ (;)

Դրվում է իրենց ներսում ստորակետ(եր)ով տրոհում ունեցող ծավալուն թվարկումների անդամները միմյանցից տրոհելու համար (տե՛ս նաև էջ 83-84): **Օր.**

*Արդի արևելահայերենում -ու հոլովման պատկանող բառերից զուգահեռաբար -ի հոլովման են ենթարկվում նաև մի քանի հաստուկ և հասարակ անուններ՝ **Էրեբունիի, Մուղնիի, Մեղրիի, Վեդիի, Աղասիի, Բաֆֆիի, Քենեդիի; այրիի,***

այրուձիի, գերիի, կանաչիի, նարդիի, նավաստիի, օղիի, քեռիի, սոնիի ևն:

Գործառական տարբեր ոճերի պատկանող տրված բառաշարքերից առանձնացնել գեղարվեստական ոճին բնորոշ շարք(եր)ը՝ **ձյունածածկ, ճերմակ, հրկեզ, երենոսյա, տխրություն; քառանիստ, ժամանակաչափ, եռաթև, հավասարակողմ; փաստ, նյութեր, գործ, հայց, իրավաչափ; ծաղկաթերթ, արմատակալ, սածիլ, տնկարկ; մկունդ, աշտե, բագին, հրովարտակ, մեհյան; լուսավոր, վեհ, երագ, խոհ, հառնել, գալիք:**

Զուգադիր շաղկապներից են՝ **երթե, ապա.....; ոչ միայն, այլև.....; թեն, սակայն.....; և այլն:**

Փոփոխել տրված դարձվածքները՝ **մի ծաղկով գարուն չի գա; համբերությունը կյանք է; լեռը երկնեց, մուկ ծնեց; մի՛ դատիր, որ չդատվես; պղտոր ջրում ձուկ որսալ:**

2. ԲԱՅԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մրանք գրավոր խոսքում նախադասության միտքը, բառերի հարաբերությունը պարզող, շարահյուսական որոշակի կառույցներ, անվանումներ, վերնագրեր և խոսքի այլ տարրեր նշող, ինչպես նաև բանավոր խոսքի համապատասխան դադարներն ու ձայնի ելևէջները լրացուցիչ կերպով արտահայտող կետադրական նշանները և դրանց համակցություններն են՝ **չակերտներ, փակագծեր, զուգագիծ, կոտորակի գիծ, կախման կետեր, բազմակետ, անջատման գիծ, միության գծիկ, ենթամնա, ապաթարց, աստղանիշ:**

ՉԱԿԵՐՏՆԵՐ

Չակերտվող հատվածի սկզբում դրվում է բացող (ձախ) չակերտը, վերջում՝ փակող (աջ) չակերտը:

Չակերտների մեջ են առնվում.

1. Մեջբերվող ուղղակի խոսքը՝ լինի գրավոր, հնչող թե ներքին, իրական, ենթադրյալ թե վերագրվող, ամբողջական թե թերի, հեղինակի խոսքին քերականորեն ձուլված թե չձուլված: Օր.

Մեծ հայրենասեր էր Վ. Մարոյանը: «Հայաստանը, — ասել է նա, — մեր արևն է, մեր քարն է, մեր ծովն է, մեր պատմությունն է, մեր անմիջականությունը...»:

Դառնությամբ հիշում էր իմաստուն նախահոր խրատ-զգուշացումը. «Բոլոր չարիքները ի գործ են դրվում դեմքի խելոք արտահայտությամբ»:

Գրողի հայտնի մատյաններից մեկում կարդում ենք. «Բոլոր մարդիկ ուզում են ապրել լեռան գագաթին՝ չգիտակցելով, որ իրական երջանկությունը վեր բարձրանալու ճանապարհն է»:

Երբ Պուշկինին հարցնում են, թե ինչ կարծիքի է այն ռուս տիկնոջ խելքի մասին, ում հետ քիչ առաջ զրուցում էր, ասում է. «Չգիտեմ. հետը ֆրանսերեն էի խոսում, ո՛չ ռուսերեն»:

2. Գիտական և արվեստի երկերի, լրատվական հոդվածների, իրավական փաստաթղթերի, զեկուցումների վերնագրերը, պարբերականների անունները, համույթների, հիմնարկների, կազմակերպությունների, զբոսայգիների, ապրանքների, շքանշանների պայմանական անունները, մականիշերը՝ խոսքում մեջբերվելու դեպքում: Դրանք սկսվում են մեծատառով: Միջադաս լինելու դեպքում չակերտից առաջ

ԿԵՏԱՊՐՈՒԹՅՈՒՆ չԵՆ ԱԿԱԽԱՆՉՈՒՄ: Օր՝

Մարտիրոս Մարյանի «Երեք» հասակ» գեղանկարը, ՀՀ «Լեզվի մասին» օրենքը, Մարքսի «Կապիտալը», Թումանյանի «Անուշը», «Օխելու վնասները» զեկուցումը, «Ակունք» ազգագրական համույթ, «Հաղթանակ» զբոսայգի, «Հրագրան» մարզադաշտ, «Նարեկացի» ակումբ, «Զանգակ» գրատուն, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Արարատ» մարզական ընկերություն, «Սատուռն» գործարան, «Վասպուրական» հայրենակցական միություն, «Առավոտ» օրաթերթ, «Բազմավեպ» հանդես, «Կոմիտաս» դաշնամուր, «Տիգրան Մեծ» կոնյակ, «Պեժո» ավտոմեքենա, «Ախթամար» ծխախոտ, «Սև ասպետ» կակաչ, «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, «Իմ քայլը» դաշինք, «Պատվոնշան» շքանշան, «Մարտական ծառայությունների համար» մեդալ:

Ծանոթություն 1: Հիշյալ չակերտված անվանումներն ու վերնագրերը կապակցված խոսքից դուրս (օրինակ՝ վերնագիրը՝ հոդվածի սկզբում կամ գրքի կազմին, անվանումը՝ թերթի ճակատին կամ որպես խմբագրության ցուցանակ) գործածվում են առանց չակերտների:

Ծանոթություն 2: Հոլովվելիս վերջավորություններն ու հոդերը

Ա. սովորաբար չակերտներից դուրս չեն հանվում.

Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին» պոեմ է:

«Ամերիաբանկից» վարկ պիտի ստանանք:

«Ազգի» ընթերցողները արվեստին և գրականությանը առավելապես մոտ կանգնած մարդիկ են:

«Հին Երևանի» հաճախորդները շատ շուտով առիթ կունենան վայելելու սիրելի պանդոկի հյուրընկալությունը:

Բ. չակերտներից դուրս՝ գծիկով միացած են գրվում, եթե անվան կամ վերնագրի հետ միանալիս դժվարացնում են բնագրի ընկալումը կամ առաջ են բերում հայերենի համար անսովոր ձևեր, մասնավորապես.

ա) Եթե վերնագիրն արտահայտված է ամբողջական նախադասությամբ: Օր.

«Իմ սիրտը լեռներում է»-ի հանդիսատեսը մեծ ոգևորություն ապրեց:

Ցուցասրահում առիթ ունեցա տեսնելու 19-րդ դարի անգլիացի նկարիչ Ուոլթեր Լինգլիի հայտնի կտավներից մեկը՝ «Լույսը կբացվի, բարին էլ՝ հետը, բայց սրտերը կշարունակեն կոտորվել»-ը:

բ) Եթե անվան կամ վերնագրի վերջին բաղադրիչը կա՛ մ ինքնին հոլովված բառաձև է, կա՛ մ չհոլովվող բառ, կա՛ մ անձնական, ցուցական, հարցական դերանուն, կա՛ մ թվական, կա՛ մ տառային հապավում, կա՛ մ կոչական: Օր.

Գուրգեն Մահարու «Երիտասարդության սեմին»-ը ինքնակենսագրական վիպակ է:

«Մարդը ավիի մեջ»-ով Պ. Սևակը ճանաչում ձեռք բերեց:

«Ես և նա»-ի հեղինակը Նար-Ռոսն է:

«Բոհնգ-777»-ը անհետացել է Պեկինի ճանապարհին:

«X-7»-ի տեխնիկական ցուցանիշերը անգերազանցելի են:

«Բա՛ ց կեղևդ, ծա՛ ռ»-ի հեղինակը Ռազմիկ Դավոյանն է:

գ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ: Օր.

«tert.am»-ի օգտատերերը հետաքրքիր հարցադրումներ են անում:

Վարկային նոր առաջարկներ են ստացվել «ԲԵՏ»-ից:

Գրքում օգտագործված համառոտագրություններից «Ա.Բ.»-ն Ակսել Բակունցն է, իսկ «Հ.Ս.»-ն՝ Համո Սահյանը:

դ) Եթե անհրաժեշտություն կա ընդգծելու իրողության, երևույթի, առարկայի իրական՝ ճշգրիտ անվանումը կամ վերնագիրը. երբ վերջավորության կամ հոդի անջատ գրությամբ անհրաժեշտ է լինում առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ ավելի հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով, երբ միասին գրության դեպքում հոդը կարող է ընկալվել որպես բնագրային: Օր.

Եղիշե Չարենցի «Նավգիկե»-ն բոլոր ժամանակների գեղարվեստական գլուխգործոցներից է:

Հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարար»-ը, լույս է տեսել Հնդկաստանում՝ Մադրասում, 1794-1796 թթ. (18 համար):

«Գարեգին Նժդեհ»-ը, անտարակույս, հայ կինոյի հաջողված գործերից մեկն է:

Ծանոթություն 3: Եթե վերնագրի կամ անվան վերջում ի սկզբանե առկա է հենց այն հոդը, որը պահանջվում է ավելացնել խոսքաշարի քերականությամբ, ապա դա բնականաբար գրվում է չակերտների մեջ և չի կրկնվում չակերտներից դուրս: **Օր.**

«Հին օրերի երգը» Մհեր Մկրտչյան դերասանի ուժեղ տաղանդի նոր բացահայտումներից է:

«Վերջին ուսուցիչը» տարիներ շարունակ հաջողությամբ բեմադրվել է Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում և եղել է հայ հանդիսատեսի կողմից սիրված ներկայացումներից մեկը:

Ծանոթություն 4: Եթե այնուամենայնիվ անհրաժեշտ է հստակ արտահայտել վերնագրի կամ անվան ճշգրիտ ձևը, ապա դա կարելի է անել երևույթի տեսակը նշող բառի հավելումով: **Օր.**

«Աղքատի պատիվը» պատմվածքը Հովհաննես Թումանյանը գրել է 1894 թվականին:

Ծանոթություն 5: Նախադասությամբ արտահայտված կամ հոլովված բառով, կապով վերջացող որոշ անունների՝ հոլովական վերջավորություն կամ հոդ ավելացնելու դեպքում երբեմն առաջանում են անվան ընկալումը դժվարացնող ու հայերենին անսովոր ձևեր: Դրանցից խուսափելու համար նույնպես խորհուրդ է տրվում անվան հետ գործածել համապատասխան լրացյալ: **Օր.**

«Մատյան ողբերգության»-ի հեղինակը / «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը:

«Հայրենիքիս հետ»-ի վերջին տունը / «Հայրենիքիս հետ» բանաստեղծության վերջին տունը:

Կամ՝ Վահրամ Փափազյանի վերջին դերը Մեք Գրեգորն է Վիլյամ Մարոյանի «Իմ սիրտը լեռներում է» **թատերգության մեջ:**

«Մենք ենք, մեր սարերը» Ֆիլմի ցուցադրությունը հետաձգվեց:

Մարտիրոս Մարյանը իր խոհերն ամփոփել է «Գրառուներ իմ կյանքից» գրքում:

«Գիրք ճանապարհի» ժողովածուի ազդեցությունը հայ գրական-գեղարվեստական մտքի զարգացման վրա չափազանց մեծ է:

Ծանոթություն 6: Գիտական և արվեստի երկերը խոսքից

դուրս՝ որպես վերնագիր, կամ մատենագիտական ցանկերում, ցուցակներում հեղինակի անվան հետ գործածվելիս չակերտների մեջ չեն առնվում, բայց դարձյալ սկսվում են մեծատառով: **Օր.**

***Մոռանալ Հերոստրատին.** ներկայացման սկիզբը՝ ժ. 18. 00-ին:*

Բիւզանդ Եղիայեան, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 263:

Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

Ծանոթություն 7: Պարբերական հրատարակություններից կատարված հղումներում պարբերականի անունը սովորաբար գրվում է չակերտներում: **Օր.**

«Հայաստանի Հանրապետություն», Եր., 2013, թիվ 98:

«Հայագիտության հարցեր», Երևան, 2018, թիվ 3:

«Ազգ» օրաթերթ, Եր., 2013, թիվ 98:

«Բանբեր Երևանի համալսարանի», քառամսյա հանդես, Եր., 2018, թիվ 1:

«Ծիծեռնակ» (ամսագիր), Եր., 2001, թիվ 3:

Ծանոթություն 8: Ժողովածուների (փաստաթղթեր, որոշումներ, օրենքներ, հոդվածներ և այլն), խմբագրական համատեղ աշխատանքի արդյունք հանդիսացող աշխատությունների վերնագրերը առանց հեղինակի անվան հիշատակվելիս սովորաբար առնվում են չակերտների մեջ: **Օր.**

«Քաղաքացիական, իրավական պայմանագրեր (օրենսդրական պարզաբանումներով)», խմբ.՝ Վ. Նազարյան, Երևան, 1999:

«Հայաստանի ստանդարտ. ՀՄՏ 6.3–98: Պաշտոնական հրատարակություն», Երևան, 1998:

«Հայաստանի Հանրապետության Մահմանադրություն», Երևան, 1996 թ.:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Եր., 1969:

Ծանոթություն 9: Համույթների, հիմնարկների, կազմակերպությունների, գրոսայգիների, շքանշանների ոչ պայմանական՝ նկարագրական անունները (ինչպես նաև դրանց կրճատ գրության պաշտոնական ձևերը և հապավումները) չակերտների մեջ չեն առնվում: **Օր.**

Հայաստանի ակադեմիական երգչախումբ, Հրազդանի ցեմենտի գործարան, Արծվաշենցիների հայրենակցական միություն, Երևանի Մեսրոպ մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ), Սիրահարների այգի, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան, ՀայՌուսզագարդ:

3. Հեգնական, ծաղրական, ժխտական կամ փոխաբերական իմաստով գործածված բառերը, արտահայտությունները: **Օր.**

Լինելով չափից ավելի «գաղափարական»՝ նա հակված չէ դավանելու որևէ հաստատուն սկզբունք:

Ասում եք՝ պարկեշտ մարդ է. ես նրանից առավել «պարկեշտ» մարդու չեմ տեսել. ամբողջ կյանքը ապրեց ստի ու կեղծիքի մեջ:

4. Խոսքում հիշատակվող բառը, լեզվական միավորը, ինչպես նաև խոսքի բաղադրիչ այն օտարաբանությունները, բարբառային, ժարգոնային բառերն ու արտահայտություն-

ները, որոնց կիրառության միտումնավոր և ոճական բնույթն անհրաժեշտ է շեշտել: Օր.

«Ոչ»-ը՝ ասված խոր համոզվածությամբ, ավելի լավ է, քան «այո»-ն, որն ասվել է միայն ինչ-որ մեկին ուրախացնելու կամ, որ ավելի վատ է, խնդիրներից խուսափելու համար:

ՀՀ ներկա նախագահից «նեղացածները» հանգրվանել են նախորդ նախագահի հովանու տակ:

Ռուսաստանի «օրենքով գողերը» Ուկրաինայի հարցով հավաքել են ամենախոշոր «սխտրկան»:

Ծանոթություն: Խոսքի մեջ հիշատակվող բառի, միավորի, խոսքի բաղադրիչ օտարաբանության և այլ արտահայտությունների առանձնացումը կարող է կատարվել նաև ընդգծումով, թավ տառատեսակով, շեղատառով, գլխատառերով կամ բուն շարվածքից տարբեր այլ տառատեսակով: Օր.

*Գրականության մեջ վերջին հաշվով կարևորը **ԻՆՉ**-ն է և ոչ թե **ԻՆՉՊԵՄ**-ը:*

***Պոլիկլինիկա, պոլիտեխնիկ** բառերը հունական փոխառություններ են և ունեն ընդհանուր բաղադրիչ՝ **պոլի-**, որը նշանակում է «բազում, շատ»: Այստեղից էլ՝ **պոլիկլինիկա**՝ բազում հիվանդությունների բուժման տեղ կամ պարզապես **բազմաբուժարան**:*

*Այլ կերպ ասած՝ **գաղութ**-ը և **համայնք**-ը իրապես հոմանիշ, փոխլրացնող, այլ ոչ թե փոխբացառող տերմիններ են, իսկ թե որ մեկին տալ նախապատվությունը, դա արդեն լեզվակիրառողի խնդիրն է:*

5. Բանասիրական շարադրանքում իմաստ նշող բառը, բառակապակցությունը, արտահայտությունը: Օր.

*Եպիսկոպոս բառը կազմված է **epi-skop-os** բաղադրիչներից. հունարեն բառացի նշանակում է **վեր(ա)-տես-ույ՝ «վերադիտող կամ վերահսկող»:***

*Կան փոխաբերություններ, այսինքն՝ բաղադրյալ բառեր, որոնք իրենց բառացի՝ ուղիղ իմաստով չեն գործածվում, այլ ստեղծվել են միայն փոխաբերական իմաստ արտահայտելու համար: Օրինակ՝ **պնակալեզ** «շողոքորթ, հացկատակ», **երկնաքեր** «բարձրահարկ շենք», **նեղսիրտ** «փոքրոգի, նեղացկոտ, անհանդուրժող», **պնդաճակատ** «համառ ու բթամիտ»:*

6. Երբեմն՝ անվանական կայուն բառակապակցությունները դրանց սահմանները հստակեցնելու նպատակով: Օր.

«Շաղկապ + շաղկապ» և «շաղկապ + հարաբերական դերանուն» կառույցների դեպքում երկրորդ միավորը առաջինից կարելի է ստորակետով չանջատել:

ՓԱԿԱԳԾԵՐ

Փակագծվող ասույթի (տեղեկույթի, հատվածի, տառի) սկզբում դրվում է բացող (ձախ) փակագիծը, վերջում՝ փակող (աջ) փակագիծը:

Ծանոթություն: Խոսքը կոր փակագծերի մասին է, որոնք չի կարելի փոխարինել կոտորակի գծով:

Փակագծերի մեջ են առնվում.

1. Միջարկումները: Օր.

Ըստ օվկիանոսի մակարդակից իրենց բարձրության՝ հարթավայրերը լինում են դաշտավայրեր (մինչև 200 մ),

բարձրավայրեր (200–500 մ), սարահարթեր (500 մ–ից բարձր) և ցածրավայրեր (օվկիանոսի մակարդակից ցածր):

Տե՛ս Գ. Խուդինյան, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006:

Ֆրանսիայի Սահմանադրության համաձայն (ընդունվել է 1958 թ. և գործում է մինչև օրս)՝ արտաքին քաղաքականության մեջ վճռական դերը պատկանում է երկրի նախագահին:

Հայ-հնդկական առնչությունների մասին տեղեկություններ կան դեռևս Քսենոփոնի (մ. թ. ա. V-IV դդ.), Ջենոբ Գլակի (մ. թ. IV դ.), Մովսես Խորենացու (V դ.), Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) երկերում:

2. Որպես նմուշ կամ լուսաբանում բերվող նշանները, տառերը, բառերը, արտահայտությունները: Օր.

Ընդունենք, որ առաջին անհայտը (X) մեծ է երկրորդից (Y):

Աստղանիշը (*) դրվում է թե՛ շարադրանքի համապատասխան բառի վրա, թե՛ տողատակում՝ ծանոթագրության սկզբում:

3. Այլընտրանքի ձևով նշվող վերջավորությունները, բառերի բաղադրիչները՝ «կա՛ մ..., կա՛ մ...» նշանակությամբ: Օր.

Անձնական դերանունները մատնացույց են անում մասնակից(ներ)՝ առանց անվանելու:

Ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է հենց (որ), թե չէ, քանի (դեռ), մինչ(և), ինչ, որ և այլ շաղկապներով:

4. Բառերի, արտահայտությունների, անվանումների տարբերակները: Օր.

Առաջին ատյանի դատարանները քննում են քրեական բռնուր գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նահատակված այլ գործեր (նյութեր):

Բայց գոգավոր (ցրոռ) ոսպնյակը նույնպես ունի կիզակետ, միայն թե այն «կեղծ» է:

Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) այդ օրերին վայելում էր ժողովրդականություն:

5. Շարադրանքի մեջ տրվող հղումներն ու մատենագիտական տվյալները: Օր.

Հ. Աճառյանը Ն. Մառի հետևողությամբ **մխիթար** բառը ստուգաբանել է որպես քարացած **մի՛ խիթար** «մի՛ վախենար» կառույցի սղված տարբերակ (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 328-329), ինչը կասկածելի է համար Գ. Ջահուկյանը (Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 529):

Մաքուր տոնայնությամբ ձայներ է արձակում կամերտոն կոչվող գործիքը, երբ դրան հարվածում են (նկ. 167.10):

Ծանոթություն: Հղումը եթե հաջորդում է մեջբերմանը և գրվում է նոր տողից, ապա փակագծերի մեջ չի առնվում: Օր.

«Իջե՛ք, իջե՛ք, երազնե՛ր...»

Լ. Շանթ, Հին աստվածներ

6. Մաթեմատիկայում՝ գործողությունների առաջնահերթությունները նշելու համար: Օր.

Վարժություն 510: Կատարե՛ք գործողությունները.

ա) (21058 – 208 : 104) – (394 – 2527 : 19)

բ) (1567 + 891 : 33) : (78 – 2052 : 27)

7. Միակողմանի (փակող) փակագիծ դրվում է թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո: Օր.

Ծավալն ունի հետևյալ հիմնական հատկությունները.

1) Հավասար մարմիններն ունեն հավասար ծավալներ:

2) Եթե մարմինը տրոհվում է մասերի, ապա մարմնի ծավալը հավասար է նրա մասերի ծավալների գումարին:

ԶՈՒԳԱԳԻԾ (//)

Բառերից անջատվում է բացատով:

Դրվում է.

1. Լեզվական տարբեր, բայց համարժեք (հոմանիշ, նույնանիշ) միավորների կամ կառույցների միջև՝ դրանց զուգահեռությունը նշելու համար, ինչպես նաև լեզվական նույն միավորի ուղղագրական, բառակազմական, քերականական տարբերակների միջև: Օր.

Հայոց աշխարհի // Հայաստան, Խորագույն Հայք // Տայք, Համաշխարհային երկրորդ պատերազմ // Երկրորդ աշխարհամարտ, Նոր տարի // Ամանոր, Վանա լիճ // Վանա ծով(ակ), Վահան սպարապետ // Վահան Մամիկոնյան, Մատուռն // Երևակ, հնչերանգային // արտասանական, նամականի // նամակներ, ուսուցչություն // ուսուցիչներ, գայլի գլխին ավետարան կարդալ // գելի գլխին քարոզ կարդալ, Խորխոռունիք // Խոռխոռունիք, չափուձև // չափ ու ձև, Նոր երկիր // Նոր Երկիր (կղզեխումբ), շահ Աբաս // Շահ-Աբաս // Շահ Աբաս, Ս. Էջմիածին // Սբ Էջմիածին // Սուրբ Էջմիածին, Կոմագենե // Կոմագենե, Մանուել // Մանվել (ճարտարապետ), լեզին // լեզոն, ժանյակագարդ // ժանե-

կազարդ, ընկուզկոտորիչ // ընկուզկոտորիչ, կաղեկաղ // կաղիկաղ // կաղնիկաղ, թաղապետեր // թաղապետներ, գազարթնածողով // գազարթածողով, Միխաիլ // Միխայիլ, ծովաորոր // ծովորոր, մեքենայական // մեքենական, թիկի // թիկենի, դյուրահնչուն // դյուրահունչ, խառը // խառն, մի՛ եկ // մի՛ արի, գրե՛ք // գրեցե՛ք:

2. Մատենագիտական ցանկերում, հղումներում՝ մատնանշվող երկի (հոդվածի) և դա ներառող ժողովածուի կամ հանդեսի վերնագրերի (անվանումների) միջև: Օր.՝

Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան: // Լեո, Երկերի ժողովածու՝ տասը հատորով, հ. 4, Եր., 1984, էջ 426:

Տե՛ս, օրինակ, Հարությունյան Ա., Գաղթականներ: // «Հայկական հարց: Հանրագիտարան», Երևան, 1996:

ԿՈՏՈՐԱԿԻ ԳԻԾ (բաժանման գիծ՝ /)

Դրվում է՝ նշելու համար.

1. Տարեթվերով արտահայտված ժամկետներ: Օր.՝

2011/2017 թթ.; 2018/2019 ուստարի; 2015/2018 հաշվետու ժամանակաշրջանում:

Ծանոթություն: Նման դեպքերում ավելի տարածված է միության գծիկով տարբերակը: Օր.՝

2011–2017 թթ.; 2018–2019 ուստարի; 2015–2018 հաշվետու ժամանակաշրջանում:

2. Միավոր նշանակող արտահայտությունների կամ թվերի հարաբերություն: Օր.

մ/վ (մետր/վայրկյան), կմ/ժ (կիլոմետր/ժամ), լ/վ (լիտր/վայրկյան):

3. Որոշ բարդ բառերի և բառակապակցությունների կրճատ գրությունը (համառոտագրությունը): Օր.

փ/գ-տ (փոխգնդապետ), *զ/մ* (զորամաս), *ս/թ* (սույն թվականի):

4. Այլընտրանք՝ «կա՛մ...., կա՛մ....» նշանակությամբ: Օր.

Հայերենի որոշիչ հոդերը (ը/ն) ունեն դիրքային տարբերություն, իմաստային տարբերություն չունեն:

Հաշվանցման ն/կամ վերադարձնելու ենթակա ավելացված արժեքի հարկի հաշվարկներ (այդ թվում՝ ճշտված) առայժմ չեն կարող ներկայացվել:

ՀՀ դրամով տրամադրվող բնակարանի/առանձնատան ձեռքբերման գրավադրային վարկեր:

Մեռը (տղամարդ/կին) _____:

5. Լեզվական միավորների, բառաձևերի հերթագայություն: Օր.

Արդի արևելահայերենի հոլովման համակարգում ունենք ի/ու (այգի/այգու, որդի/որդու), ք/ց (Վարդանանք/Վարդանանց, մերոնք/մերոնց), ալ/ո (հայր/հոր, եղբայր/եղբոր), ու/ա (տուն/տան, ուրախություն/ուրախության) հերթագայությունները. արևմտահայերենում բացակայում է ի/ու հերթագայությունը, քանի որ ի-ով վերջացող գոյականները սովորաբար ենթարկվում են ի հոլովման՝ գինի-գինիի, որդի-որդիի, այգի-այգիի և այլն:

6. Շենքի համար և ենթահամար: Օր.

Բնակվում եմ հետևյալ հասցեում՝ Երևան, Եղբայրության 12/2, բն. 18:

Փոխադրամիջոցի գրանցման (հաշվառման) հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Հովտաշատ, Ե. Չարենցի փ., տ. 29/1:

7. Համագործակցության հակադրություն: Օր.

Բարտը, պաշտպանելով «տեքստ/ստեղծագործություն» երկատուվը, այս հասկացություններին տալիս է այլ բովանդակություն:

Հայերենում որոշյալության/անորոշության կարգը հիմնականում արտահայտվում է հոդերով:

Ռուսերենում քերականական սեռի կարգը եռեզր է՝ արական/իգական/չեզոք:

8. Չափածոյի ամեն մի նոր տողի սկիզբը (երբ ստիպված դրանք գրում ենք մեկ ընդհանուր տողով): Գործածվում է բացատներով: Օր.

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ, / Երազն էլ՝ նուրբ ու խուսափուկ, վրձազ եղավ, անցկացավ, / Վրձազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին, / Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անցկացավ:

Այս դեպքում հնարավոր է նաև գուգագծի (//) գործածությունը.

Ընկե՛րն ըլլալ ցորեններուն, մրգաստանին // Դուռը բանալ գավկի մը պէս, մրտերմորեն, // Ու թողուլ որ շահարիկները զբեզ տանին // Թևապարփակ՝ լայն լրժության մը համորեն:

Ծանոթություն: Հանձնարարելի չէ բաժանման գիծը գործածել կոր փակագծի փոխարեն:

ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ (ԵՌԱԿԵՏ)

Դրվում են.

1. Կցկտուր, հեղինակի կողմից միտումնավոր անավարտ կամ իբրև այդպիսին ներկայացվող խոսքի այն հատվածում, որտեղ ակնկալվում են հնարավոր կամ անհնար (անսպասելի) շարունակությունը, բառերով չարտահայտված հույզը, զգացմունքը: Դրվում է նախորդող բառին (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդող բառին) կից՝ առանց բացատրի: Վերջապաս եռակետը փոխարինում է վերջակետին (տե՛ս նաև էջ 48-51): Օր.

Ասում էիր. «Այն ժամանակ Աստված ինձ չտարավ, որ քեզ հանդիպեմ. պատկերացնո՞ւմ ես՝ ես մահանայի ու չհանդիպեի քեզ... Հետո երկնքում ինձ պատմեին քո մասին, ասեին, որ դու եղել ես, բայց ես քեզ չեմ հանդիպել... Իմ կյանքը իզուր ապրած կլինեի»:

Անվերադարձ անցավ ու զառանցանք դարձավ / Մանկությանն պես անցած իմ Նավզիկեն...

Ծանոթություն: Եռակետով ավարտվող խոսքը չակերտների կամ փակագծերի մեջ առնվելու դեպքում եռակետը մնում է չակերտների կամ փակագծերի ներսում: Օր.

«Միրտը ի՛ր բանականությունն ունի, որն անհայտ է մեր բանականությանը...» (Պասկալ):

«...Ու ոռնում էր լուսնի դեմքին դուրսը մի շուն»: (Ե. Չարենց)

2. Զարմանք հարուցող կամ անսպասելի տեղեկություն նշող բառից, արտահայտությունից առաջ: Բացատրով անջատվում է թե՛ նախորդ, թե՛ հաջորդ բառից: Օր.

Մարդկության կյանքը միշտ էլ զարգացել ու զարգանում է

... կարիքի շնորհիվ:

Արգելանո՛ց, արգելանո՛ց: / Ես հասկացա՛, / Բայց ...
 ոտքե՛րըս չեն հասկանում...:

Ճիշտ չէ, որ մարդիկ դադարում են երազել, որովհետև ծե-
 րանում են, իրականում նրանք ծերանում են, որովհետև ...
 դադարում են երազել:

Երկաթե գրադարաններում լռում են ... դարերը:

Անիծյա՛լ լինի այս դժբախտ ... բախտը:

Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **եռակետ-
 գիծ** համակցված նշանը, որը դրվում է թերի, անավարտ
 նախադասությամբ վերջացող ուղղակի մեջբերվող խոսքի
 նկատմամբ հետադաս հեղինակային խոսքից առաջ: **Օր.**

— Եսի՛մ... — *ասաց երեխան՝ նիհար ուսերը վեր քաշելով:*

Եթե ուղղակի մեջբերվող խոսքի կազմում թերի նախադա-
 սությանը հաջորդում է ուղղակի մեջբերվող խոսքի նկատ-
 մամբ միջադաս հեղինակային խոսք, ապա դրանից հետո
 դրվում է վերջակետ, իսկ ուղղակի մեջբերվող խոսքի շա-
 րունակությունը սկսվում է մեծատառով:

«Արդյոք մի բան հասկանո՞ւմ եք հայից: Որքա՛ն տարօրի-
 նակ, հանելուկային արարած, որքա՛ն խարուսիկ... — գրում
 է Դ. Դեմիրճյանը: — Անհանգիստ դեմք ունի, չի թողնում
 նկարես: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝
 ամենամեծը: Ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամե-
 նից անփոփոխը»:

Եթե հեղինակային խոսքին նախորդող և եռակետով
 ավարտվող ուղղակի մեջբերվող խոսքը անհրաժեշտ է չա-
 կերտների մեջ առնել, ապա փակող չակերտը դրվում է
 եռակետի և անջատման գծի միջև: **Օր.**

«Տեսնես ո՞վ է որս անում...» — մտածեց Ավետը՝ լսելով կրակոցներ:

ԲԱԶՄԱԿԵՏ

Կազմված է չորս կամ ավելի կետերից (....): Նշում է մեջբերվող խոսքի որևէ հատվածի, բառի կամ դրա բաղադրիչի կրճատված լինելը: Դրվում է տողի վրա՝ նախորդ (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդ) բառին կից՝ մեջբերման կրճատված մասի տեղում: Մեջբերվող խոսքի՝ չակերտների մեջ առնվելու դեպքում մնում է չակերտների ներսում (տե՛ս նաև էջ 48-51): Օր.

...Եվ հուսահատության օրերը նույնպես անհրաժեշտ են, ինչպես ուրախության օրերը:

Ի՛նչ գեղեցիկ են էս խոսքերը, ի՛նչ վեհ ու պայծառ է էս ազգային իդձը. «Տե՛ր, ապրեցրո՛ւ հային և պայծա՛ր արա նրան...»:

Բազմակետով սկսվող առաջադաս ամբողջական նախադասությունը սկսվում է մեծատառով: Օր.

...Ոչ ոք քեզ չի հիշելու մտքերիդ համար: Աստծուց իմաստնություն և ուժ խնդրի՛ր, որ ասես այն, ինչ զգում ես: ...Յո՛ւյց տուր ընկերներիդ, թե՛ ինչ կարևոր են նրանք քեզ համար: ...Եթե՛ դու չասես այդ ամենը այսօր, վաղը կլինի նույնը, ինչ երեկ: ...Իրականացրո՛ւ երազանքներդ: Այդ պահը եկել է:

Սկզբից կրճատված նախադասությունը բազմակետից հետո սկսվում է փոքրատառով: Օր.

Ձանգվածային լրատվամիջոցների լեզվի ամենաբնորոշ հատկանիշերից մեկը «...նվազագույն լեզվամիջոցներով առավելագույն տեղեկույթ» հաղորդելն է:

Ծանոթություն 1: Աշխատության կամ ժողովածուի վերնագիրը երկար լինելու դեպքում կարելի է գրել կրճատ՝ շարունակությունը նշելով բազմակետով: **Օր.**՝

Յ. Օջակյան, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 300: → *Յ. Օջակյան, Համապատկեր....., հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 300:*

Ծանոթություն 2: Վերջին շրջանում հաճախ բազմակետի փոխարեն հանիրավի գործածում են կախման կետեր, ինչը երբեմն շփոթության տեղիք է տալիս:

ԱՆՋԱՏՄԱՆ ԳԻԾ

Բառերից անջատվում է բացատով:

Դրվում է՝

1. Իրական կամ ենթադրյալ հնչող ուղղակի մեջբերվող խոսքի, երկխոսության ամեն մի մասի սկզբում: Անջատման գծով սկսվող ուղղակի խոսքը գրվում է նոր տողից, սկսվում է մեծատառով: Հեղինակի առաջադաս խոսքն ավարտվում է միջակետով: Հեղինակի վերջադաս և միջադաս խոսքերն սկսվում են ստորակետ-գծով (երբեմն՝ եռակետ-գծով): Հեղինակի միջադաս խոսքն ավարտվում է ստորակետ-գծով (երբեմն՝ միջակետ-գծով, վերջակետ-գծով): **Օր.**՝

— *Պարսավելով ուրիշներին, — ասացի, — մենք անուղղակիորեն գովաբանում ենք մեզ:*

— *Գոյություն ունի արդարության երկու նախասկիզբ, — չուշացավ պատասխանը. — ոչ ոքի չվնասել և օգուտ բերել հասարակությանը:*

— Բարին երբեք չի մահանում, — ճշում էր միտքը փակ երակներում: — Եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի:

— Ժամանակն է ամեն բարիքի դայակը, — հիշում էր հաճախ... — և ժամանակն է բոլոր վերքերի սպեղանին:

2. Տարածական կամ հակադրական հարաբերության մեջ գտնվող անվանումների ու բառերի միջև: Օր.

Երևան — Արարատ — Արցախ մայրուղու շինարարությունը շուտով կավարտվի:

Հայաստան — Ռուսաստան խաղն ավարտվեց ոչ-ոքի:

3. Թատերգություններում՝ խոսողի անվան և նրա խոսքի միջև: Օր.

Միսոն վանական — Մահն է քու առջևդ, թշուառակա՛ն:

Աբեղա — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

4. Թվարկումով ներկայացված բառերի ու անվանումների և դրանց վերաբերյալ տեղեկույթի միջև՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ (բառ և բացատրություն, հեղինակ և ստեղծագործություն, դեր և դերասան, գործող անձ և բնութագիր և այլն): Օր.

Հեզունների համառոտագրությունների ցանկ

լատ. — լատիներեն

անգլ. — անգլերեն

Վերնիսաժ — գեղարվեստական ստեղծագործությունների հանդիսավոր բացում՝ բացման արարողություն:

5. Թվարկման՝ նոր տողից սկսվող չհամարակալված ծավալուն անդամների սկզբում (կարող է դրվել նաև այլ նշան): Օր.

Արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին

— *Վանի հերոսամարտը,*

— *ինքնապաշտպանական մարտերը Շապին-Գարահիսարում և Մասունում,*

— *Մուսա լեռան և Ուրֆայի ինքնապաշտպանությունը:*

ՄԻՈՒԹՅԱՆ ԳԾԻԿ

Իրենով միավորվող տարրերից բացատրով չի անջատվում:

Դրվում է.

1. Հարադրական բարդության մի շարք տեսակների բաղադրիչների միջև: Օր.

արագ-արագ, գոռում-գոյյուն, ավել-պակաս, նետ-աղեղ, ուտել-խմել, տուն-թանգարան, աղբյուր-հուշարձան, հայ-ռուսական, ազգային-ազատագրական, փոքր-ինչ, Նար-Դոս, տասը-տասնհինգ:

2. Որոշ համառոտագրությունների առաջին և վերջին տառերի կամ տառախմբերի միջև: Օր.

պ-ն (պարոն), դ-ր (դոկտոր), մ-ր (մայր), գ-տ (գնդապետ), փ/գ-տ (փոխգնդապետ), գ-լ/գ-տ (գեներալ-գնդապետ):

3. Տառային հապավման, համառոտագրության, ինքնանվանողական փոխանունի, չակերտված նախադասության, չակերտված չթեքվող կամ թեքված բառով վերջացող արտահայտության, օտարագիր բառի, թվային կամ տառային նշանակման և դրանց վերջավորության (երբեմն էլ անանցի կամ այլ վերջնաբաղադրիչի) միջև:

Հայաստանը ՄՄԿ-ի անդամ է 1992-ից:

Ու-ն շաղկապ է, ի-ն կապ, իսկ օ՛-ն ձայնարկություն:

Հայ ընթերցողը անհամբերությամբ է սպասում Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են»-ի երկրորդ հրատարակությանը:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը թարգմանված է մի շարք լեզուներով:

«Հայաստանը երգերի մեջ»-ը բանաստեղծությունների շարք է:

Մեր գյուղի ճանապարհը, 15-րդ կմ-ից սկսած, ասֆալտապատ չէ:

Դրամական փոխանցումը կատարվել է «ProCreditBank»-ով:

X-ով, Y-ով և Z-ով նշանակվում են անհայտ թվերը:

2018-ին տոնվեց Երևանի հիմնադրման 2800-ամյակը:

Այդ «ազատական-ժողովրդավար գործիչը» նախկին ՀՀԿ-ական է, նախկին ՀՀՇ-ական և նախկին ՀԿԿ-ական:

Ծանոթություն: Փոքրատառերով գրվող տառային հապավումներին միացող վերջավորություններն ու ածանցները գրվում են առանց միության գծիկի: **Օր.**

բուհը, բուհից, բուհական, ջեկեր, աեկներ

4. Թվանշաններով արտահայտված թվականների այնպիսի կապակցության բաղադրիչների միջև, որն ունի մոտավորության իմաստ և միության գծիկով է գրվում նաև տառերով արտահայտվելիս: **Օր.**

10–15 մարդ (տասը–տասնհինգ մարդ), 2–3 ամիս (երկու–երեք ամիս), 4–5 հոգի (չորս–հինգ հոգի), 25–30 տարեկան (քսանհինգ–երեսուն տարեկան):

5. Թվանշաններով արտահայտված թվականների այնպիսի կապակցության բաղադրիչների միջև, որի առաջին բաղադրիչն ունի բացառականի իմաստ: Օր.

էջ 10-15, 1-3-րդ դասարաններ, IV-VIII հատորներ, ԺԲ-ԺԹ գլուխներ, 1941-1945 թթ. և այլն:

Նույնը տառերով գրվում է առանց գծիկի՝ անջատ (*էջ տասնհինգ տասնհինգ* և այլն):

Ծանոթություն: Վերոհիշյալ 1., 4., 5. կետերի դեպքում միության գծիկի փոխարեն նպատակահարմար է գործածել անջատման գիծ՝ բացատներով հանդերձ, եթե կապակցվող միավորներից առնվազն մեկը հարադրություն է կամ բառակապակցություն (թվերի կապակցություն), այսինքն՝ իր ներսում ունի բացատ: Օր.

Ուզում էր քեզ նեղը գցել — ճնշել, բայց չկարողացավ:

Տեսանելիությունը՝ հարյուր — հարյուր հիսուն մետր:

Նոր շրջան (19-րդ դ. 2-րդ կես — 20-րդ դ. 1-ին քառորդ):

ԵՆԹԱՄՆԱ

Դրվում է.

1. տողադարձված բառի այն մասին աջից կից, որը թողնվել է նախորդ տողում: Օր.

բարձր- լեռնային, սահմանա- դրական, քրե- որեն, է- ի, գրե- ի, ի- սպառ:

2. վանկատված գրվող բառի կամ ասույթի վանկերի միջև: Օր.

բաժ-նե-տեր, հե-տա-քըն-նու-թյուն, հայ-տա-րա-րա-գիր:

Ծանոթություն: Ենթաման հաճախ նույնացվում է միության գծիկին, երբ վերջինով միացած բաղադրիչներով հարադրավոր բարդությունների տողադարձի ժամանակ հաջորդ տող է տարվում երկրորդ բաղադրիչն ամբողջությամբ: **Օր.**

տուն- թանգարան, ազգային- քաղաքական, իտալա- գերմանական, աղբյուր- հուշարձան:

ԱՊԱԹԱՐՑ

Դրվում է.

1. Արևմտահայերենում, միջին հայերենում, բարբառային խոսքում՝ սղված ձայնավորը նշելու համար: **Օր.**

Կ'ապրինք այդ երկրին մեջ, բայց կ'երագենք մեր հայրենիքը:

Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ո՛վ Աստուած:

2. Օտար բաղադրյալ հատուկ անունների որոշ մասնիկ-բաղադրիչներն անջատելու կամ դրանց սղված ձայնավորը նշելու համար: **Օր.**

Ժաննա դ'Արկ, Օ՛նելլ (Օ՛նիլ), դ'Արտանյան, Օ՛չենրի, դ'Անունցիո:

ԱՍՏՂԱՆԻՇ (*)

Դրվում է.

1. Բառի վրա՝ աջ կողմից՝ նշելու համար չհամարակալված ծանոթագրության առկայությունը տողատակում, որտեղ՝ համապատասխան ծանոթագրության սկզբում՝ ձախ կող-

մից, կրկնվում է: Նույն էջում երկրորդ այդպիսի ծանոթագրությունը նշվում է գույգ աստղանիշով (**), երրորդը՝ երեք աստղանիշով (***) և այլն: Օր.

....*Դրանցից մեկը Շ. Այվազովսկու կտավն է, որը պատկերում է քանաստեղծի ժամանումը՝ մակույկից դուրս գալը, և դիմավորվելը վանականների կողմից**:

* Խոսքը, ըստ երևույթին, Շ. Այվազովսկու «Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում» (1898) նկարի մասին է, որը Հայաստանի պետական պատկերասրահում է (Երևան): Հոդվածագիրը հավանաբար տեսել է այդ նկարի վերատպությունը:

2. Բառի կամ տառի վրա՝ ձախ կողմից (լեզվաբանական գրականության մեջ)՝ նշելու համար տվյալ բառի, ձևային, հնչյունի վերականգնված կամ ենթադրվող այն ձևը, որը բանավոր կամ գրավոր չի ավանդվել.

հնխյ. **uik'ni-* > **qիսան* > **գսան* > *քսան*

3. Անվերնագիր բանաստեղծության վերնագրի տեղում՝ եռակի (կարող է դրվել նաև այլ նշան): Օր.

*Երբ մանկությունդ
թողնում ես հեռու սարերի վրա,
երբ մանկությունդ թողնում ես մենակ
հեռու լեռների լանջերին փափուկ,
նա հովերի հետ իսաղում խուսափուկ,
նա աստղերի հետ զրուցում անհագ,
հետո հոգնելով մենակությունից,
դանդաղ սուզվում է կրծքի մեջ լեռան:*

3. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սրանք բանավոր խոսքի առողջանության երանգները, ձայնի ելևէջները և շեշտադրությունը գրավոր խոսքում արտահայտող կետադրական նշաններն են՝ **շեշտ (շեշտանշան), պարույկ (հարցական նշանը), բացականչական (երկարացման) նշան:**

ՇԵՇՏ (ՇԵՇՏԱՆՇԱՆ)

Դրվում է.

1. Հրամայական նախադասության մեջ՝ հրամայական բայաձևի վրա: Երբեմն հրամայական շեշտը կարող է տեղափոխվել նախադասության այլ անդամի վրա: Օր.

Մի՛ ուշացրեք. արա՛ գ ավարտեք այդ աշխատանքը:

Գտի՛ր նպատակ, և միջոցները կգտնվեն:

Մի՛ վատնեք ժամանակն այն մարդու վրա, ով չի ցանկանում անցկացնել այն ձեզ հետ:

Ուշադրություն՝ ն դարձրեք, որ կանոնակարգից չջեղվեն, և ամեն ինչ կատարվի ըստ կարգի:

Դրանց մի՛ լսեք, պարոնա՛յք, լսեք ի՛նձ. միայն ես գիտեմ ձեզ հուզող հարցի պատասխանը:

Ծանոթություն 1: Հրամայական եղանակի բայաձևի վրա կարող է շեշտ չդրվել՝ պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով (խնդրանքի, աղերսանքի, մեղմ հորդորի կամ այլ դեպքերում): Օր.

Դեռ ականջներիս մեջ հնչում է նրա աղերսական ձայնը. «Տուր ինձ վերջին մի հնարավորություն ևս՝ մեղքերս իս-

պառ քավելու համար»:

Խնդրում եմ ուշադրություն դարձրեք նշված հանգամանքին:

Ծանոթություն 2: Հրամայական նախադասության մեջ շեշտի փոխարեն կարող է գործածվել բացականչական նշան, եթե բառն արտաբերվում է բացականչումով: **Օր.**

Փրկեցե՛ք ինձ Ձեր գթասրտությունից. ես դրա կարիքը չունեմ:

Եկե՛ք, խնդրեմ, եկե՛ք այսօր ու դարձե՛ք ինձ սեղանակից՝ Օգտվելով իմ այսօրվա բարենպաստ եղանակից:

Ծանոթություն 3: Հարադրավոր բայերի շեշտը դրվում է առաջին ոչ բայական բաղադրիչի վրա՝ **մո՛ տ արի, վե՛ր կաց, ցո՛ւյց տուր, բա՛ց արեք, աչքի՛ ընկեք** և այլն:

2. Կոչականի կամ դրա նախադաս լրացման վրա: Օր.

Ահավաղիկ կաս գեղեցիկ, մերձավո՛ր իմ...

Քո՛ւյր, քո գինին մեր սրտերում / Քանի՛ ոսկի ջահ է վառել...

Ծանոթություն: Պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ և այլն), զեկուցումներում և այլ կարգի փաստաթղթերում՝ դիմում-կոչականի կամ դրան նախորդող լրացման վրա կարելի է շեշտ չդնել՝ շարադրանքը ավելորդ նշաններով չճանրաբեռնելու համար: **Օր.**

Հարգարժա՛ն պարոն նախարար

Հայրենակիցնե՛ր

3. Կամային (կոչական) ձայնարկությունների և բնաձայնությունների վրա: Օր.

Արմենուհին բազմոցեն խրոխտ կ'ոստնու վեր՝ / Փոթոր-

կելով ուսերուն շուրջն իր վարսեր: / Կը դնե մերկ ոտքն
Արքային ծոծրակին.... / - Ո՛վ Շահ, կ'ըսե, քանակներուդ
ուժն ունիս:

Շրը իսկ, հանկարծ դուռը բացվեց, / Թուրք կանանցով տունը
լցվեց....

Արդարամիտ լինենք, **ո՛վ** քաջ գորավար. եթե դու անգամ
հանճարեղ ես, դու նախապատրաստում ես հաղթանակը,
շահում է ռազմիկը:

4. Կրկնադիր շաղկապների վրա (տե՛ս նաև էջ 79-81): **Օր՝** .

Մակայն հետխորհրդային երկրներում համացանցից օգտ-
վող երիտասարդների մեծ մասը հայերենին **կա՛մ** չի տիրա-
պետում, **կա՛մ** տիրապետում է ոչ բավարար չափով:

Ո՛չ հին երգն է հնչում, **ո՛չ** հին ձայնն է կանչում, / **Ո՛չ** հին
ցուլքն է վառվում աչքերի մեջ քո հին, / **Ո՛չ** հին սրտիդ
զարկն է քեզ մինչև լույս տանջում / Երազներով բորբոք ու
տազնապով լռին....

**5. Մաղթանքի, ողջույնի, շնորհավորանքի և անվանական
բառակապակցությամբ արտահայտված խոսքային այլ բա-
նաձևերի գերադաս անդամի, պատասխանական բառերի
վրա:** **Օր:**

Ողջո՛ւյն, ինչպե՞ս են գործերդ:

Բավակա՛ն է, շարժվեցինք:

Վե՛րջ, չեմ ուզում շարունակությունը լսել:

Ամենայն բարի՛ք Ձեզ:

Այո՛, տեղյակ եմ:

**6. Նախադասության իմաստային բեռը կրող բառի վրա՝ հե-
ղինակային վերաբերմունքը շեշտելու համար** (տրամաբա-

նական շեշտ): Օր.

Հարցը հրատապ է և այսօ՛ր պիտի քննարկվի:

*Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում: / Մենք մեզ **ն՛ջ մեկից** չենք գերադասում:*

*Ինչ էլ որ դուք անեք կյանքում, աննշան կլինի, բայց չափազանց կարևոր է, որ դուք դա **անե՛ք**:*

*Մեր հին գինով՝ **և՛ ս** մի հին ու նոր կենաց...*

Ծանոթություն: Եթե տրամաբանական շեշտը հիմնավորված է համապատասխան շարադասությամբ կամ վերաբերականով, ապա շեշտանշան դնելու կարիք չի լինում: **Օր.**

***Ղու էս** միակ մեղավորը, երիտասա՛րդ, և **միայն դու** պիտի պատասխանատվություն կրես:*

*Թող ոչ ոք չնեղանա, բայց **Շուշանին էմ** տալու իմ քվեն:*

*Ես էլ **հենց դա** էի ուզում ասել, բայց դու ինձ կանխեցիր:*

ՊԱՐՈՒՅԿ (ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆ)

Դրվում է.

1. Հարցական հնչերանգով արտասանվող բառի վրա՝ հարցում արտահայտելու համար: Օր.

*Ղու երբե՛կ **զգացե՞լ էս**, որ քո կյանքում պակասում է նա, ում երբեք չես հանդիպել:*

*Ամենաթեթև բնավորություն ունեն գինիկները, ամենաճանրը՝ գաղափարականները (իդեալիստները). ձեզ դա տարորինակ **չի՞ թվում**:*

*Միայն **նրա՞նց, թե՞** բոլորիս «մահվան բոթն» է գուժում եպիսկոպոսը, միայն **ի՞ր, թե՞** բոլորիս «ցմահ կամավոր ա-*

պաշխարության շրջան» է գծում անտարբերության ու անգործության համար:

Ծանոթություն 1: Պարույկ չի դրվում անուղղակի հարցում արտահայտող դերանունների վրա: Սովորաբար դա հանդիպում է բարդ ստորադասական նախադասություններում՝ երկրորդական նախադասության կազմի մեջ (տե՛ս նաև էջ 44-45): **Օր.**՝

Ինչ էր կատարվում ետնաբեմում՝ ոչ ոք չգիտեր:

Ոչինչ այնքան լավ չի բնութագրում մարդուն, քան այն, ինչպես է նա մեռնում:

Դժվար է ասել՝ ինչու են մարդիկ ուզում երևալ և ոչ թե լինել:

Պիտի ցավի, հետո անցնի, որ հասկանաս՝ ինչքան լավ է առանց ցավի: / Մի օր լացի՛ր ու կիմանաս՝ / Ուրախն ինչ է: / Ընկի՛ր մի օր ու կիմանաս՝ ինչ լավ բան է բարձրանալը:

Ծանոթություն 2: Անուղղակի հարցում արտահայտող նախադասության մեջ հարաբերական դերանվան բացակայության դեպքում **արդյոք** բառի (կամ նախադասության այլ անդամի) վրա սովորաբար հարցական նշան դրվում է (տե՛ս նաև էջ 57): **Օր.**՝

Հայտնի չէ, թե մեր պատվիրակությունը արդյո՞ք մասնակցելո՞ւ է խորհրդաժողովին:

Այն, ինչ հնարավոր է մեկ մարդու համար, արդյո՞ք հնարավո՞ր է նաև բոլորի համար:

2. Որոշ վերաբերականների (մի՞թե, չլինի՞, չլինի՞ թե, պատկերացնո՞ւմ եք, ինչպե՞ս չէ, չէ՞ որ, ո՞վ իմանա) վրա: **Օր.**՝

Ինչո՞ւ են այդքան աղմկում. չլինի՞ թե՞ ինչ-որ բան է պա-

տահել:

Զէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,- / Ու խնդացին լուսավոր մեր այքերին, / Բուր հեզնեցին մեր կարոտները հրկեզ....

Դու ոչինչ չես կարող անել քեզ շրջապատող բթության դեմ: Բայց իզուր մի՛ անհանգստացիր. չէ՞ որ ճահիճը նետած քարը օղակներ չի առաջացնում:

ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ (ԵՐԿԱՐԱՑՄԱՆ) ՆՇԱՆ

Դրվում է.

1. Բացականչական հնչերանգով և համեմատաբար տևականորեն արտասանվող բառի վրա՝ բացականչություն, հույզ, կիրք արտահայտելու համար: Օր.

*Երթա՛ լ, երթա՛ լ, երթա՛ լ անձայն, անհանդես,
Երթա՛ լ առվի՛ ն պես՝ մարգերու տակ անտես.
Կապույտին մեջ՝ հե՛զ, հողմավար ամպին պես...
Աննյութանա՛ լ, անրջանա՛ լ, վրսե՛ մ, վե՛ ս,
Երթա՛ լ անցա՛ յգ, անա՛ յգ, երթա՛ լ վերջապես
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պես...*

Որքա՛ ն շատ են ճշմարտության թշնամիները:

*Ու թե աստված էք, / Մնուր փակեցեք ձեր ականջներն էլ /
Նրանց տղոսկուն աղոթքի դիմաց, / Անզի՛ր-ինքնահո ս-հաշ-
վեկշովա՛ ծ այն աղոթքների, / Որով խաբում են ո՛չ իրենց, /
Այլ ձե՛զ:*

2. Չայնարկությունների վրա: Օր.

*Օ՛, ի՛նչ քաղցր է երթալ խառնվիլ էությանը / Այդ սրբագույն
վաստակին. / Տրբեխներեդ մինչև մազերդ համակվիլ /*

Մըդեղներուն մեջ դեղին:

Վա՛յ, ին՛ դճ պապեր:

*Ո՛հ, ի՛նչ անուշ և ինչպե՛ս գով / Առավոտուց փըչես, հո-
վի՛ կ'...*

**3. Բացականչումով արտասանվող կոչականի կամ հրա-
ման, հորդոր, խնդրանք, կոչ արտահայտող բառի վրա՝ շեշ-
տանշանի փոխարեն: Օր.**

*Իսկ որո՞նք են այդ օրենքները, պարոնա՛յք, որ մենք չգի-
տենք:*

*Խոնարհ կանգնելով նրա դիմաց՝ գոչեցին. «Ո՛վ ամենա-
կալո՞ր, եղի՛ր թագավոր, դարձի՛ր միապետ ու ղեկավարի՛ր»:*

Լռե՛լ, ոչինչ չեմ ուզում լսել:

**4. Բաղձանքի (երբեմն էլ՝ այլ) վերաբերականների վրա:
Օր.**

*Երանի՛թե սիրո ծովում / Լավն ու բարին այնքան լինեն, Որ
հեռացվեն, որ մոռացվեն / Թախիժ բերող պահերն ամեն...*

*Երնե՛կ ունենամ հազար ու մի կյանք, / Հազա՛րն էլ սրտանց
քեզ մատաղ անեմ:*

Ո՛չ, դա անհրազորձելի է:

**5. Շեշտողական «չառ» իմաստով գործածվող ցուցական
կամ հարցական դերանունների վրա. Օր.**

*Մայրիկս նայեց ինձ և հանկարծ սեղմեց ինձ կրծքին
այնպե՛ս պինդ, այնպե՛ս գորովալից:*

Ի՛նչ հաճելի է քեզ հետ զրուցելը...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ս.**, Հայերենի կետադրություն, Եր., 2002:
2. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. պարզ նախադասություն, Եր., 1987:
3. **Բարսեղյան Հ., Մեթոփիսյան Փ.**, Հայոց լեզու. դասագիրք միջին դպրոցի 9-րդ դասարանի համար, Եր., 2013:
4. **Գարեգինյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1984:
5. **Գարեգինյան Գ.**, Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, թիվ 2:
6. **Գյուլբուդաղյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984:
7. **Դավթյան Յու.**, Հայերենի կետադրության ինքնուսույց, Եր., 1995:
8. **Դարբինյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., 1990:
9. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, Եր., 2010:
10. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու, 12-րդ դասարանի համար, Եր., 2011:
11. **Զաքարյան Հ.**, Կետադրական բառարան (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն), Եր., 2013:
12. **Թորոսյան Ա.**, Հայերենի կետադրությունը (ուսումնասօժանդակ ձեռնարկ), Եր., 2004:

13. **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986:
14. **Կատվայան Վ.**, Ուղղագրական և կետադրական ուղեցույց, Եր., 1992:
15. **Ղարիբյան Ա., Պարիս Գ.**, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Եր., 1957:
16. **Միրումյան Մ.**, Հայոց լեզու, Եր., 2012:
17. **Մխիթարյան Հ.**, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Եր., 1972:
18. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
19. **Ջահուկյան Գ.**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր», 1990, № 7(75):
20. **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Եր., 2010:
21. **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայերենի կետադրությունը (երկրորդ վերամշակված հրատարակություն), Եր., 2012:
22. **Սարգսյան Լ.**, Վերաբերականների տրոհության մի քանի հարցեր արդի արևելահայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Եր., 2017, 1(22):
23. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
Գլուխ 1.	
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	4
Գլուխ 2.	
ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	26
Գլուխ 3.	
ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43
Գլուխ 4.	
ԱՐԴԻ ԱՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	98
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	175

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ս. Դավթյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 06.05.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 10,75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am